


ՀԲԸՄ

ԵՐԿԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2016-2017



ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ 90⁰ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ
ՓԵՏՐՎԱՐ 9, 2019, ՓԱՐԻՉ, ՖՐԱՆՍԱ

Թէև Հ.Բ.Ը. Միութիւնը բոլոր ջանքերը գործադրած է ամբողջական ճշգրտութեան հասցնելու այստեղ ներկայացուած բովանդակութիւնը, մենք կանխապէս ներողութիւն կը խնդրենք Տեղեկագրին մէջ յայտնուած որեւէ սխալի համար:

Բովանդակություն

Նախագահին Խօսքը	4
Կեղրոնական Վարչական Ժողով	6
Նիւթական Տեղեկագիր	7
Գործելով Որպէս Մէկ Ազգ	10
Յառաջատարը Որպէս Աշխարհաքաղաքացիներ	18
Մեր Պատմութիւնները Պաստառի Վրայ	22
Հ.Բ.Ը.Մ. 110-Ամեակ Տօնախմբելով Մեր Փառաւոր Պատմութիւնը	28
Հ.Բ.Ը.Մ. Հայաստան Յարաբերութիւններու Դարբնում Ազգակերտումի Նպատակով	32
Հ.Բ.Ը.Մ.-Շրջաններ Խթանելով Սշակոյթը Եւ Համայնքը Սփիւռքի Տարածքին	40
Հ.Բ.Ը.Մ.ի Երիտասարդ Արհեստավարժներ	60
Հ.Բ.Ը.Մ.-ի Դպրոցներ	66
Հ.Բ.Ը.Մ.-ի Ծրագիրներ	72
Մեծարեալներ	96



ՆԱԽԱԳԱՀԻՆ ԽՕՍՔԸ

Միբլի Միութենականներ եւ Բարեկամներ,

2016 եւ 2017 տարիներու ընթացքին, Միութեան յարաբերութիւնները եւ իր տարբեր շրջանակներուն հետ գործակցութեան բնոյթը, յատկանշուեցան որակական կարեւոր բարեփոխումներով: Շարք մը առարկայական եւ կառոյցային զարգացումներ, նոր խորք եւ դրսեւորում թելադրեցին որպէս ազդու գործօն անոր դերին եւ գործունէութիւններուն:

Ժամանակները կը թելադրէին նոր կողմորոշում եւ ռազմավարութիւն, մասնաւորէն դէպի ընդհանրական ուղղութիւններով, հայութիւնը բերելով համաշխարհային բեմ: Հայաստանի մէջ Միութեան երկար տարիներու գործունէութենէն բխող փորձառութիւնը, ինչպէս նաեւ անոր նորակառոյց կեդրոնէն ներս ծաւալած նորարարական թէ քաղաքացիական հասարակութեան ուղղուած աշխոյժ նախաձեռնութիւնները, շեշտեցին անոր դերի կարեւորութիւնը, Մփիւքի, Հայաստանի եւ Արցախի միջեւ յարաբերութիւններու զարգացման հովովոյթին մէջ:

Երկամեայ այս Տեղեկագրի էջերուն մէջ ակնյայտ կը դառնայ, թէ ինչպէս կարողացանք մեր մարդուժը, նիւթական կարելիութիւնները, հաղորդակցութեան ցանցերը եւ ռազմավարական համագործակցութիւնները ի գործ դնել, դիմակալելու համար մեզի հրամցուած փայլուն առիթները, ինչպէս նաեւ լուրջ մարտահրաւերները, գործելով որպէս համախումբ եւ միակամ ազգ: Այդ բոլորը դրսեւորուեցան միջազգային հարթակներու վրայ ստեղծուած երկխօսութիւններով, մեր ժողովուրդի պատմական փորձառութիւնը եւ իր դէմ գործադրուած ոճիրները, մարդակային իրաւանց պաշտպանութեան ուղղուած համընդհանուր ճիգերու ծիրին մէջ ներկայացնելու աշխատանքով: Մեր Շրջանակները եւ Մասնաճիւղերը իրենց մասնակցութիւնը բերին այս շարժումին, իւրաքանչիւրը իրեն յատուկ եւ տեղական համայնքներու կարիքներուն համապատասխան կազմակերպուած տարբեր ձեռնարկներով:

Այս տարիներուն, մեր սեւեռումը կեդրոնացաւ զլիսաւորաբար սուրիահայութեան եւ Արցախի ժողովուրդին վրայ, այդ համայնքներու դիմագրուած քաղաքական, ընկերային եւ տնտեսական մարտահրաւերներուն պատճառով: Մեր ուշադրութեան առարկայ դարձան նաեւ Հայաստանի մէջ կին գործարարներու կազմաւորուող նոր սերունդը, ինչպէս նաեւ քաղաքացիական հասարակութեան կազմակերպութիւններու գործունէութիւնները եւ անոնց աջակցութիւն ընձեռելու անհրաժեշտութիւնը: Այս բոլորին առընթեր անշուշտ աշխուժութեամբ շարունակեցին գործել աշխարհի տարածքին մեր Միութեան կրթական, մշակութային, վարժողական, երիտասարդական, մարզական, սկաուտական, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ իրագործող մսայուն ծրագիրները, որոնք կ'ըզգրկեն աւելի քան կէս միլիոն մասնակիցներ, կ'աշխուժացնեն համայնքները եւ առիթ կը ստեղծեն համախումբերու սփիւռքահայ պատանիները եւ երիտասարդները իրենց տեղական շրջանակներուն եւ հայրենիքի մէջ: Հ.Բ.Ը.Մ.Ի Կատարողական Արուեստներու Բաժանմունքի իրագործած յայտագիրները նոյնպէս ընդարձակեցին մեր հասողութեան սահմանները, մեր մշակոյթը, արուեստը եւ տաղանդները ներկայացնելով միջազգային հանրութեան:

Վերանայելով 2016-2017 տարիներուն իրագործուած գործունէութիւնը եւ ձեռքբերումները, կրնամ վստահութեամբ հաստատել, թէ այդ ծանր իրադարձութիւններէն Միութիւնը դուրս եկաւ զօրացած, նորարարութիւններ որդեգրելու իր կարողութեամբ եւ մարտահրաւերներ դիմագրաւելու կամքով: Այսօր, իր հասողութեան տարածքի լայնութեամբ եւ մշակած նոր համագործակցական յարաբերութիւններով, ան ատակ է լուսազոյնս սատարել համաշխարհային իրականութեան մէջ հայութեան դրոշմի ապահովումին:

2016-ի գարնան, երկար սպասում ակնկալության մը իրականացումն էր աշխարհառչակ աստղերու մասնակցութեամբ եւ Հովիվուտեան ծառայով բեմադրուած «Խոստումը» ժապաւենը, որ վիպական իր նիւթով, 1915-ի Հայկական Յեղասպանութիւնը ընդգրկող դէպքերուն կապակցութեամբ կ'իրագրէր համաշխարհային հանրային կարծիքը: Հ.Բ.Ը.Մ.ը նախաձեռնեց ֆիլմի ցուցադրութիւնը կարելի չափով լայն շրջանակներու հասցնելու աշխատանքին, որուն առընթեր նաեւ մշակեց յատուկ կրթական ծրագիր եւ համապատասխան միջոցներ, ֆիլմը իբր դաստիարակչական գործիք եւ պատմութեան դասաւանդման միջոց, հանրային դպրոցներու աշակերտութեան տրամադրելի դարձնելու համար: Հայկական փորձառութիւնը արժանապատիւ կէանքի համամարդկային ձգտումի ծիրին մէջ ներկայացնելու համար Միութեան շրջանակները օգտագործեցին Ֆիլմարուեստի պատմողական ուժը եւ ազդեցութիւնը, շարք մը յարակից ֆիլմերու եւ վաւերագրական կարճ ժապաւեններու ցուցադրութիւններ եւ քննարկումներ կազմակերպելով տեղական լայն շրջանակներու մէջ:

2016-ին համընկնող Միութեան 89-րդ Ընդհանուր Ժողովը եւ հիմնադրութեան 110-ամեակը Նիւ Եորքի մէջ, 24 երկիրներէ համախմբուած 500 պատգամաւորներու ներկայութեան, առիթ հանդիսացան «Հոգիս» շքեղ համոյթով, հանրութեան ներկայացնելու պատանի եւ երիտասարդ փայլուն տաղանդներու նոր հոյլ մը, որուն մաս կը կազմէին նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի Հայորդեայց Տուններու պատանիները:

Նոյն տարուան ընթացքին Հ.Բ.Ը.Մ.ը իրականացուց կրթական այլընտրանքային միջոցառում մը, հրապարակելով «Առցանց Զրոյցներ» շարքը: Ծրագիրը, այժմեական եւ պատմական նիւթերու շուրջ մասնագէտներու հետ կատարուած կարճ հարցազրոյցներ, համացանցի միջոցաւ մատչելի կը դարձնէ հանրութեան: Հայկական Հեռավար Գովէճը նոյնպէս, ընդարձակեց իր պատշաճեցումը ծրագրի դասարանային տարբերակը, հարուստ նիւթեր տրամադրելով հեռավար դրութեամբ խմբային աշխատանքներու մասնակցողներու համար:

2015-ին, երբ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը բանաձեւ մը վաւերացուց, Դեկտեմբեր 9-ը նշանակելով Յեղասպանութեան Ոճիրի Կանխարգիւման եւ Յեղասպանութեան Ձոհերու Յիշատակի եւ Արժանապատուութեան Օր, Հ.Բ.Ը.Մ.ը անմիջապէս իր կարելիութիւնները ի գործ դրաւ եւ տարբեր երկիրներու մէջ մարկային իրաւանց, ցեղասպանութեան եւ սպաստանեալներու օգնութեան խնդիրներու կապակցութեամբ, գիտական միջազգային համագումարներ կազմակերպեց, հանրութիւնը իրագրեցելու նպատակով: Միութեան Մասնաճիւղերը իրենց տեղական նախաձեռնութիւններով եւ զօգնութեամբ, նոր որակ եւ իւրայատուկ ուժակնութիւն սպահովեցին համամարդկային խնդիրներու նկատմամբ գիտակցութիւն մշակելու ընդհանրական ճիգին:

Անցնող երկու տարիներուն, Հ.Բ.Ը.Մ.ի աշխարհատարած Շրջանակներուն եւ համակիրներուն կողմէ դրսեւորուած ազգային գիտակցութեան եւ միասնականութեան ոգիի ուժակնութիւնը դրսեւորուեցաւ մասնաւորաբար ինքնաբոյս, հետեւողական եւ նորարար միջոցներով

իրականացած հանգանակութիւններով, որոնք ուղղուած էին Սուրիոյ շարունակուող պատերազմին պատճառով տագնապի մատնուած եւ կամ տեղահանուած իրենց ազգակիցներուն օգնութեան, ինչպէս նաեւ 2016-ի Ապրիլին Արցախի դէմ Ազրպէյճանի շղթայազերծած քառօրեայ պատերազմին հետեւանքով տուժած բանակայիններու եւ ժողովուրդի աջակցութեան ճիգերուն: Միութեան անունով եւ մեր խոր երախտագիտութիւնը եւ գնահատանքը կը յայտնեն բոլոր անոնց, որոնք պատնէշի վրայ գործեցին իրագործելու համար այս աշխատանքները:

Կը փափաքիմ նաեւ գնահատել Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի կողովի եւ նուիրեալ անդամները, որոնց հեռատեսութիւնը եւ տեսլական զգացողութիւնը, 2016-2017 տարիներուն ուղղորդեցին մեր յանդուգն քայլերը, որոնք կազմակերպչական նախաձեռնութիւններու եւ նոր աշխարհահայացքի որդեգրումով, լայն եւ հաստատուն հարթակ ապահովեցին, մեր Ընդհանուր Միութեան առաքելութեան իրագործումին համար նոր ուղի հարթելով, արագ եւ բարդ զարգացումներով յատկանշուող համաշխարհային իրականութեան մարտահրաւերները եւ կարելիութիւնները պատուով եւ արդիւնաւորութեամբ դիմակալելու համար: Նաեւ, աշխարհի տարածքին մեր Միութեան յատուկ յանձնախումբերուն, Շրջանակներուն, Մասնաճիւղերուն, Երիտասարդ Արհեստավարժներու խմբակցութեանց, նուիրումով եւ հաւատաւոր ճիգերով իրենց հմտութիւնը օրն ի բուն ի գործ դնող անձնակազմերուն, որոնք անհատապէս թէ համընդհանուր ճիգերով, Հ.Բ.Ը.Մ.ի առաքելութիւնը ամենօրեայ աշխույժ գործունէութիւններու վերածեցին, ոչ միայն ազգային եւ միութենական, այլեւ աշխարհաքաղաքացիական առողջ ոգիի լաւագոյն դրսեւորումներով:

Վերանայելով 2016-2017 տարիներուն իրագործուած գործունէութիւնը եւ ձեռքբերումները, կրնամ վստահութեամբ հաստատել, թէ այդ ծանր իրադարձութիւններէն Միութիւնը դուրս եկաւ զօրացած, նորարարութիւններ որդեգրելու իր կարողութեամբ եւ մարտահրաւերներ դիմագրաւելու կամքով: Այսօր, իր հատողութեան տարածքի լայնութեամբ եւ մշակած նոր համագործակցական յարաբերութիւններով, ան ատակ է լաւագոյն սատարել համաշխարհային իրականութեան մէջ հայութեան դրոշմի ապահովումին:

Պերճ Մեղրակեան
Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահ

Հ.Բ.Ը.Մ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ 2016-2017



Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի Անդամները, 89-րդ Ընդհանուր Ժողովին, որ կայացավ Նիւ Երքի Հարվըրտ Քլապին մէջ:

ՆԱԽԱԳԱՀ

Պերճ Սեդրակեան

ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՀ

Սէմ Սիմոնեան, Սինան Սինանեան

ԳԱՆՁԱՊԱՀ

Նազարէթ Ֆըստըքճեան

ՓՈԽ ԳԱՆՁԱՊԱՀ

Երուանդ Տեմիրճեան

ԱՏԵՆԱԴՊԻՐ

Սարգիս Ճէպէճեան

ՓՈԽ-ԱՏԵՆԱԴՊԻՐ

Արտա Յարութիւնեան

ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՍ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ՝ Արմեն Սարգսյան,

Վազգէն Եագուպեան

ԳԱՆԱՏԱ՝ Լենա Սարգիսեան

ՖՐԱՆՍԱ՝ Արիս Ադամեան

ՌՈՒՄԻԱ՝ Ռուբէն Վարդանեան

ԶՈՒԻՑԵՐԻԱ՝ Վահէ Կապրաշ

ՄԻՍՏԵԱԼ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ՝ Արնօ Ադամեան,

Ժոզէֆ Ուղուրլեան

ԱՄՆ՝ Նուպար Աֆէեան, Էրիք Իսրաէլեան,

Անի Մանուկեան, Լոռի Մունչլերեան,

Լեւոն Նազարեան, Երուանդ Զօրեան

ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

Սարգիս Տեմիրճեան, Ռիչարտ Մանուկեան,

Նազար Նազարեան, Լուիզ Մանուկեան-Սիմոն,

Գառնիկ Եագուպեան

Ի ՅԻՇԱՏԱԿ

Պօղոս Նուպար, Հիմադիր; Ալէք Մանուկեան,

Յկեանս Պատուակալ նախագահ

ՆԻՒԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ 2017 – 2016

Ամերիկեան Տոլարով

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱԽՄԱՐՈՒԱԾ ԱՄՓՈՓ ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆ

ԳՈՅՔ	Դեկտեմբեր 31	
	2017 (*)	2016
Ընթացիկ Գոյք		
Դրամատան մէջ պատրաստ	\$8,384,617	\$12,255,760
Արժեթուղթեր (**)	20,747,161	18,393,408
Գանձելի աւանդներ/հաշիւներ	15,540,604	10,344,284
Գանձելի տոկոս	301,475	555,121
Գումար Ընթացիկ Գոյքի	44,973,857	41,548,573
Արժեթուղթեր-երկարժամեայ (**)	226,340,030	223,001,026
Անշարժ Կալուածներ (***)	97,702,834	96,777,387
Սարքեր, կարասի եւ այլ գոյքեր՝ զուտ	2,070,667	2,086,692
Գումար Գոյքի	\$371,087,388	\$363,413,678
ՊԱՐՏԱԿԱՆՔ ԵՒ ԶՈՒՏ ԳՈՅՔ		
Պարտականք		
Վճարելի հաշիւներ	\$5,344,737	\$5,354,085
վճարելի պարտաթուղթեր	55,452	161,350
Գումար Պարտականքի	5,400,189	5,515,435
Զուտ Գոյք		
Ոչ պայմանաւորեալ	50,323,765	53,156,392
Առժամապէս պայմանաւորեալ	54,264,482	46,981,840
Մշտապէս Պայմանաւորեալ (Հիմնադրաձեռք)	261,098,952	257,760,011
Գումար Զուտ Գոյքի	365,687,199	357,898,243
Գումար Պարտականքի եւ Զուտ Գոյքի	\$371,087,388	\$363,413,678

(*) Միութեան 2017-ի եւ 2016-ի տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւնները կը պարփակեն Միացեալ Նահանգներու (Մ.Ն.) Տէլաուերի ընկերակցութեան, հաշուեքննիչներու կողմէ վաւերացուած տուեալները, առաւել Մ.Ն.է դուրս գործող շրջանակներու եւ մասնաճիւղերու կողմէ ներկայացուած նիւթական տեղեկագրերը: Նկատի ունենալով որ գրքոյկի պատրաստութեան ժամանակ Մ.Ն.է դուրս գտնուող մարմիններէ 2017-ի կարեւոր թիւով Նիւթական տեղեկագրեր մեր տրամադրութեան տակ չէին գտնուէր, 2017-ի ընդհանուր համարատուութիւնը 2016-ի իրականացած թիւերուն վրայ հիմնուած գումարներ կը պարփակէ:

(**) Կը ներկայացնեն ՀԲԸՄիութեան արժեթուղթերու տոմարական արձանագրութիւնը **12/31/2017**-ին եւ **12/31/2016**-ին, որոնց սակարանային արժեքը յաջորդաբար Ամերիկեան Տոլարով **\$266,806,777** եւ **\$256,526,494** են:

(***) Կեդրոնական վարչութեան գնահատումով, կալուածներու ներկայ շուկայական արժեքը նկատելիօրէն աւելի բարձր է քան անոնց տոմարական արժեքը՝ որ արձանագրուած է նիւթական տեղեկագրին մէջ, համաձայն ընդհանրապէս ընդունուած ամերիկեան հաշուապահական սկզբունքներուն (U.S.-GAAP):

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԲԸՄ Նիւթական Տեղեկագիր 10-Տարուայ Բաղդատական Գումարներու

	2017	% ⁽¹⁾	2016	% ⁽²⁾	2006
Ընդհ. Գոյք	\$371,087,388	2%	\$363,413,678	27%	\$286,162,612
Ընդհ. Մուտք	55,404,865	10%	50,279,740	5%	47,759,992
Ընդհ. Ելք	47,615,909	10%	43,327,096	29%	33,510,010

⁽¹⁾Միամեայ % Յաւելում (Նուազում)

⁽²⁾10-ամեայ % Յաւելում (Նուազում)

ՆԻԻԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ 2017 – 2016

Ամերիկեան Տոլարով

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒԱԾ ԱՄՓՈՓ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ - ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2017(*)

	Ոչ Պայմանաորեալ	Առժամապէս Պայմանաորեալ	Մշտապէս Պայմանաորեալ	Ընդհանուր Գումար
ՄՈՒՏՔ				
Օժանդակութիւն՝				
Նուիրատուութիւններ	\$ 2,684,706	\$ 15,608,799	\$ 2,945,294	\$ 21,238,799
Անդամավճարներ	85,810	-	-	85,810
Յատուկ Ձեռնարկներ եւ այլ մուտքեր	7,118,878	1,340	-	7,120,218
	9,889,394	15,610,139	2,945,294	28,444,827
Հասոյթ՝				
Շահաբաժին եւ տոկոս	10,199,688	7,818	-	10,207,506
Կալուածային	1,871,201	2,025	-	1,873,226
Դպրոցական	14,879,306	-	-	14,879,306
	26,950,195	9,843	-	26,960,038
	36,839,589	15,619,982	2,945,294	55,404,865
Յայտագիրներու Մատակարարման	11,228,544	(11,228,544)	-	-
ԳՈՒՄԱՐ ՄՈՒՏՔԻ	48,068,133	4,391,438	2,945,294	55,404,865
ԵԼՔ				
Յայտագիրներ եւ Վարչական Ծախք Յայտագիրներ՝				
Կրթական	21,984,610	-	-	21,984,610
Մշակութային	17,677,337	-	-	17,677,337
Կրօնական	1,843,021	-	-	1,843,021
Մարդասիրական	1,138,557	-	-	1,138,557
	42,643,525	-	-	42,643,525
Վարչական Ծախք	4,164,578	-	-	4,164,578
Դրամահաւաքի Ծախք	552,861	-	-	552,861
Դրամասակային Տարբերութիւն/Վերադասաւորում	254,945	-	-	254,945
	4,972,384	-	-	4,972,384
ԳՈՒՄԱՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՄՔԻ	47,615,909	-	-	47,615,909
Յաւելում (Նուազում) Ելեւմուտքի	452,224	4,391,438	2,945,294	7,788,956
Միջ-յատկազումարային փոխանցում	(3,284,851)	2,891,204	393,647	-
Յաւելում (Նուազում) Զուտ Գոյքի	(2,832,627)	7,282,642	3,338,941	7,788,956
ԶՈՒՏ ԳՈՅՔ՝ տարեսկիզբին	53,156,392	46,981,840	257,760,011	357,898,243
ԶՈՒՏ ԳՈՅՔ՝ տարեվերջին	\$50,323,765	\$54,264,482	\$261,098,952	\$365,687,199

ՆԻԻԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ 2017 – 2016

Ամերիկեան Տոլարով

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆՅ ՀԱՄԱԽՄԲՈՒԱԾ ԱՄՓՈՓ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ - ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016

	Ոչ Պայմանաորեալ	Առժամապէս Պայմանաորեալ	Մշտապէս Պայմանաորեալ	Ընդհանուր Գումար
ՄՈՒՏՔ				
Օժանդակութիւն՝				
Նուիրատուութիւններ	\$ 7,764,341	\$ 13,441,477	\$ 4,064,913	\$ 25,270,731
Անդամավճարներ	103,373	-	-	103,373
Յատուկ Ձեռնարկներ եւ այլ մուտքեր	3,931,316	16,105	-	3,947,421
	11,799,030	13,457,582	4,064,913	29,321,525
Հասոյթ՝				
Շահաբաժին եւ տոկոս	6,681,810	9,367	-	6,691,177
Կալուածային	1,330,734	2,077	-	1,332,811
Դպրոցական	12,934,227	-	-	12,934,227
	20,946,771	11,444	-	20,958,215
	32,745,801	13,469,026	4,064,913	50,279,740
Յայտագիրներու Մատակարարման	12,689,003	(12,689,003)	-	-
ԳՈՒՄԱՐ ՄՈՒՏՔԻ	45,434,804	780,023	4,064,913	50,279,740
ԵԼՔ				
Յայտագիրներ եւ Վարչական Ծախք Յայտագիրներ՝				
Կրթական	20,874,647	-	-	20,874,647
Մշակութային	15,009,798	-	-	15,009,798
Կրօնական	2,073,712	-	-	2,073,712
Մարդասիրական	916,087	-	-	916,087
	38,874,244	-	-	38,874,244
Վարչական Ծախք	3,695,281	-	-	3,695,281
Դրամահաւաքի Ծախք	491,555	-	-	491,555
Դրամասակային Տարբերութիւն/Վերադասաւորում	266,016	-	-	266,016
	4,452,852	-	-	4,452,852
ԳՈՒՄԱՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՒՔԻ	43,327,096	-	-	43,327,096
Յաւելում (Նուազում) Ելեմուտքի	2,107,708	780,023	4,064,913	6,952,644
Միջ-յատկազումարային փոխանցում	(6,212,171)	5,326,904	885,267	-
Յաւելում (Նուազում) Զուտ Գոյքի	(4,104,463)	6,106,927	4,950,180	6,952,644
ԶՈՒՏ ԳՈՅՔ՝ տարեսկիզբին	57,260,855	40,874,913	252,809,831	350,945,599
ԶՈՒՏ ԳՈՅՔ՝ տարեվերջին	\$53,156,392	\$46,981,840	\$257,760,011	\$357,898,243



ԳՈՐԾԵԼՈՎ ՈՐՊԷՍ ՄԷԿ ԱԶԳ

Երբ աղետը կը հարուածէ աշխարհի որեւէ մէկ անկիւնը, սահմաններ եւ տարակարծութիւններ կը վերանան, հասարակաց արժէքներ եւ ժառանգութիւն կը միաւորեն մեզ: Հ.Բ.Ը.Մ.ը աւելի քան մէկ դարու իր պատմութեան ընթացքին, միշտ միաւորած եւ զօրակոչած է հայութիւնը, միասնաբար դիմագրաւելու համար թէ մարտահրաւերներ եւ թէ յաղթանակներ: Միացեալ ուժերով գործելու անհրաժեշտութիւնը 2016-2017-ին շեշտուեցաւ երկու ճակատներու վրայ:

Արցախի Քառօրեայ Պատերազմը

2016-ին, Ազրպէյճանի կողմէ անակնկալ կերպով շթայագերծուած յարձակումը Արցախի Հանրապետութեան դէմ, կրկին անգամ հայութիւնը զգաստութեան մղեց, շեշտելով ռազմականօրէն միշտ պատրաստ եւ հակազդելու ատակ ըլլալու անհրաժեշտութիւնը: Հ.Բ.Ը.Մ.ը անմիջապէս նախաձեռնեց նիւթական միջոցներ ապահովելու աշխատանքին եւ բժշկական եւ շտապ օգնութեան միջոցներ հասցուց ճակատի վրայ գտնուող զինուորներուն եւ ժողովուրդին:

Արցախի Զօրակցութեան Արշաւ

Աշխարհի տարածքին, նուիրահաւաքի արագ նախաձեռնութիւններով, Հ.Բ.Ը.Մ.ը գոյացուց աւելի քան 325,000 ամերիկեան տոլարի շտապ օգնութեան գումար մը, որուն իր յատուկ մասնակցութիւնը բերաւ Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը:

Պատերազմական գործողութիւններու դադրեցումէն ամիս մը ետք, Հ.Բ.Ը.Մ.ի խորութեան ղեկավար անդամներ այցելեցին վիրաւոր զինուորներ Կեդրոնական Զինուորական Բուժման Հիւանդանոցին եւ Հայկական Կարմիր Խաչի վերականգնման Երեսնի կեդրոնին մէջ: Անոնք ացելեցին նաեւ վիրաւոր թէ գոհուած զինուորներու ընտանիքներ Շիրակի եւ Արարատի շրջաններուն, ինչպէս նաեւ Ստեփանակերտի զինուորական հիւանդանոցին մէջ, նաեւ Մարտակերտ, Մարտունի եւ Հատրութ: Կարիքաւոր ընտանիքներ ստացան իւրաքանչիւրը 1,000 ամերիկեան տոլարի օգնութիւն, իսկ աւելի քան 70 տեղահանուած ընտանիքներ, որոնց մաս կը կազմէին 30 մանուկներ, Հ.Բ.Ը.Մ.ի կարգադրութեամբ պատասպարուեցան Ստեփանակերտի «Նայիրի» Պանդոկին մէջ: Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան հետ կնքուած համաձայնագրով, Հ.Բ.Ը.Մ.ը ռազմական բժշկական անհրաժեշտ սարքեր ապահովեց բանակին:



Իրազեկման եւ Տեղեկատուութեան Հետեւողական Աշխատանք

2017-ի Յունիսին, Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.ը կոչով հանդէս եկաւ «Եւրոպայի Կ'ուզենք Արցախի Մէջ» լոգունգով, պահանջելով որ Եւրոպայի իր քաղաքականութիւնը փոխէ Արցախի նկատմամբ: Տեղեկատուական յատուկ նիւթերով եւ տեսաերիզի օգնութեամբ, իրազեկման արշաւ առաջ տարուեցաւ: Յատուկ համագումարներ կազմակերպուեցան Ամսթերտամի, Պարսելոնայի եւ Շիքսկոյի մէջ, շեշտելով Արցախի նկատմամբ Եւրոպայի կողմէ դրական կեցուածքի որդեգրումին անհրաժեշտութիւնը:



Սուրիական Տազնապը

Սուրիոյ մէջ շարունակուող պատերազմական վայրագ գործողութիւնները ծանրագոյն անդրադարձ ունեցան սուրիահայութեան համար: Ոմանք ապաստան գտան Սուրիայէն դուրս այլ երկիրներու մէջ, սակայն շատեր շարունակեցին ժնալ երկրին մէջ ցուցաբերելով տոկոսն դիմադրականութիւն եւ համայնքային բարձր եւ օրինակելի ոգի: Լազար Նաճարեան Վարժարանէն ներս շարունակուեցաւ կրթական աշխատանքը շրջանաւարտներու պատկառելի հունձքով: Քամիշլիի մէջ 90 մանուկներ յաճախեցին ամառնային դպրոց:

Մինչ շատ մը երկիրներ կոնակ կը դարձնէին սուրիացի բազմահազար ապաստանեալներու, Հ.Բ.Ը.Մ.ի շրջանակները աշխարհի տարածքին, իրենց կարելիութիւնները ի գործ դրին օգնելու համար իրենց ազգակիցներուն Սուրիոյ մէջ, ինչպէս նաեւ Հայաստան, Լիբանան եւ Գանատա ապաստանած հազարաւոր սուրիահայերու:

Հ.Բ.Ը.Մ.ի Սուրիահայերու Օգնութեան Հիմնադրամ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը աշխարհի տարածքին հետեւողականօրէն առաջ տարաւ սուրիահայերու օգնութեան համար հանգանակութեան աշխատանքները, միաժամանակ կազմակերպելով մարդասիրական եւ վերաբնակեցման նախաձեռնութիւններ այն երկիրներուն մէջ ուր ապաստան գտած էին անոնք: Սուրիոյ մէջ, հակառակ տիրող վտանգաւոր կացութեան, միութեանական երիտասարդներ, նուիրումով եւ անձնագոհութեամբ սննդեղէնի բաշխում եւ անմիջական օգնութիւն ապահովեցին տեղւոյն բնակչութեան:

Տարբեր Երկիրներու Մէջ Սուրիահայերու Օգնութեան Աշխատանքներ




Սուրիա

2016-2017-ին, Հ.Բ.Ը.Մ.ը Սուրիոյ իր կեդրոնին միջոցաւ շարունակեց օգնութիւն հասցնել զինեալ հակամարտութիւններու արհաւիրքին մատնուած համայնքին, սննդեղէնի բաշխումի, բժշկական եւ վիրաբուժական օգնութեան, նիւթական օժանդակութեան, կրթաթոշակներու եւ ընկերային ծառայութիւններու միջոցաւ: Յատուկ սարգաւորումով օժտուած ինքնաշարժով նաեւ շտապ օգնութեան ծառայութիւն կարելի եղաւ ապահովել:

Հալէպէն Մանուէլ Տանիրեան, Հ.Բ.Ը.Մ.ի նուիրատուներու շնորհիւ, ստացած է արուեստական սրունք



 **Հայաստան եւ Արցախ**

2016-2017-ի ընթացքին, Երեւանի Հ.Բ.Ը.Մ.ի Վահէ Կարապետեան Կեդրոնին մէջ, հայրենիք ապաստանած սուրիահայ ընտանիքներու համար յատուկ ընկերային ծառայութիւններ ապահովուեցան, որոնց շարքին բժշկական անհրաժեշտ ծառայութիւններ, սուրիահայ բժիշկներու սիրայօժար աջակցութեամբ: 2017-ին բացուած Հ.Բ.Ը.Մ.ի Գլոտիա Նազարեան Բուժարանը, սուրիահայ բժիշկներու մասնակցութեամբ, խնամք ապահովեց 1000-է աւելի սուրիահայերու: Արցախ հաստատուած սուրիահայեր, որոնք հողամշակութեամբ կը զբաղէին, դրամական փոխատուութիւններ ստացան, ինչպէս նաեւ օժտուեցան անհրաժեշտ հողագործական գործիքներով, Չերչեան Ընտանեկան Հիմնադրամին աջակցութեամբ: Իբր արդիւնք, մշակուեցաւ 1,135 հեկտար հողատարածք: Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութիւնը, համագործակցութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի Հայկական Հեռավար Գոլէճի հիմնադիր տնօրէն Երուանդ Ջօրեանի, սուրիահայերու համար Արեւելահայերէնի յատուկ լեզուագիտական դասընթացք ապահովեց:

 **Լիբանան**

Լիբանանի մէջ սուրիահայերու կեցութիւնը ապահովելու համար, Հ.Բ.Ը.Մ.ի դպրոցներէն ներս ձրի կամ մասնակի կրթաթոշակով կրթութիւն տրամադրուեցաւ սուրիահայ պատանիներու, անոնց համար յատուկ արտադասարանային դասընթացքներ կազմակերպուեցան, որպէսզի անոնք կարենան քայլ պահել տեղական կրթական ծրագրին հետ: Անոնք մասնակցեցան նաեւ տեղական միութեանական տարբեր գործունէութիւններու: Հ.Բ.Ը.Մ.ի Լիբանանի մէջ գործող երկու դարմանատունները նոյնպէս իրենց ծառայութիւններով օգտակար հանդիսացան սուրիահայերու առողջապահական կարիքներուն:

 **Գանատա**

2016-2017-ին, Հ.Բ.Ը.Մ.-ը շարունակեց օգտակար ըլլալ սուրիահայ ընտանիքներու օգնելով անոնց կեցութեան, օրինական կարգադրութիւններու եւ աշխատանքի ապահովումին վերաբերալ կարիքներուն: Մոնթրէալի Ալէք Մանուկեան Վարժարանէն ներս, մեծ թիւով մանուկներ ուսում ստացան, անոնց համար կազմակերպուած յատուկ դասընթացքներով, ինչպէս նաեւ շարաթօրեայ ակումբային գործունէութիւններով եւ սկաւտական շարժումի շարքերէն ներս մասնակցութեամբ:

2016-ի ամառուան ընթացքին, Մոնթրէալի Հ.Բ.Ը.Մ.ը սուրիահայերու համար Ֆրանսերէն լեզուի յատուկ դասընթացք կազմակերպեց, ինչ ուսուցիչներով, որոնք սիրայօժար բերին իրենց մասնակցութիւնը: Մոնթրէալի Հայ Ոսկերչական Ընկերակցութեան աջակցութեամբ, Մոնթրէալի Գոհարագիտութեան Դպրոցին մէջ սուրիահայ երիտասարդներու համար յատուկ կրթաթոշակներ տրամադրուեցան: Նոյնպէս, Մոնթրէալի եւ Թօրօնթոյի Երիտասարդ Արհեստավարժները գործի կարելիութիւններու վերաբերեալ յատուկ հանդիպումներ եւ ցուցմունքներ կազմակերպեցին:

Գաշիտա Շաուֆ, Հ.Բ.Ը.Մ.ի Ալէք Մանուկեան Վարժարանի Նախակրթարանի ուսուցչուհի:



Սուրիահայերու Օգնութեան Արշարը Ընդհանուր Ակնարկով Ինչպէս Հ.Բ.Ը.Մ.ի Նուիրատուներ Օգնեցին Մարդասիրական Աշխատանքներուն

2016-2017, **1,700** նուիրատուներ աշխարհի տարածքին **2 Միլիոն ամերիկեան տոլար**
նուիրաբերեցին սուրիահայերու օգնութեան


2012-էն սկսեալ, **5 Միլիոն ամերիկեան տոլար** տրամադրուեցաւ օգնութեան ծրագիրներու



21 Ընտանիքներ որոնք վերաբնակուած էին Արցախ, ստացան յատուկ օժանդակութիւն



100-է աւելի կրթաթոշակներ տրամադրուեցան Հ.Բ.Ը.Մ.ի վարժարաններուն մէջ ուսանող սուրիահայերու, Մոնթրէալի եւ Թորոնթոյի մէջ



250 Ընտանիքներ Հայաստանի մէջ ջեռուցման համար նիւթական օժանդակութիւն ստացան



609 Ապաստանեալներու սննդեղէնի համար օգնութիւն տրամադրուեցաւ



3,282 Ապաստանեալներ օգտուեցան Հ.Բ.Ը.Մ.ի Երեւանի Գլոտիա Նազարեան Բուժարանի ընձեռած ծառայութիւններէն



2,162 Կրթաթոշակներ տրամադրուեցան Հայաստանի համալսարաններու մէջ ուսանող սուրիահայերու



15,000 Սուրիահայ ապաստանեալներ Հայաստանի մէջ ձմեռնային զգեստներ ստացան



15,000-է աւելի քաղաքացիներ բժշկական վիրաբուժական օգնութիւն ստացան Սուրիոյ մէջ



166,000-է աւելի սննդեղէնի ծրարներ բաշխուեցան Սուրիոյ մէջ



505,000 ամերիկեան տոլար արժողութեամբ կրթաթոշակներ տրամադրուեցան Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.ի վարժարաններուն մէջ ուսանող սուրիահայ պատանիներու



«Կրնամ Հոգածու Ըլլալ»

«Կրնամ Հոգածու Ըլլալ» լոգունգը, Հ.Բ.Ը.Մ.ի կողմէ սուրիահայերու աջակցութեան ուղղուած նախաձեռնութիւններու մղիչ գաղափարաբանութիւնն էր, շեշտելով որ ամէն փոքր արարք կրնար իր ազդու դերը ունենալ: Ընկերային ցանցերու վրայ, այդ լոգունգին պաստատով նկարուած անհատներ քաջալերեցին իրենց հետեւորդները, իրենց օրինակով մասնակցելու օգուտեան արշաւին:

Հալէպի բնակիչ մը օգնութեան ծրարով: Նմանօրինակ ծրարներ Հ.Բ.Ը.Մ.ի միջոցաւ բաշխուեցան քաղաքի տարածքին



Նիւ Եորք, ԱՄՆ



Երեւան, Հայաստան



Սան Տիէյօ, ԱՄՆ



Պէրուք, Լիբանան

Հ.Բ.Ը.Մ.ի Տեղական Շրջանակներու Նախաձեռնութիւններ

2016-2017-ի ընթացքին, Հ.Բ.Ը.Մ.ի Երիտասարդ Արհեստավարժներու խմբակցութիւնները, «Կրնամ Հոգածու Ըլլալ» լոգունգով նախաձեռնութիւններ կազմակերպեցին, Սուրիոյ պատերազմէն տուժած իրենց ազգակիցներուն օգնելու համար:

1. Թօրօնթոյի Երիտասարդ Արհեստավարժները գործի կարելիութիւններու վերաբերեալ ծանօթացման եւ գիտելիքներու փոխանցման հանդիպումներ կազմակերպեցին աւելի քան 200 սուրիահայերու համար: Գանատական պետութիւնը, օժանդակեց 20,000 սուրիացիներու վերաբնակեցման, որոնց շարքին բազմաթիւ սուրիահայերու:

2. Նիւ Եորքի մէջ արուեստագէտ վարսաւիր Վարդան Կիւտելէքեանի կազմակերպած երեկոյթին կատարուեցաւ 20,000 տոլարի նուիրահաւաք:

3. Լոնտոնի մէջ կազմակերպուած հանդիսատար երեկոյթին գոյացաւ 325,000 տոլար: *Ձախին* օրուան պատգամաբեր Լորտ Արա Տարզի եւ իր տիկինը Լէյտի Ուէնտի Տարզի: *Աջին* Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Ժոզէֆ Ուդուրլեան:

4. Նիւ Եորքի շրջանի Երիտասարդ Արհեստավարժները 2017-ի իրենց երեկոյթ-աճուրդի ձեռնարկին 50,000 տոլար հաւաքեցին:

5. Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Երուանդ Զօրեանի եւ Երիտասարդ Արհեստավարժներու շարժումի համակարգող Հեղինէ Մուսայիլեանի գլխավորութեամբ, Հիւսիսային Քալիֆորնիոյ խմբակցութիւնը 20,000 տոլար հանգանակեց:

6. Փաստօրէնայի Հ.Բ.Ը.Մ.ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի աշակերտները համայնքին հրամցուած գեղարուեստական յատուկ յայտագրով մը 8,000 տոլար հանգանակեցին:

7. Հ.Բ.Ը.Մ. Սոֆիայի Բարեսիրական Պարահանդէսին, որ կայացաւ Շէրաքըն Սոֆիա Պալքան Պանդոկին մէջ, ներկայ էին Պուլկարիոյ փոխ-արտաքին գործոց նախարար Հրիսթօ Անճէլիչին, Պուլկարիոյ Հ.Հ. Դեսպան Արսէն Շոյեան, Պուլկարիոյ Սուրիոյ դեսպան Նատրա Սայաֆ եւ միութենականներու հոծ բազմութիւն մը:

8. Նոյն նպատակով, Լիբանանի Երիտասարդ Արհեստավարժները հանգանակութիւն կազմակերպեցին, մարժամարզական յատուկ արշաւով մը:







ՅԱՌԱՋԱՏԱՐԸ ՈՐՊԷՍ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

2015-ին, Հայկական Ցեղասպանության 100-ամեակը, առիթ հանդիսացավ որպեսզի հայությունը դուրս գայ իր պատեանեն և պատմական իրականությունները հասանելի դարձնե համայն աշխարհին, գանգուածային լրատուության գործիքներով: Մեր պատմությունը նոր և արդիական միջոցներով կրցանք հասցնել ունկնդիրներու համաշխարհային լայն շրջանակին, զայն լսելի դարձնելով բազմաթիւ հանրայայտ և ազդեցիկ քաղաքական, կրօնական և մշակութային դեմքերու: Հ.Բ.Ը.Մ.ը կարելու էր ստանձնեց այս հետաքրքրությունը արծարծելու ուղղությամբ, կազմակերպելով շարք մը հրապարակային քննարկումներ առնչուող նիւթերու շուրջ, մարդկային ընդհանրական պարունակի մը մէջ ներկայացնելով զանոնք: Միջազգային տարողությամբ այս ընդգրկուն քննարկումներուն մասնակցող հայ թէ օտար մասնագետներ, ցեղասպանության և մարդկային իրաւանց առնչուող խնդիրներու լուսաբանության և ծանօթացումին ուղղությամբ, այլ երկիրներու և ժողովուրդներու փորձառություններէն բխող նոր հայեցակէտ և աւելի խոր ըմբռնում ապահովեցին հանրային կարծիքի ձեւաւորումին համար:

Հ.Բ.Ը.Մ.ի մշակած լայն յարաբերությունները և գործակցական նախաձեռնությունները, հայ աշխարհի սահմաններէն անդին, համաշխարհային նոր ըմբռնում և ազդեցութեան ոլորտներ ապահովեցին հայութեան համար: Հայաստանի մէջ, Միութիւնը շարունակեց իր սերտ գործակցությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հետ, ինչպէս նաև Եւրոպական Միութեան Պատուիրակութեան, Հ.Հ. Գիտութեան և Կրթութեան և Պաշտպանութեան նախարարություններուն և անոնց յարակից տեղական քաղաքացիական հասարակութեան կազմակերպություններու հետ: Մեր շրջանակները և մասնաճիւղերը նոյնպէս ձեռնարկներ իրականացուցին տեղական տարբեր կազմակերպություններու հետ գործակցությամբ, ինչպէս *Ուաշինկթըն Տի Մի*-ի Սմիթսոնիըն հիմնարկին-ին և Պէրյուրի Ամերիկեան Համալսարանի Հանրային քաղաքականութեան և Միջազգային Ցարաբերություններու *Իսամ Ֆարէս հիմնարկին* հետ:

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Ցեղասպանութեան Կանխարգիլումի Նախաձեռնությունը

2015-ին, Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը, գլխաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան Ներկայացուցչութեան, վճռական նախաձեռնութեամբ մը, բանաձեւ մը վաւերացուց, որ կը հաստատէր, թէ ցեղասպանությունը կանխարգիլելու համար արագ և ազդու միջոցառումներ պէտք է ի գործ դրուին, որպէսզի բողոքի ձայնը կարելի չըլլայ լռեցնել մարդկութեան դէմ գործադրուած ոճիրով: Ամէն տարուան Դեկտեմբեր 9-ը որոշուեցաւ նշել որպէս *Ցեղասպանութեան Ոճիրի Կանխարգիլման և Ցեղասպանութեան Չոհերու Յիշատակի և Արժանապատուութեան Օր*:

2016-ի ընթացքին, Հ.Բ.Ը.Մ.ը քննարկումներու շարք մը կազմակերպեց, որոնք կ'ընգրկէին տարբեր ազգություններ և մշակոյթներ, համաշխարհային ուշադրութեան արժանացնելով այս նախաձեռնությունը և թափ ընձեռելով նիւթին շուրջ երկխօսութեան և իրազեկումի արշաւին:

Պէրյուր

2016-ի Դեկտեմբերին, Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.ը միօրեայ համագումար մը կազմակերպեց «Ցեղասպանութեան Ոճիրը և Միջին Արեւելքի ու Հիւսիսային Ափրիկէի (ՄԷՆԱ) Տարածաշրջանը-Սորվուած Դասեր Կանխարգիլումի կամ Պաշտպանութեան Համար» խորագրով: Համագործակցությամբ՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Մարդու Իրաւունքներու Բարձր



Վերը՝ Պէրյուրի մէջ քննարկումներու գլխաւոր մասնակիցները մարդկային իրաւանց խախտումներուն զիտակցելու կոչ ըրին: Քովի էջ՝ Դոկտ. Քէյթի Տէյվիս Ուաթընփօ, Քալիֆօրնիոյ Համալսարանի Մարդկային Իրաւանց Գիտություններու դասախօս:

Յանձնակատարի Գրասենեակին, Պեյրուի Ամերիկեան Համալսարանի Հանրային քաղաքականության և Միջազգային յարաբերություններու *Իսամ Ֆարէս Հիմնարկին*, Լիբանանի Մարդու և Մարդասիրական Իրաւունքներու Հիմնադրամին և Գերմանիոյ Ցեղասպանության Ուսումնասիրության և Սերտողութիւններու *Լէսփիուս Փոթցտամ* Կեդրոնին: Համագումարի մասնակիցները Ցեղասպանության կանխարգիլումին համար յանձնարարութիւններ բանաձեւեցին, թելադրելով առաջնորդուիլ բնական օրէնքներով և արդարութեան սկզբունքներով, հաշուետուութիւն պահանջելով քաղաքական գործիչներէն իրենց արարքներուն համար, հարցադրելով և ուղղելով զիրենք: Համագումարը նաեւ անդրադարձաւ ծայրայեղականութեան արմատական դրոյսատճառներուն, քննարկելով այլընտրանքային լուծումներ, կարողութիւններու և քաղաքացիական գիտակցութեան մշակումով:

2017-ի Դեկտեմբերին, Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.ը միօրեայ երկրորդ համագումար մը կազմակերպեց, «Մարդկային Իրաւանց Ոտնակոխումներու Դէմ Պայքարը և անոնց կանխարգիլումը Բոլորին Պատասխանատուութիւնն է» նիւթին շուրջ, քննարկելով Համայնքներու քաղաքացիական գիտակցութեան, կրթութեան և լրատուական միջոցներու դերը ցեղասպանութեան կանխարգիլումի պայքարին մէջ: Համագումարը տեղի ունեցաւ Պեյրուի Ամերիկեան Համալսարանին մէջ, գործակցութեամբ՝ Համալսարանի Հանրային քաղաքականութեան և Միջազգային յարաբերություններու *Իսամ Ֆարէս Հիմնարկին*, ՌԻՄԱՄ Փաստաթուղթերու և Ուսումնասիրական Կեդրոնին, ՄԵՄԱՄ Արդի Արաբական Աշխարհի Ուսումնասիրութեանց Կեդրոնին, *Մէն Տօզէֆ* Համալսարանին և *Լօրիան Լը Տուր* օրաթերթին:

 **Նիւ Եորք**

2017-ին, Հ.Բ.Ը.Մ.ի և *Նյուզ Տիփիլի*-ի համագործակցութեամբ, Նիւ Եորքի *Հարվըրտ Քլայպ*-ի մէջ խումերամ բազմութեան մը ներկայութեան, քննարկում մը կազմակերպուած էր, «Տագնապալի Կացութիւններու մէջ Քաղաքացիներու Պաշտպանութեան և Մարդկային Իրաւունքներու Հարցեր» նիւթին շուրջ: Ձեռնարկին նպատակն էր իրազեկել անցեալին ինչպէս նաեւ ներկայիս կատարուող գանգուածային ոճրային արարքներու մասին, հանրութեան մօտ գիտակցութիւն և հակազդեցում հրահրելու նպատակով: Քննարկումին մասնակցողները շեշտեցին մարդկութեան դէմ կատարուող ոճրային արարքներուն և անոնց գոհ դարձած համայնքներու վկայութիւններուն արձանագրութեան և արագ տեղեկատուութեան կարեւորութիւնը, ատենին աշխարհը տեղեկ պահելու և այդ արարքներուն առաջըը առնելու նպատակով:



(Ձախէն աջ) Մրցանակակիր բեմադրիչ Եվլէնի Աֆինիվսկի, Օմար Իամայիլ՝ «Բա՛ւ Է» ծրագիր, նախկին լրագրող Շէրին Թատրոս, Մարդկային Իրաւանց Պաշտպան կազմակերպութենէն Աքշաիա Քումար, Էվան Մէնք Մար, Քաղաքացիական Վէճերու Կեդրոնէն, «Ուղղակի Խաղաղութիւն»էն Դոկտ. Պրիճէթ Ուու և Օսքարի մրցանակակիր բեմադրիչ Թէրի Ճորձ:

 **Փարիզ**

2017-ի Դեկտեմբերի 9-ին, Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.ը, Եւրոպայի Հանրային Հակացեղապաշտական Կազմակերպութիւնը (ԵԿԱՄ)/*Էլի Ուիզէլ Ցանց*-ը և *Նուվէլ Տ'արմէնի* միասնաբար համագումար մը կազմակերպած էին «Ինչպէս Դադրեցնել Սպանութիւնը» խորագրով:

Մասնակիցներու երեք խումբեր, գիտնականներ, մասնագէտներ, լրագրողներ և ականատես վկաներ, քննարկեցին Կեդրոնական Ափրիկէի Հանրապետութեան, Իրաքի և Սուրիոյ վերաբերեալ շարք մը նիւթեր՝ *քաղաքացիներու պաշտպանութեան պատասխանատուութիւն, կանխարգիլում, տագնապէն ետք հաշտեցում և ականատեսի վկայութիւններ*: Խօսողները վերլուծեցին նաեւ արտաքին միջամտութիւններու օրինականութեան և արդիւնաւորութեան խնդիրները:



(Ձախէն աջ) Դոկտ. Քրիսթինա Սթեֆան, Ճէք Մէլլըրհոֆըր, Ե.Ն. Անդամ Ֆրէնք Էնկըլ և համադրող Նիքոլաս Դալիթեան: Խօսողները քննարկեցին քաղաքացիներու պաշտպանութեան, կանխարգիլումի և հաշտեցման միջոցներու վերաբերեալ նիւթեր:

Տեղական Մասնաճիւղերու Նախաձեռնութիւններ

Նկատի ունենալով ոչ-հայ շրջանակները իրագրելու անհրաժեշտութիւնը, Հ.Բ.Ը.Մ.ի տարբեր մասնաճիւղեր համապատասխան համագումարներ կազմակերպեցին մարդկային իրաւանց, ցեղասպանութեան եւ յարակից նիւթերու շուրջ, որոնք կը վերաբերէին հայութեան:



Պերլին

2017-ի Հոկտեմբերին, Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.ը «Սփիւռքներու Եւրոպա» ծրագիրը ներկայացուց Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (Ե.Ա.Հ.Կ.) 2016-ի՝ հանդուրժողականութեան եւ բազմակեցութեան խնդիրներու շուրջ համագումարին, ուր քաղաքացիական հասարակութեան տարբեր խմբակցութիւններ եւ կազմակերպութիւններ պիտի քննարկէին ներկայացուցչութեան եւ քաղաքացիական հասարակութեան վերաբերեալ առկայ խնդիրներ: Ե.Ա.Հ.Կ.ի եզրափակիչ բանաձեռնութեանը կրթական աւելի ազդու նախաձեռնութիւններ եւ քաղաքական կեանքի մասնակցութիւն քաջալերող թելադրութիւններ կ'ընդգրկէին:



Պրիւսել

2016-ի Մայիսին, Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.ը համագործակցական համագումար մը կազմակերպեց Եւրոպական Խորհրդարանին մէջ, «Սփիւռքներու Եւրոպա» ցանցին միջոցաւ յայտնաբերելու եւ արժեքաւորելու համար Եւրոպայի բազմաթիւ սփիւռքները: Համագումարը կը շեշտէր կրթութեան եւ համընդգրկումի վերաբերեալ քննարկումներ, նկատի ունենալով որ սփիւռքի տարբեր համայնքներ արժանաւորապէս չէին ներկայացուած լրատուական, կրթական, գուարճանքի եւ հանրային երկխօսութեան շրջանակներու մէջ: «Սփիւռքներու Եւրոպա»-ն այդ ցամաքամասի սփիւռքի համայնքներու ցանց մըն է, կազմուած Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.ի, Ֆիրէն Ամենքա (Բոմա/Գնչու) եւ Եւրոպայի Հրեայ Ուսանողական Միութեան կողմէ:

2017-ի Ապրիլին, Պէլճիքայի հայ համայնքը Եւրոպայի Հ.Բ.Ը.Մ.ին եւ Աշխարհիկ Հրեական Համայնքային Կեդրոնին (CCLJ) հետ գործակցութեամբ եւ Պօղոսեան Հիմնադրամին օգնութեամբ, համագումար մը կազմակերպեց Հայկական Ցեղասպանութեան մասին Պէլճիքայի ֆրանսախօս երկրորդական դպրոցներուն մէջ դասաւանդումի ծրագիր մշակելու վերաբերեալ: Նաեւ երկրորդ համագումար մը կայացաւ ցեղասպանութեան մերօրեայ յատկանշականութիւնը նիւթին շուրջ: Այս նախաձեռնութիւնը որ կը վայելէր կառավարութեան նիւթական աջակցութիւնը, Պէլճիքայի մէջ Հայկական Ցեղասպանութեան ուսուցման կապակցութեամբ իր տեսակին մէջ առաջինը կը հանդիսանար:



Երեւան

2017-ի Սեպտեմբերին, Երեւանի Հ.Բ.Ը.Մ.ը «Կիներ եւ Ցեղասպանութիւն» նիւթով համագումար մը հովանաւորեց, գործակցութեամբ Կիներ Պատերազմի մէջ (Փարիզ) եւ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկի (Երեւան) գործակցութեամբ: Համագումարի խորագիրն էր՝ «Ցեղասպանութիւն ետք – Տագնապէն Վերածնունդ», որ յատկապէս կանանց վերաբերեալ տեսադաշտի ծիրին մէջ կը սերտէր Հայկական Ցեղասպանութիւնը, Հոլոքոստը, Պոսնիոյ, Քամպուտիայի, Կեդրոնական Ամերիկայի եւ Գոնկոյի Ժողովրդավար Հանրապետութեան ցեղասպանութիւնները, Միջին Արեւելքը, Նանզինկ եւ Բուանտա:

Հարվի Մրրիկի Աղետը

2017-ի Օգոստոսին Հարվի մրրիկին հետեւանքով Հաուսթընի եւ Հարաւ Արեւելեան Թէքսասի շրջանները աղիտահար ըրած ողորումը, հազարաւորներու կեանքը տակնուվրայ ըրաւ: Հ.Բ.Ը.Մ.ը 50,000 տոլարի աջակցութեամբ իր մասնակցութիւնը բերաւ օգնութեան ճիգերուն, երախտագիտութեան խորհրդանշական արտայայտութիւն մը դրսեւորելով 1915-ի Ցեղասպանութեան վերապրած հայերու նկատմամբ Ամերիկացի ժողովուրդին ցուցաբերած հսկայածաւալ աջակցութեան դիմաց:





ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՍՏԱՌԻ ՎՐԱՅ

2015-ին, Յեղասպանության հարիւրամեակը մղիչ հանդիսացաւ Հայկական Յեղասպանութիւնը վերաբժեւորելու եւ զայն ներկայացնելու արդարութեան, մարդկային իրաւունքներու եւ Յեղասպանութեան կանխարգիլման ուղղուած, համընդհանուր պայքարի ծիրին մէջ: Երկար սպասուած եւ Հոլիվուտեան լիամերթած ֆիլմի չափանիշերով արտադրուած «*Խոստումը*» ժապաւենը, որ յաջորդ տարի 2016-ին առաջին անգամ ներկայացաւ Թորոնթոյի Ֆիլմարուեստի փառատօնին, ապա նաեւ 2017-ի Ապրիլին Հիւսիսային Ամերիկայի տարածքին, հայութեան համար նոր ճամբայ հարթեց լրատուական գլխաւոր ցանցերու վրայ տեսանելի դարձնելով զինք:

Լայնօրէն գովազդուած եւ տարածում գտած հերոսապատումը, Հայկական Յեղասպանութեան սարսափելի իրականութեան հետ զուգորդուած, դրսեւորեց շարժանկարի ուժը՝ հայութեան արդար դատին կապակցութեամբ հանրութեան մօտ իրազեկում եւ համակրանք ստեղծելու իմաստով: Այդ նպատակով, Հ.Բ.Ը.Մ.-ը իր հաղորդակցական բոլոր միջոցները ի գործ դրաւ, կարելի չափով հոծ ներկայութիւն ապահովելու համար շարժապատկերի սրահներէն ներս, մշակելով նաեւ յատուկ ծրագիր հանրային կրթութեան ոլորտներուն մէջ ֆիլմը որպէս դաստիարակչական միջոցառում օգտագործելու համար:

Խոստումը՝ Դաստիարակութեան Արշաւ

2017 տարուան ընթացքին, շարունակելով *Խոստումը* ժապաւենի տարածման հասարակական արշաւը, Հ.Բ.Ը.Մ.-ը, ֆիլմի արտադրիչ *Սըրվայվըլ Փիքչըրզ* ընկերութեան եւ անոր հանրային յարաբերութիւններու բաժանմունքին հետ, ձեռնարկեց «*Խոստումը՝ Դաստիարակութեան Արշաւ*» աշխատանքին, որուն նպատակն էր Միացեալ Նահանգներուն մէջ Յեղասպանութեան վերաբերող ուսուցման ոլորտը բարելաւել եւ Հայկական Յեղասպանութիւնը ծանօթացնել լայն շրջանակներու:

Խոստումը ֆիլմի աշխատակազմին եւ Յեղասպանութեան իրազեկումով զբաղող կառոյցներու հետ համագործակցութեամբ, որոնց շարքին Յեղասպանութեան Իրազեկումի Կրթական Ծրագիրը, Հայ Ազգային Ինստիտուտը (ԱԻԻ) եւ Զօրեան Ինստիտուտը, Հ.Բ.Ը.Մ.-ը ֆիլմին վերաբերեալ լրացուցիչ ուսումնական ծրագիր մը մշակեց, անոր կցելով ֆիլմի խտասալիկը, նամակ մը ֆիլմի բեմադրիչ Թերի Ճորձէն, նաեւ Հայկական Յեղասպանութեան վերաբերեալ աղբիւրներու ցանկ մը:

Դաստիարակչական այս ծրարի տարածման համար, Միութիւնը գործակցեցաւ մարդկային իրաւանց աշխատանքներով զբաղող շարք մը կազմակերպութիւններու հետ, ինչպիսիք են *Հարաւային Քալիֆորնիոյ «Chowh» հիմնադրամը*, *Մարդկային Իրաւանց Պահապան (Human Rights Watch) Կազմակերպութիւնը*,

Համընդէմ Մենք Ձմեզ եւ Պատմութեան Կազմակերպութիւնը (Facing History and Ourselves), *Հրեական Համաշխարհային Պահապան Կազմակերպութիւնը* (Jewish World Watch) Միջազգային Համաներման Կազմակերպութիւնը (Amnesty International) եւ ուրիշներ: Կարելի եղաւ ցրուել աւելի քան 1000 ծրարներ, զանոնք անվճար տրամադրելով հանրային վարժարաններու, համալսարաններու, թանգարաններու, մարդկային իրաւանց կազմակերպութիւններու, գրադարաններու եւ անկախ ուսուցիչներու, Ամերիկայի տարածքին:



«Խոստում»ի Տարածումը Համաշխարհային Ծաւալով

Երբ ֆիլմը Հիւսիսային Ամերիկայէն ետք անցաւ համաշխարհային շուկայ, Հ.Բ.Ը.Մ.-ը շարունակեց սատարել անոր տարածման, քաջալերելով տեղական հայկական համայնքները նախաձեռնութիւններ կատարելու, որպէսզի մեծ թիւով մարդիկ ներկայ գտնուին ֆիլմի ցուցադրութեան, զայն ծանօթացնելով ոչ միայն իրենց շրջանակներուն, այլև հանրութեան լայն խաւերուն:

Երեւան, Հայաստան

Հ.Բ.Ը.Մ.-ը Հայաստանի մէջ շարք մը ձեռնարկներ կազմակերպեց, նուիրուած «Խոստումը» ժապաւէնին: Այս առիթով Հայաստան հրաւիրուած էին Բեմադրիչը Թէրի Ճորձ եւ ֆիլմարտադրողը Էրիք Իսրայէլեան, որոնք իրենց մասնակցութեամբ եւ ելոյթներով Հայաստանի եւ Սփիւռքի հայութեան համար պարզեցին ֆիլմի համաշխարհային բնոյթը եւ անոր ընդմէջէն հայ ժողովուրդի պատմութիւնը աշխարհի ծանօթացնելու հանգամանքը:

21 Սեպտեմբեր 2016-ին, Թէրի Ճորձ եւ Էրիք Իսրայէլեան Օփերայի դահլիճին մէջ ներկայ գտնուեցան յատուկ համոյթի մը, որ նուիրուած էր Ամերիկացի երգահան եւ երգիչ Քրիս Քորնելի կողմէ գրուած ֆիլմի երաժշտութեան: Համոյթին իրենց մասնակցութիւնը կը բերէին Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիքը, նաև ժողովրդային աստղեր եւ պարողներ, որոնց շարքին Հ.Բ.Ը.Մ.-ի Հայորդեայց տուններու պատանիները:



«Կը Խոստանանք» երաժշտական համոյթ՝ մասնակցութեամբ Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիքին եւ ժողովրդային աստղերու եւ պարողներու:

Նոյն օրը երեկոյեան, 150-է աւելի հիւրեր, որոնց շարքին էին Հայաստանի ֆիլմարուեստի գործիչներ եւ լրագրողներ, մասնակցեցան երկու ժամ տեւողութեամբ մասնագիտական գրոյցի մը, ներկայացուած Թէրի Ճորձի եւ Էրիք Իսրայէլեանի կողմէ: Ձեռնարկը կը հիւրընկալէին Հայաստանի Հ.Բ.Ը.Մ.-ը եւ «Ստեղծագործ Հայաստան» կազմակերպութիւնը, որ այժմ Հ.Բ.Ը.Մ.-ի գործընկերն է: Ձեռնարկին յաջորդեց պաշտօնական ընթրիք մը, Գաֆէսճեան թանգարանին մէջ, որուն ընթացքին Նախագահ Պերճ Սեդրակեան Թէրի Ճորձին եւ Էրիք Իսրայէլեանին յանձնեց «Շնորհակալութեան Գրքոյկ» մը, ուր աշխարհի տարբեր շրջաններէն հայեր, ինչպէս Հարաւային Ափրիկէ, Յորդանան եւ Աւստրալիա, իրենց շնորհակալական եւ գնահատանքի խօսքերը արձանագրած էին, «Խոստումը» ժապաւէնին համար:

Նոյնպէս, նախագահը պատուոյ հիւրերուն յանձնեց ֆիլմի հերոսներէն մրցանակակիր դերասան Քրիսչըն Պելլի մարմատրած

Քրիս Մայրըզի գործածած լուսանկարչական գործիքին կրկնօրինակը: Նշենք թէ հերոսին կողմէ օգտագործուած արտայայտութիւնը թէ «Առանց լրագրողներու հայեր գոյութիւն պիտի չունենային» լայն տարածում գտաւ ֆիլմին միջոցաւ:



Թէրի Ճորձ կը ստանայ նուէր քանդակը Քրիսչըն Պելլի մարմատրած լրագրող Քրիս Մայրըզի լուսանկարչական գործիքի կրկնօրինակով:

«Խոստումը» ժապաւնին Վերաբերեալ Երջանային ձեռնարկներ

«Խոստումը» շարժապատկերի տարածումին նպաստող նախաձեռնութիւններով իրենց մասնակցութիւնը բերին Հ.Բ.Ը.Մ.-ի Աւստրալիոյ, Ֆրանսայի եւ Սիւացեալ Նահանգերու Արեւմտեան Ափի շրջանակները:

1. 2017 Ապրիլին, Լոս Անճելըսի Երիտասարդ Արիեստավարժներ Հիւսիսային Հոլիվուտի մէջ ներկայ գտնուեցան «Խոստումը» ֆիլմի ցուցադրութեան:
2. 2017-ի Ապրիլին Սան Մաթեոյի մէջ (Քալիֆորնիա) կատարուած ցուցադրութիւնը, մեկնարկի շաբթուան ընթացքին, Հ.Բ.Ը.Մ.ի կազմակերպած բազմաթիւ ցուցադրութիւններէն մէկն էր:
3. 2017-ի Մայիսին, Պրագիլի մէջ «Խոստումը» ֆիլմի անդրանիկ ցուցադրութեան առիթով, Հ.Բ.Ը.Մ.ի Սան Փաուլոյի մասնաճիւղի ատենապետ Հայկ Արովեան յատուկ հարցազրոյց մը կազմակերպեց:
4. 2017-ի Նոյեմբերին, Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.ի կազմակերպած «Խոստումը» ֆիլմի անդրանիկ ցուցադրութեան մասնակցեցան Շարլ Ազնաւուր եւ դերասանուհի Շարլոթ Լը Պոն:



Աջակցութիւն՝ Հայերու Մասին Հայերու Կողմէ Պատրաստուած Ֆիլմերու


2016-2017 ին, Ֆիլմարուեստի միջոցաւ հայ ժողովուրդի պատմութեան վերաբերեալ դէպքերու եւ իրադարձութիւններու հանրութեան ներկայացումը, թափ ստացաւ համայնքներէն ներս, Հ.Բ.Ը.Մ.-ի շրջանակներու նախաձեռնութիւններով:



2016-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Կատարողական Արուեստներու Բաժանմունքը, հայ բեմադրիչներու կողմէ պատրաստուած կարճամեթրաժ ֆիլմերու իր տարեկան ցուցադրութիւնը ներկայացուց Նիւ Եորքի *Լինքոլն Սենթրի Ֆիլմարուեստի Շրջանակ*-ի սրահին մէջ՝ Ներկայացուած ֆիլմերն էին՝ «Մեր Կարգը», «Հինգերորդ Շարասիւնը» «Սուրիական Պատերազմը» «Կրօնաւորը», «Հայրս Միշտ Կու լայ Շաժապատկերի Սրահին Մէջ» եւ «Կարմիր Խնցոր»: Արուեստագէտներու հարցազրոյցի համադրողն էր՝ Սթեֆընի Այանեան: Յաջորդ տարին, գրուցավարն էր Կարին Յովհաննէսեանը: Ներկայացուած ֆիլմերն էին՝ «Պարապը», «Վերապրումի Արձագանգներ», «Օտար Ձայներ», «Լեւոն», «Զարմանահրաշ Կեանք մը», «Չես Կրնար Կրկին Տուն Վերադառնալ», «Մաշում» եւ «Պատերազմի Մանուկներ», որ մէկ վայրկեան տեւողութեամբ անխօս հինգ ֆիլմերու համադրում մըն էր, որոնք մարդկային իրաւանց վերաբերեալ պատմութիւններ կը ներկայացնէին:



2017-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Թորոնթոյի եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Ափի շրջանակները, յատուկ յայտագիրներ կազմակերպեցին հանրութեան ներկայացնելու համար «Անապատի Ագռաւներ» ֆիլմը: Խորապէս յուզական այս շարժապատկերի նիւթն էր Ուրֆա ծնած Լեւոն Եօթնեղբայրեանի դիմադրական շարժումը: Ֆիլմի գլխաւոր արտադրող Փոլ Թրփանճեան ներկայ գտնուեցաւ եւ մեկնաբանութիւններ տուաւ զոյգ յայտագիրներու ընթացքին:




Այս խորագիրը կրող շարժապատկերը, նկարահանուած Պարետ Մարոնեանի կողմէ, լայն ծանօթութիւններ կը փոխանցէր Յեղասպանութեան յարակից դէպքերու եւ հայ կիներու դիմագրաւած բազմաթիւ դժուարութիւններուն մասին: Շարժապատկերը, որուն իրագործումին աջակցած էր Հ.Բ.Ը.Մ.-ը՝ «Երիտասարդ Տեսլապաշտներու Սրջանակ» յատուկ նիւթական յատկացումով եւ որ արժանացած էր ֆիլմարուեստի *Էմի* մրցանակի թեկնածութեան, 2017-ի Փետրուարին ներկայացուեցաւ Նիւ Եորքի հանրութեան, Հ.Բ.Ը.Մ.-ի *Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Տիկնանց Յանձնախումբ*-ին եւ Կատարողական Արուեստներու Բաժանմունք-ին նախաձեռնութեամբ: Աւելի ուշ, անիկա ներկայացուեցաւ նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի Մէլպուրնի մասնաճիւղին կողմէ, Աւստրալիա:



Կարին Յովհաննէսեանի «1915 - Շարժանկարը», Արնօ Խայաճանեանի «Քարքարոտ Արահետ» եւ Ճօ Պերլինկերի «Սպաննելու Դիտաւորութիւն» (*Խոստումը Ֆիլմին գուգահետ պատրաստուած*) ֆիլմերը, առիթ ստեղծեցին ցեղասպանութեան ուրացումի, հանրութիւնը իրազեկելու եւ մարդկութեան դէմ ոճիրներու հանդէպ հանրային ընդիմութեան դրսեւորումի նիւթերուն շուրջ լայն քննարկութեան: Հ.Բ.Ը.Մ.ի աշխարհատարած հաղորդակցութեան ցանցը, օժանդակեց անոնց տարածումին, յատուկ ցուցադրութիւններ եւ քննարկութեան կազմակերպելով, իր տարբեր մասնաճիւղերուն նախաձեռնութեամբ:

Պեղելով Ապագան – Հայաստան


2016-ի Մարտին, «Պեղելով Ապագան – Հայաստան» ֆիլմը, Էմի մրցանակի արժանացած ֆիլմարտադրող *Ըօզնետօ'զ Թրէվըրսոզի'ս* ի հնագիտական ֆիլմերու շարքէն, *Էմի* մրցանակի թեկնածութեան արժանացաւ: Հեռատեսիլի տեսաշարի մաս կազմող այս յատուկ ֆիլմը, որ կը ներկայացնէր Հայաստանի մշակութային պատմութիւնը եւ իրականացած էր Հ.Բ.Ը.Մ.ի եւ Գազանճեան Հիմնադրամի հովանաւորութեամբ, ցուցադրուեցաւ Միացեալ Նահանգներու տարածքին հանրային հեռատեսիլի բազմաթիւ կայաններու կողմէ:



Համացանցային Թուայնական Ծրագրեր

2016-ին, Հ.Բ.Ը.Մ.ը նախաձեռնեց «Համացանցային Ջրոյններ» շարքին: Կարճ տեսաերիզներու այս շարքը, շարքը կը ներկայացնէ գանազան պատմական եւ ժամանակակից նիւթերու շուրջ գրոյցներ, բանասերներու, փորձագէտներու եւ մտաւորականներու հետ, ընդգրկելով մանրանկարչութենէն մինչեւ հայ կիններու դերը 20-րդ դարու սկիզբին վերաբերեալ նիւթեր:

Հարցազրոյցներու առաջին շարքի քննարկումները կը վերաբերին Հայկական Յեղասպանութեան 100-ամեակին: Դոկտ. Բգրայէլ Չերնիի գրոյցի նիւթն էր «Ուրացումի Հոգեբանութիւնը», որուն յաջորդեց Փրոֆ. Բիչըրտ Յովհաննէսեանի մեկնաբանութիւնը Յեղասպանութեան նիւթին շուրջ «Հայագիտական Առաջնորդող Սերտողութիւններ»-ու մասին: Բէյնոնստ Գեորգեան ներկայացուց Փարիզի Պօղոս Նուպար Մատենադարանը: Կուիյօմ Փերիէի եւ Լորա Մարշանի գրոյցը կը կեդրոնանար Հրանդ Տինք-ի վրայ, իսկ Միջազգային Մարդկային Իրաւանց իրաւաբան Ճեֆրի Բալըրթսընի գրոյցի նիւթն էր «Խօսքի Ազատութիւնը ընդդէմ Յեղասպանութեան Ուրացումի Օրէնքներուն»: Համացանցային այս գրոյցները շուտով լայն ուշադրութեան արժանացան: 2016-ի ընթացքին լոյս տեսան 17 գրոյցներ, 16 գրոյցներ հրատարակուեցան նաեւ 2017-ին, դառնալով Հ.Բ.Ը.Մ.ի ուսուցողական այլընտրանքային ծրագիրներու ամենաժողովրդական միջոցառումներէն մին:



Հ.Բ.Ը.Մ.ի Նուպար Մատենադարանը կը Թուայնացուի

Հ.Բ.Ը.Մ.ի Փարիզի Նուպար Մատենադարանը 1928-էն ի վեր իր արխիւային հարուստ նիւթերով, անգնահատելի ծառայութիւն մատուցած է հայութեան, պատմագիտական ուսումնասիրութիւններու եւ հրատարակութիւններու միջոցաւ: 2017-ին, մատենադարանը ձեռնարկեց իր գրատր թէ լուսանկարչական հարուստ եւ անսգիւտ արխիւներու եռալեզու թուայնացումի աշխատանքին, bnulibrary.org եւ journals.openedition.org ցանցերուն վրայ գանոնք տրամադրելի դարձնելով հանրութեան:

Առցանց Ուսուցման Ծրագիր

Նկատի ունենալով հեռավար ուսուցման իբր միջոց՝ թուայնական ճարտարագիտութեան ընձեռած առաւելութիւնները, Հայկական Առցանց Գոլէճի (AVC) ծրագիրը 2017-ին աւելի եւս ընդարձակեց դասարանային ճկուն դրութեամբ դասաւանդումի միջոցառումը: Այդպիսով, հայերէն լեզուի, պատմութեան եւ մշակոյթի վերաբերեալ Գոլէճի մշակած հարուստ նիւթերը աշխարհի բոլոր կողմերէն մասնակցող անհատներու կամ դպրոցական խումբերու տրամադրելի կը դառնային առանց ժամանակի կամ աշխարհագրական վայրի կաշկանդումներու:



Հ.Բ.Ը.Մ. 110-ԱՄԵԱԿ

2016-ին Հ.Բ.Ը.Մ.ը նշեց ազգանուէր իր ծառայութեան 110-ամեակը: Տարուան ընթացքին, մասնաճիւղեր, դպրոցներ եւ երիտասարդական խմբակցութիւններ աշխարհի տարածքին, տարբեր եւ իւրայատուկ նախաձեռնութիւններով սօսախմբեցին Միութեան փայլուն ժառանգը: Ձեռնարկները բնորոշուեցան կատարողական ելոյթներով, շքահանդէսներով, ինչպէս նաեւ համագումարներով եւ քննարկումներով, որոնք նիւթ ունէին Միութեան տեսլականը եւ գործունէութեան շրջագիծը յառաջիկայ տասնամեակներուն:

Նոյն տարին, Հ.Բ.Ը.Մ.ի 89-րդ Ընդհանուր Ժողովը կը համընկնէր 110-ամեակին, այդ առթիւ յատուկ բնոյթ ստանալով: Ընդհանուր Ժողովի մասնակից միութենական ղեկավարներ եւ պատգամաւորներ, որոնք համախմբուած էին Նիւ Եորքի մէջ Հոկտեմբերի 27-29-ին, ամբողջ շաբաթավերջ մը, աշխատանքային հանդիպումներով եւ քննարկումներով ձեռնարկեցին հայաշխարհի փոխուող իրականութեան լոյսին տակ, նոր կողմորոշումներու եւ գործելաձեւերու մշակումին:


Շաբաթավերջի ակնառու ձեռնակներէն մին էր «Հոգիս» խորագրով հայոց պատմութեան բեմականացուած երաժշտական համոյթը, որուն կը մասնակցէին Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի ծրագիրներէն Մայր Աթոռի համագործակցութեամբ իրականացուող Նորքի Հայորդեայց Տան արտադարձական մշակութային դասընթացքին հետեւող հարիւրաւոր մանուկներու եւ պատանիներու խումբը: Յայտագրին մէջ բաժին ունէին նաեւ ստեղծագործական ճարտարագիտութեան ԹՈՒՄՈ Կեդրոնի պատանիները: Ֆրանսահայ բեմարտադրիչ Փաթրիք Մալաքեանի ղեկավարութեամբ իրականացած այս ծրագիրը, աւելի ուշ ելոյթներով հանդէս եկաւ Հայաստանի մէջ, ինչպէս նաեւ միջազգային բեմերու վրայ:

110-ամեակի շքահանդէսին, որ տեղի ունեցաւ աշխատանքային ճեղք էթ Լինքըլին Սենթըրը Բրեյտրիք Փ. Բոզ Սրահ-ին մէջ, Հ.Բ.Ը.Մ.ը պատուեց հինգ անհատներ, որոնք իրենց գործունէութեամբ կը մարմնաւորէին Միութեան աշխարհաքաղաքացիութեան ըմբռնումը: Պատուի արժանացած անձերն էին՝ արուեստագետ մետաղագործ Մայքլ Արամ, ֆինանսական գործարար Նիկոլ Քուլաճեան, Մարդկային Իրաւանց իրաւաբան Շիլա Փայլան եւ յեղափոխաշունչ երաժիշտ Սերժ Թանքեան: Անոնք գնահատուեցան իրենց գործունէութեամբ համայն հայութեան ներշնչած հպարտութեան համար: Այս առթիւ Միութիւնը նաեւ յարգանքի տուրք մատուցեց 20-րդ դարու ճեղք երաժշտութեան մեծագոյն ղեմքերէն, ճորճ Աւագեանին, որ *Գոյումպիա Լէքըրտոզ* եւ *Ուորնըր Պրատըրզ Լէքըրտոզ* ընկերութիւններէն ներս իր 60 տարիներու աշխատանքի ընթացքին, իր յատուկ դրոշմը ունեցած էր երաժշտութեան այդ մարզի գեղարուեստական զարգացման հողվոյթին վրայ: Ապա, անակնկալ նախաձեռնութեամբ մը, Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ, իրենց գնահատանքի սրտաբոլխ արտայայտութիւններով եւ յուշագրութիւններով պատուեցին Միութեան Նախագահ Պերճ Սեդրակեանը: Ձեռնարկները իրենց փայլով եւ որակով կը խորհրդանշէին Հ.Բ.Ը.Մ.ի Միութեան անժամանցելի դերը եւ ապագայի ուղղուած անոր տեսլականը հայ ժողովուրդի կեանքին մէջ:



Հ.Բ.Ը.Մ.ի Վերայայտնաբերուած Վաւերաթուղթեր

2016-ին, Հ.Բ.Ը.Մ.ի պատմութեան առնչուող երկու վաւերաթուղթեր վերայայտնաբերուեցան եւ վերադարձուեցան Միութեան, Յեղասպանութեան Թանգարան Հիմնարկի նախկին տնօրէն Հայկ Դեմոյեանի եւ Փիւնիկ Բարեսիրական Հիմնադրամի Նախագահ բարերար Գաբրիէլ Ճեմպերճիի ջանքերով: Առաջինը 1 Մայիս 2016 թուականին հրատարակուած յայտնի «Կոչ Համայն Հայութեան» յայտարարութիւնն է, որ կը կրէ Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրէի մասնաճիւղին պաշտօնական կնիքը եւ պաշտօնապէս կը յայտարարէ հիմնադրութիւնը նորակազմ միութեան, պարզելով անոր հիմնադրութեան նպատակը եւ գործունէութիւնը: Երկրորդը Հիմնադիր Նախագահ Պողոս Նուպարի ձեռագիր նամակն է, որ կոչ կ'ուղղէ հայերուն, Հ.Բ.Ը.Մ.ի մասնաճիւղեր հաստատել աշխարհի տարածքին, իրենց ապրած երկիրներուն մէջ:



110-Ամեակին Նուիրուած Ձեռնարկներ Աշխարհի Տարածքին

Թորոնթօ, Գանատա



Պէյրուօ, Լիբանան



Միտնի, Աստրալիա



Հալէպ, Սուրիա



Միլան, Իտալիա



Նիւ Եորք, ԱՄՆ



Նիւ Եորք, ԱՄՆ



©Tina Tcholakian Photography



Փարիզ, Ֆրանսա



©Raffi Hagopian



Արենք, Յունաստան



Հ.Բ.Ը.Մ. ՀԱՅԱՍՏԱՆ 2016-2017



ՀԲԸՄ ՀԱՅԱՍՏԱՆ

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԴԱՐԲՆՈՒՄԸ,

ՈՐ Կ՛ՕԺԱՆԴԱԿԷ ԱԶԳԱԿԵՐՏՈՒՄԻՆ

2 016-2017 տարիները նշանակալից դարձան Հայոց հայրենիքին համար, իրադարձություններու արագ զարգացումներով եւ կարելու մարտահրաւերներով:



Նոր իրականություններն ու փոխուող իրավիճակները ազդակներ էին վերադասաւորելու մեր առաջնահերթությունները, ապահովելու համար շարունակական յառաջդիմությունը, ի շահ Հայաստան- Սփիւռք կապերու ամրապնդման, հիմնական նպատակ ունենալով համարկումը երկու աշխարհներու, մէկ ազգի մէջ:

Հայաստանի, Արցախի, ինչպէս նաեւ Սփիւռքի կարիքներուն ի տես, Հայաստանի ՀԲԸՄ-ը ինքզինք գտաւ ազգակերտումի ճանապարհին ուժական եւ միեւնոյն աստէն ոգեշնչող նախաձեռնություններու յառաջապահ եւ կեդրոնական դերակատարութիւն մը ստանձնելու պարտաւորութեան առջեւ:



Զարգացնել Համագործակցությունները եւ Ռազմավարական Դասաւորումները

Հայաստանի ՀԲԸՄ-ի ներգործութիւնը աւելի ազդեցիկ դարձաւ կառավարական եւ ոչ- կառավարական ներկայացուցչություններու, ոչ-շահաւէտ կազմակերպություններու եւ յայտնի միջազգային հաստատություններու հետ համագործակցելով: Ասիկա օգնեց ստեղծելու վստահելի հարթակ մը, Սփիւռքն ալ մասնակից դարձնելով, որպէս հմտութեան աղբիւր, գործակից եւ օժանդակ հայաստանաբնակներուն, որոնք կը ցանկան ազդեցիկ ղեկավարներ ըլլալ իրենց տեղական համայնքներուն մէջ: Միւս կողմէ, հարիւրաւոր երիտասարդ սփիւռքահայեր, որոնք հասան Հայաստան մասնակցելու համար ՀԲԸՄ-ի ամառնային ծրագիրներուն, ներկայացան գործնական աշխատանքներու, իրենց ակադեմիական եւ/կամ մասնագիտական հմտությունները ի սպաս դնելու, Հայաստանի մէջ աշխատելու համար:

Նոր Նախաձեռնություններ

Տեղական Ձեռնարկատերերու Նոր Մերունդի Մը Մշակումը

Հայաստանի մեջ, ՀԲԸՄ-ի Կանանց Հզորացման Ծրագիրը լայնածավալ նախաձեռնություն մըն է, որ հիմնուած է Նոյեմբեր 2017-ին, որպէսզի ապահովէ լիարժէք օժանդակութեան ծիր մը Հայ կանանց, իրականացնելու համար փոքր գործարքներ սկսելու անոնց երազները: Ծրագիրը մասնակիցներուն առիթներ կ'ընծայէ վերաորակաւորելու իրենց ուսումը, զարգացնելու համար շուկայական մրցակցութիւնը եւ հմտութիւն շահելու, որպէսզի կարողանան ներգրաւուիլ գործարարներու համայնքին մէջ:

Ղեկավար ծրագիրը մասնակից ունէր 25 թեկնածուներ, ընտրուած Ձեռնարկատիրութեան դասընթացքէն, ղեկավարութեամբ ուսուցիչի մը Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Ընդարձակ Ծրագրէն: Դասերը տեղի ունեցան ՀԲԸՄ-ի կեդրոնին մէջ, ուր հինգ հիւր դասախօսներ ներկայացուցին նիւթեր սկսեալ շուկայական ղեկավարումէն, մինչեւ հաստատական վերաբերմունք, ժողովուրդի առջեւ ելոյթ ունենալ եւ գործարարական ցանցերու կազմում:

Հայաստանի Քաղաքացիական Շարժումի Ամրապնդումը

BRIDGE for CSO's սկզբնատաւերն են Bring Real Impact with Diaspora and Global Engagement-ին: (Բսկական մղում տալ Սփիւռքի եւ համաշխարհային յանձնառութեան): Այս եռամեայ ծրագիրը պատրաստուած է ամրացնելու տարողութիւնը Հայաստանի տեղական հասարակական կազմակերպութեանց, քաղաքացիներու կարիքները հոգալու համար:

Հիմնական նպատակը կապ հաստատելն է տեղական կազմակերպութեանց եւ Սփիւռքի մասնագէտներու միջեւ, ազատ ցանցի մը հարթակով որ կը կոչուի Together 4 Armenia, որ յառաջ եկած է համագործակցութեամբ UNICEF-ի (ՄԱԿ-ի Մանուկներու Միջազգային Շտապ Օգնութեան Հիմնադրամ):

Գործադրութիւնը սկսաւ ծրագրի յատուկ գրասենեակի մը բացումով եւ աշխատակազմի մը ներգրաւումով, յառաջացնելով հաղորդակցութեան ծրագիր մը, ստեղծելով հասարակական կազմակերպութիւններ եւ գնահատելով անոնց հիմնական կարիքները: Առաջին տարուան ընթացքին հաւաքուած օգտակար տեղեկութիւններով ծրագիր մը պատրաստուեցաւ երկրորդ տարուան ուղղահայեաց, թեմաթիկ եւ կարողականութիւնը ամրապնդող վարժեցումներու համար: Ասիկա պիտի ընդգրկէր կրթութիւն, հասարակական ձեռնարկութիւններու զարգացում, շեշտը դնելով շուկայական հմտութեան երիտասարդական հեղինակութեան, քաղաքացիներու մասնակցութեան, հասարակական քարոզարշաւի, առաջարկներու գրառումի, գործարքի ղեկավարման եւ տրամաբանական կառուցումի, ինչպէս նաեւ շրջապատի միջամտութեան:



Հոս-Պինհ Աճեմեան, ԵՄ-ի պատուիրակութեան համագործակցութեան բաժանմունքի ղեկավարը, խօսք կ'ուղղէ Technovation Challenge-ի մասնակիցներուն: Սեպտ. 2017:

ՀԲԸՄ ընտրած է Հայաստանի Ամերիկեան Համալսարանը միասին աշխատելու երկրորդ տարուան ընթացքին, յառաջ բերելու համար տրամաբանական ծրագիր մը CSO-ի, հասարակական կազմակերպութեանց ղեկավարման վկայականի: Ասոր կից, ենթայատկացումի մը գործընթացը երկու նիւթական յատկացումներու, 20.000 եւրոյի եւ 30.000 եւրոյի միջեւ: Այս առթիւ խորհրդակցութիւններ կատարուեցան ներգրաւելու համար նաեւ սփիւռքահայ խորհրդականներ, համացանցի միջոցով նմանը որոնելու համակարգով: Ծրագիրը կը հրաւիրէ նաեւ Բարի Կամեցողութեան Հիւպատոսներ (Goodwill Ambassadors): Այսպիսի երկու խնդիրներ ամբողջացան 2017-ին, մին՝ ազգային, իսկ միւսը՝ համայնքային: Դոկտ. Երուանդ Զօրեան (Synopsis)-էն, ներկայացուց Armenian Technovation Challenge world Pitch Summit, իսկ Լիւպա Թադետուեան, ֆրանսա խօսութեան ղեկավար Մոսկուայէն, գործեց որպէս Տաւուշի շրջանի բարի կամեցողութեան դեսպան Պահապան Հիմնադրամի կողմէ:

Օժանդակություն Ստեղծագործական և Մշակութային Ճարտարարուեստի Բաժանմունքին

2017-ին ՀԲԸՄ-ը առաջին կարեւոր քայլը առաւ Հայաստանի մէջ յառաջ բերելու Ստեղծագործական և Մշակութային Ճարտարարուեստի Բաժանմունք մը (CCI): Ան սկիզբ առաւ շուրջօրեայ ձեռնարկով մը, ի մի բերելով բանալի գրաւակալներ և մասնակիցներ, արուեստագէտներ և սկսնակ ստեղծագործողներ, մինչև միջազգային կազմակերպություններ, ընդհատակէայ կառոյցները բարելաւելու աշխատանք տանող: Անոնք միասնաբար գործակցեցան ստեղծելու համար մտապատկեր մը Հայաստանի մէջ CCI-ի տարածքի մը համար յաջորդ տասը տարիներու ընթացքին: ՀԲԸՄ-ը դիրացուց այս դժուարին նիստը, օգնելով որ սահմանէն իտէլական eco-system մը երիտասարդ նորարարներուն և զարգացնելու աշխատանքային ծրագիր մը իրենց գաղափարները իրականութիւն դարձնելու համար: Դասախօսութիւնները ընդգրկեցին ստեղծագործական նախապատրաստութիւն և գինեգործութիւն, ինչպէս նաև նախագծման տաղաւար մը, հրաւիրելով հայ գծագրիչներ և գեղարուեստագործներ, վերամրագրելու համար նախագծումի ապագան Հայաստանի մէջ:

Ուրիշ նիստ մը կեդրոնացաւ «Կառուցել Ճարտարարուեստ.ստեղծագործական Վաղը» խորագրով, որ քննեց ժամանակակից արուեստն ու կրթութիւնը, նախագծումն ու ճարտարապետութիւնը, լուսանկարչութիւնն ու հաղորդակցութիւնը: Մասնակիցները քննեցին թէ ինչպէս կարելի է յառաջ մղել ստեղծագործութիւնն ու նորարարութիւնը Հայաստանի տնտեսութեան համար կենսական բաժիններով: Այս ձեռնարկը կազմակերպուած էր ՀԲԸՄ-ի կողմէ, գործակցութեամբ British Council-ի, German Giz-ի և այլ կազմակերպություններու: Համադրողն էր Մարինէ Մխիթարեանը, որ UNDP's Kolba Lab-ի ղեկավարն է:



Վարպետաց դասընթացներէն մէկուն մասնակիցները, ԽՈՍՏՈՒՄԸ ֆիլմի ղեկավար Թերրի Ճօրճի, որ հիւրընկալուեր էր ՀԲԸՄ-ի կողմէ 2017-ին:



National Geographic-ի լուսանկարիչ Ջոն Սթանմէյրը, իր քսանամեայ փորձառութիւնը աշխարհի ամենանշանաւոր հրատարակութիւններէն մէկուն, բաժնեկցեցաւ և խորհուրդ տուաւ անձնական հրատարակչութեան մասին համացանցի միջոցով:



2016-ին Երեւանի ՀԲԸՄ-ը հիւրընկալեց համաժողով մը «Ցեղասպանութենէն ետք. կոտտացող վերքէն մինչև վերածնունդ» վերնագրով: Այս համագումարը ի մի բերաւ միջազգային հետազօտողներ և գործունէաներ, որոնք միացած էին իրենց յանձնառութեամբ փաստագրելու տեսակի տարողութիւնը անցեալի և ներկայի գեղասպանութեանց մէջ:



Յատուկ Ծրագիրներ Հայաստանի Մեջ

ՀՀԸՄ-ի Հայ Կին Յղի Կանանց Կեդրոններ

2016-ին եւ 2017-ին աւելի քան 200 ծնունդներ կատարուեցան օժանդակութեամբ ՀՀԸՄ-ի Հայ Կին Յղի Կանանց Կեդրոններուն, Հայաստանի տարածքին: Վերոյիշեալ տարիներուն կեդրոնները ընդարձակեցին իրենց ծառայութիւնները, աւելցնելով ատամնաբու առողջութեան եւ սննդականոնի դասընթացքներ նոր մայրացածներուն եւ անոնց երախաներուն համար: Հայ Կին Համախմբումը կեդրոն ունենալով Լոս Անճելըսը, Հայաստանի մէջ կը հովանաւորէ հինգ կեդրոններ Վանաձորի, Թալինի, Եղվարդի, Չարենցաւանի եւ Երեւանի մէջ:



ՀԲԸՄ-ի Հայորդեայց Կեդրոններ

2016-ին եւ 2017-ին մօտ 1.700 աշակերտներ հետեւեցան արտադպրոցական յայտագիրներուն, կեդրոն ունենալով Նորքի եւ Մալաթիայի Կեդրոնները: Նորքի Մանկական Կեդրոնէն կարգ մը աշակերտներ ընտրուեցան ներկայացնելու համար ՀՈԳԻՄ-ը, որուն անդրանիկ ելոյթը եղաւ Նիւ Եորքի մէջ 2016-ին, Միութեան 110-ամեակին առթիւ:



ՀԲԸՄ-ի Ճաշարանները

Այս Ճաշարանները, որոնք Հայորդեայց Կեդրոններու մէջ կը գործեն, տաք եւ սննդարար ճաշ կը մատուցանեն շաբաթը 6 օր, 600 շքանոր տարեցներու:

Հայաստանի Ամերիկեան Համալսարանը

2016-ին եւ 2017-ին ալ ՀԲԸՄ-ը շարունակեց իր հիմնական նիւթական աջակցութիւնը, օժանդակելով Համալսարանին եւ քաջալերելով հաստատութիւնը, որ կրթաթոշակներ տրամադրէ ուսանողներուն նախաշրջանաւարտութեան եւ յետշրջանաւարտութեան երկու մակարդակներով: Արցախի մէջ ՀԲԸՄ-ը օժանդակութիւններ տրամադրեց Կրթական Շարունակական Ծրագիրին, ՀԱՀ-ի հեռակայ դասընթացքներուն ընդմէջէն, որ վեց մակարդակի անգլերէն լեզուի ուսուցման եւ կառավարման ու ղեկավարման վկայականներ կը շնորհէ, ինչպէս նաեւ զբօսաշրջութեան եւ հիւրընկալութեան հմտութեան, կանանց զարգացումի ղեկավարութեան եւ որոշում գոյացնելու գծով: 1991-ին իր հիմնադրութեան օրէն, ՀԱՀ-ը գործած է այս օգնութեամբ, ուսանողները աւելի բարձր ուսման ընդունելի դարձնելու համար:

Միջոցառական ճատրակի Մրցաշարքեր

ՀԲԸՄ-ը կը շարունակէ օժանդակել հանրապետութեան ամենամեայ դպրոցական ճատրակի մրցաշարքերուն Հայաստանի եւ Արցախի տարածքին, ի մի բերելով 15.000 աշակերտներ 1.500 դպրոցներ:

2016-ին եւ 2017-ին յաջորդաբար 24 եւ 300 յաղթողներ եղան, իսկ զանոնք պատրաստող դպրոցները նուերներ ստացան ՀԲԸՄ-էն:



ԹՈՒՄՕ x ՀԲԸՄ կեդրոններ ստեփանակերտի եւ ԳԻՄՐԻԻ մէջ

2016-ին ԹՈՒՄՕ x ՀԲԸՄ ստեղծագործական ճարտարագիտութեան նոր կեդրոնը իր բացումը կատարեց Արցախի երիտասարդութեան առջեւ, տրամադրելով 22 աշխատարաններ 600 աշակերտներու:

Ծրագիրը կ'ընդգրկէր դասընթացքներ քարթուն ֆիլմեր պատրաստելէն, մինչեւ ծրագրաւորում, առաւել սորվելու եօթը գիտաշխատանոցներ, հիւր դասախօսներով աշխարհի զանազան երկիրներէն, ինչպէս՝ Հայաստան, Ֆրանսա, Իտալիա, Ռուսիա, Սպանիա եւ Միացեալ Նահանգներ: ԹՈՒՄՕ-ի գիտաշխատանոցները հիւրընկալեցին նաեւ երեք փորձագէտ եւ ուսուցիչ ԼՈՅՍ հիմնադրամէն: 2016-ի Ապրիլեան պատերազմին կեդրոնը վերածուեցաւ լրագրողներու համար աղբիւրագիտական կեդրոնի: Մօտաւորապէս 1.200 աշակերտներ արձանագրուած էին երկու տարիներու ընթացքին:

2016-ին ԳԻՄՐԻԻ ԹՈՒՄՕxՀԲԸՄ-ը տրամադրեց 52 մայրոն աշխատարաններ 2.000 աշակերտներու համար, ինչպէս նաեւ սորվեցնելու ինը գիտաշխատանոցներ, աշխարհի զանազան կողմերէն հիւր ուսուցիչներով: Յաջորդ տարի 2.000 աշակերտներ արձանագրուեցան կեդրոնին մէջ:

Երեւանի ՀԲԸՄ-ի Սկաուտները

2016-ին եւ 2017-ին հայ տղաք եւ աղջիկներ մասնակցեցան սկաուտական ձեռնարկներուն, ինչպէս բանակում, արշաւներու եւ այլ գործունէութիւններու, որոնք Երեւանի սկաուտներուն առջեւ կը բանան բնութիւնը: Անոնց առիթ տրուեցաւ որ կարենան շահիլ 150 կրծքանշան:



Ընդարձակել ՀԲԸՄ-ի Դրոշմը Հայաստանի Մեջ

Իր ծառայություններուն բազմազոր պահանջներուն գոհացում տալու համար ՀԲԸՄ-ը թե՛ ամրապնդեց իր աղբյուրները եւ թե՛ ընդարձակեց իր տեսադաշտը, արդիականացնելով իր ներկայ ծրագիրները եւ նախաձեռնելով նորերը, նպատակ ունենալով բարելաւել Հայաստանի ընկերա-տնտեսական վիճակը, հարստացնելով համայնքային կեանքը, աւելցնելով տեղական հասարակական կարողականությունը եւ հոգ տանելով ՀԲԸՄ-ի ծրագիրներու Մփիւռքի մասնակիցներուն: Այս ճիգերը կարօտ էին Միութեան Երեւանի կեդրոնի պաշտօնէութեան թիւի աւելացումին եւ գործընթացի ծաւալի ընդլայնումին, ինչպէս նաեւ լրիւ օգտագործումին Վահէ Կարապետեան կեդրոնի 35.000 քառ. ոտք ընդհանուր տարածութեան 5.500 քառ. ոտք տարածքին, որուն որպէս հետեւանք Հայաստանի ՀԲԸՄ-ը ինքզինք հաստատեց որպէս գործունէ կեդրոն ստեղծագործական եւ ընկերային գործունէութեան, հիւրընկալելով, կազմակերպելով եւ մասնակի մեկենաս դառնալով յատուկ ձեռնարկներու, կիրառելով կրթական, մարդասիրական օժանդակութեան եւ ընկերա-տնտեսական զարգացման ծրագիրներ:

Բարենպաստակ Տարածք Ստեղծագործական Փոխադարձ Ներգործութեան

Հայաստանի ՀԲԸՄ-ի գեղեցիկ լսարան-ցուցադրասրահը հռչակ շահեցան, որպէս կենսունակ կեդրոն Երեւանի ստեղծագործ համայնքին: Բազմամակարդակ այս հաւաքավայրը կարելի դարձուց որ ան հիւրընկալէ 100 մշակութային միջոցառում 2016-2017 տարիներուն միայն: 30 համերգ, 28 ֆիլմի ցուցադրութիւն, 20 եւ աւելի վարպետաց դասընթացներ, հիւր դասախօսութիւններ, արուեստի ցուցահանդէսներ, յատուկ ներկայացումներ, բանավեճ-քննարկումներ, համագումարներ եւ այլ ձեռնարկներ գաղափարներու եւ տաղանդներու: Մօտ 15.000 այցելուներ օգտուեցան այս ժողովրդային բաց միջոցառումներէն:

Այս ընթացքին Հայաստանի ՀԲԸՄ-ը հպարտ էր օգնելու որ վերակենդանանայ մտաւոր եւ մշակութային հետաքրքրութիւնը ներկայ եւ գալիք սերունդներուն, որոնք կը փափաքին կապ հաստատել արտաքին աշխարհին հետ, բաժնեկցելով իրենց սեփական ազգային ժառանգութիւնը, արտասահմանի իրենց նման մտածող ընկերներու հետ:



2017-ին Հայաստանի ՀԲԸՄ-ի BRIDGE for CSOs ծրագիրը հիւրընկալեց Ֆրանսական օփերայի երեկոյթ մը: Ձեռնարկը կազմակերպուած էր Պահապան Հիմնադրամի կողմէ, օժանդակութեամբ Երիտասարդ Արուեստագէտներու Օփերայի ծրագրի երգիչներուն:

ՀԲԸՄ-ի Վահէ Կարապետեան Կեդրոնը

Միութեան Վահէ Կարապետեան Կեդրոնը հասաւ իր լրումին, գործունէութեան իր երկրորդ տարին, ոչ միայն կեցութեան վայր ապահովելով Հայրենիք այցելող սփիւռքահայ պատանիներու խումբերուն, այլեւ պատերազմէն փախուստ տուած Սուրիահայ ապաստանեալներու որպէս օժանդակութիւն բաժնելու կեդրոն: 2017-ին Քլոտիա Նազարեան Բժշկական Կեդրոնը բացաւ իր դռները բժշկական անվճար օժանդակութիւն եւ խորհրդատուութիւն ներկայացնելով սուրիահայերուն, սրտաբանական, կանացի հիւանդութեանց, մանկաբուժական եւ ակնաբուժական մասնագիտութիւններու ճամբով:



ՀԲԸՄ-ի հովանավորած Ծրագիրները եւ նախագիծերը Հայաստանի եւ Արցախի մէջ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԲԸՄ Հայաստանի Սկաուտներ
Հայաստանի Ամերիկեան Համալսարան
Հայկական Համացանցային Համալսարան
Քրտիա Նազարեան Դարմանատուն
Մանկական Կեդրոններ (3)
Մարդասիրական Շտապ Օգնութիւն Սուրիահայութեան
Մարդասիրական Ծրագիրներ
Հայ Կին Յիւսիս Կանանց Կեդրոններ (5)
Միջ-դպրոցական ճատրակի Մրցաշարք
Տարեցներու ճաշի Կեդրոններ (3)
ԹՈՒՄՕ x ՀԲԸՄ Գիւմրի
Կանանց Հզօրացում
Երեւանի Պետական Համալսարան (ԵՊՀ)
Երիտասարդ Արհեստավարներ, Երեւան

ՄՓԻՌՔԻ ԵՐԻՏԱՄԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Անդրանիկ Սկաուտական Բանակում
Երաժշտական Հայաստան Ծրագիր
Երեւանի Ամառնային Ասպարեզային Փորձառութեան Ծրագիր
Բացայայտ Հայաստանը Ծրագիր
Կենաց Հող

ԱՐՑԱՆ

ՀԱՀ-ի Շարունակական Ծրագիր
ԹՈՒՄՕ x ՀԲԸՄ Ստեփանակերտ
Մարդասիրական Օգնութեան Ծրագիր
Արցախի Մենեկային Նուագախումբ
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցի-Մարտակերտ (նպաստ):

ՄԵԾ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Ս. Էջմիածին-մոմավառութեան մատուցող կառուցում
Ս. Էջմիածին-Կաթողիկէ
Ս. Էջմիածին-Գանձատուն
Ս. Էջմիածին-Նպաստներ
Ս. Էջմիածին- Հին Վեհարանի Վերանորոգում
Ս. Էջմիածին-Հայրապետական հիմնադրամ քահանայական զարգացման
Ս. Էջմիածին- Դպրատուն
Ս. Էջմիածին-Եկեղեցականներու օգնութիւն
Ս. Էջմիածին- Տարեցներու բնակարաններ
Ս. Էջմիածին- Վաղարշապատի Մանկական Կեդրոն
Ս. Էջմիածին- Վանաձորի Մանկական Կեդրոն եւ տարեցներու ճաշարան
Իզմիրլեան Հիւանդանոց (Նախկին Ս. Ներսէս Հիւանդանոց)
Վազգէնեան Աստուածաբանական Հոգեւոր Ճեմարան

ՅԱՏՈՒԿ ՆՊԱՍՏՆԵՐ

Արարատի շրջան, Մանկապարտէզի նորոգում, Մարզ գիւղ
Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիք Նուագախումբ
Armenia Now
ԱՅԲ դպրոց
Մշակութային ծրագիրներ եւ փառատօներ
Կրթական յառաջացում, բանակի ուսանող զինուորներու
Գիւմրիի Ծրագիր, Յոյս հիմնադրամ
Impact hub
Բուժօգնութիւն երախաներու
Մերոնք, Հեռատեսիլային յայտագիր
Նոր Այնթապ դպրոց #2, Արարատի մարզ
Նուիրի Կեանք կազմակերպութիւն
Բենիամին Ժամկոչեան դպրոց
Reimagine Armenia, Կրթական եւ ճարտարագիտական վերածնունդ
Հանգստեան Տուն, Երեւան
Դասաւանդէ Հայաստանի համար
Հայաստանի Ֆրանսական Համալսարան
UWC Դիլիջանի գոլէճ

ՎԵՐԱՆՈՐՈՂՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ ԳՈՐԾԱԿՑԱԲԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍՄԻ

Արագածոտնի մարզ, Օհանաւան գիւղ
Վերանորոգում

Արարատի մարզ, Նոր Ուղի գիւղ
մանկապարտէզի նորոգում

Արարատի մարզ, Արովեան գիւղ
մանկապարտէզի նորոգում

Կոտայքի մարզ, Մարմարիք գիւղ
նորոգում ջրամատակարարման գիծերու

Շիրակի մարզ, Արեւիկ գիւղ
մանկապարտէզի նորոգում

Շիրակի մարզ, Այգաբաց գիւղ
մանկապարտէզի նորոգում

Շիրակի մարզ, Գեղամաւան գիւղ
մանկապարտէզի շէնքի նորոգում

Շիրակի մարզ, Հայկաձոր գիւղ
դպրոցի նորոգում

Շիրակի մարզ, Լեռնակերտ գիւղ
նորոգում ջրամատակարարման արտաքին գիծերու

Սիւնիքի մարզ, Ախլաթեան գիւղ
նորոգում ջրամատակարարման համակարգի

Սիւնիքի մարզ, Գորիս քաղաք
վերակառուցում Մէրո Խանգատեան տուն-թանգարանի

Սիւնիքի մարզ, Թէջ գիւղ
վերակառուցում համայնքային կեդրոնի

Սիւնիքի մարզ, Նորաւան գիւղ
նորոգում ջրամատակարարման գիծերու

Տաւուշի մարզ, Կարմիր Աղբիւր գիւղ
վերակառուցում համայնքային կեդրոնի

Տաւուշի մարզ, Պողաւան գիւղ
դպրոցի նորոգում


Σ.Ρ.Ε.Υ.-ΣΤΡΩΜΜΑΤΕΣ 2016-2017



ՀԲԸՄ ՇՐՋԱՆՆԵՐ

ԽԹԱՆԵԼ ՍՓԻՒՌՔԻ ՀԱՅ

ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ



Ժամանակի գերիշխող հիմնական մշակութային հոսանքներուն ազդեցութեան տակ՝ հայկական ոգին կենսունակ պահելը սփիւռքահայ իւրաքանչիւր սերունդի մարտահրաւերն է եւ ՀԲԸՄ-ի նպատակը եղած է մէկ դար շարունակ:

Մեկնակէտ ընդունելով այն համոզումը, որ ինքնութեան կայացումը եւ մշակութային ընկալումները կ'արմատաւորուին տեղական համայնքային մակարդակի վրայ, ՀԲԸՄ-ը Շրջանակները, Յանձնաժողովները եւ Մասնաճիւղերը կը խրախուսէ մշակելու իրենց ստեղծագործական մտեցումները մեր հարուստ մշակոյթը վերհանելու, առաջնորդներու յաջորդ սերունդ կոփելու եւ անոնց յատուկ կարիքները բաւարարելու նպատակով, միութենական ծրագիրներու և նախաձեռնութիւններու միջոցով:

2016 եւ 2017 տարեշրջաններու ընթացքին ՀԲԸՄ հինգ շրջաններու մէջ սփռուած բազմաթիւ մասնաճիւղեր իրենց ժամանակացոյցը յագեցուցած էին անդամներու համար ստեղծուած ամենատարբեր առիթներով՝ վերահաստատելու իրենց հաւատարմութիւնը իրենց անգին ասանդոյթներուն հանդէպ, զգալու մէկ եւ միեւնոյն ամբողջութեան պատկանելու իրողութիւնը, եւ ի ցոյց դնելու հայ կեանքի մշակութային, մտաւորական եւ ընկերային բովանդակ հարստութիւնը, առանց անտես առնելու իրենց շրջակայ հանրութեանց համայնական կեանքին գործուն մասնակցութիւն բերելու քաղաքացիական նախանձախնդրութիւնը:



ԱՓՐԻԿԵ ԵՒ ՄԵՐՉԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔ



Մեր Միության հիմնադրության օրրան Եգիպտոսի համայնքները՝ Գահիրեի, Ադեքսանդրիայի և Հելիոպոլիսի մէջ, Հայ պատմության, մշակոյթի և հարուստ ժառանգության վերհանման բազում առիթներ ունեցան 2016-ի և 2017-ի ընթացքին: Իւրայատուկ նշանակութիւն ունեցան Գահիրեի Մասնաճիւղի 110-ամեակի առիթով 2016-ին կազմակերպուած ձեռնարկները, որպէս ՀԲԸՄ առաջին մասնաճիւղի պատմութեան գրաւական: Յաջորդ տարին վկան եղաւ այդ յոբելէական տօնախմբութեան ընդլայնման, ՀԲԸՄ Գահիրեի մասնաճիւղի Օիաձան Մանկական Երգչախումբի ներկայի և անցեալի անդամներու մասնակցութեամբ կազմակերպուած համերգով, անգամ մը եւս ՀԲԸՄ համաշխարհային ընտանիքը հարստացնելով այս պատմական մասնաճիւղի ձեռքբերումներու աւանդով:

Կրթական մարզին մէջ 2016-ին և 2017-ին Հայկական Համացանցային Համալսարանը տուաւ իր առաջին շրջանաւարտները և լաւագոյն ուսանողներուն մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցաւ Եգիպտահայ Լաւագոյն Ուսանողներու պարգեւատուութեան հանդիսութեան ընթացքին, որ տեղի ունեցաւ Գահիրեի Նուպար ակումբին մէջ: Մասնաճիւղը շարունակեց հաղորդակից ըլլալ համայնքին և ուսուցողական առիթներ ստեղծել: Գահիրեի ՀՄԸՄ-Նուպար ակումբին մէջ կազմակերպուեցաւ ճատրակի մրցաշար մը, հրատարակուեցաւ պատմագիտական եօթհատորեակի երրորդ «Հայերը և Հայաստանը Արաբական Մամուլին Մէջ 1876-1923» հատորը, և տեղի ունեցաւ Յարութիւն Գեորգեանի «Հայկական Ցեղասպանութիւնը» հատորի ներկայացման հանդիսութիւնը:

Մտաւոր հետաքրքրութիւններու այս շրջանակները ամբողջացան դասախօսական շարքով մը: Դոկտ. Նայիրի Համբիկեան ելոյթ ունեցաւ «Ամենահոբէր Գ.» -ի մասին, Հելիոպոլիսի մէջ, Բաֆֆի Պետրոսեան՝ «Կրօնափոխ հայերու Վերադարձը Իրենց Արմատներուն», իսկ Դոկտ. Հերմին Վարժապետեան՝ «Ինքնագիտակցութիւն»-ի մասին:



Պաղտատի ՀԲԸՄ կեդրոնը 2016-ին և 2017-ին իրաքահայութեան համար բարեկամութեան և համայնքային կեանքի հիւրընկալ օձախ մը հանդիսացաւ: Այս տարիներուն ընթացքին համայնքի վերակերտման ուղղուած ընկերային և մշակութային գործունէութիւն ծաւալուեցաւ հետեւողական կերպով՝ անպաշտօն հանդիպումներ, ընտանեկան հաւաքներ և դաշտագնացութիւններ, շաբաթօրեայ պինկօ երեկոյթներ և ճամբարներ: Ջերմ ու սերտ այս համայնքը նաեւ ի մի եկաւ յատուկ առիթներով, ինչպիսիք էին Կոմիտասեան ոգեկոչման հանդիսութիւնը, և ճաշկերոյթը, Միջազգային Կանանց Օրուան նուիրուած համերգը՝ Իրաքի Ազգային Միմֆոնիք Նուագախումբի կատարմամբ, դաշնակահար Դոկտ. Ահմէտ Մահմուտի մենահամերգը, և Մոսուլի մէջ իրաքեան զօրքերու տարած յաղթանակներուն և իրաքցի ու իրաքահայ զոհուած զինուորներու յիշատակին նուիրուած Ժողովրդական Բանաստեղծութեան եզակի փառասօնը և Հաճնոյ հերոսամարտի 96 և 97 ամեակներուն առիթով հերիսայի հացկերոյթները:



ՀԲԸՄ Իրաքի Տիկնանց Յանձնախումբը հայկական մշակութային ձեռնարկ մը կազմակերպած էր . Դեկտեմբեր 2, 2016:

ՀԲԸՄ-ի ամենամեծ եւ ամենահին կառոյցներէն մէկը հանդիսացող Լիբանանի Մասնաճիւղը շարունակեց հետեւիլ պէտքերու հանրութեան զարկերակին: Մասնաճիւղը կը ծառայէ ոչ միայն Պէյրութի եւ շրջակայից հայութեան, այլեւ՝ Լիբանանին սահմանակից հայ համայնքներու, որոնք կապեր ունին լիբանանահայութեան հետ: 2016-ի եւ 2017-ի ընթացքին կազմակերպուեցան համայնքի համար շահեկան միջոցառումներ՝ պատանիներու եւ երիտասարդներու համար. հայեցի կրթութեան ապահովում, սկաուտական գործունէութիւն, ամառնային ճամբարներ եւ այլ՝ ինքնութեան հաստատման միտուած ձեռնարկուեցան: Յատկապէս կարեւոր էին երիտասարդութեան ուղղուած միջոցառումները, ինչպէս մանկապատանեկան արուեստանոցի հիմնադրումը եւ դպրոցական ցանցի թուային հիմնաւոր վերազինումը: Իրրէ FOCUS-ի հիւրընկալ մասնաճիւղ, նկատելի էր Լիբանանի կառոյցի հիւրասիրութիւնը աշխարհի բոլոր ծագերէն ժամանած ընկերներու հանդէպ: Ձուգահեռաբար, Լիբանանի մասնաճիւղը կազմակերպեց իր հերթական ամենամեծ ձեռնարկները, ինչպէս տարեկան արիւնատուութեան արշաւը, պարային, թատերական եւ երաժշտական ելոյթներ, դասախօսութիւններ եւ գրական երեկոյթներ:

2016-ին ՀԲԸՄ-ի Անդրանիկ Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւնը նախաձեռնեց «Հ.Բ.Ը.Մ.ը եւ ՀԵԸ-Անդրանիկ-ը Լիբանանի մէջ-Համատեղ Ակնարկ» արխիւային նիւթերու հաւաքածոն, ուր ամփոփուած են հիմնադրութեան օրուրէն սկսեալ ՀԲԸՄ-ի եւ ՀԵԸ-ի գործունէութեան հիմնական հանգրուանները: Հաւաքածոն կազմուած է խմբագրուած է ՀԵԸ-ի Գործադիր Տնօրէն Գեորգ Սանթրուբեանի գլխաւորութեամբ, Շահէ Խաչատուրեանի եւ Արմէն Իւրնէշլեանի օժանդակութեամբ, եւ Սեւակ Սերոբեանի թեքնիք վերահսկողութեամբ: Աւելի քան 200 ներկաներ խոնուած էին ՀԲԸՄ Տեմբրեան Կեդրոնի Ասպետներ հանդիսարահին մէջ, ուր կայացաւ այս ձեռնարկումին ամբողջացումը նշող երեկոյթը, որ կը համընկնէր նաեւ համապատասխանաբար ՀԲԸՄ-ի 110- րդ եւ ՀԵԸ-ի 85-րդ ամեակներուն:

Նոյն տարուան ակնառու ձեռնարկներու շարքին պէտք է դասել արուեստի ցուցահանդէսը եւ աճուրդը՝ ի նպաստ տեղական երիտասարդական ծրագիրներու, որ տեղի ունեցաւ Le Yacht Club-ի մէջ, Zaitunay Bay, Պէյրութ, եւ ի մի բերած էր համաշխարհային հոշակ վայելող հայ արուեստագէտներու ամենատարբեր ժանրեր ներկայացնող մի քանի տասնեակ գործեր: Երաժշտական ձեռնարկներէն յիշելի է լիբանանահայ հանրայայտ երգահան Պօղոս Ճէլալեանի յիշատակին նուիրուած երեկոն, կազմակերպուած՝ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատան համագործակցութեամբ, հովանաւորութեամբ Լիբանանի Մշակոյթի Նախարար Ղաթթաս Խուրիի: Ձեռնարկը մաս կը կազմէր “Mois de la Francophonie”-ի միջոցառումներուն: Նմանօրինակ ձեռնարկ մըն էր նաեւ Լիբանանի մէջ հայկական ճարտարապետութեան ունեցած ազդեցութեան նուիրուած դասախօսութիւնը, ֆրանսերէն լեզուով, որ պատրաստած էր Այնճարի Համաշխարհային Ժառանգութեան Հնագիտական Կայքի խնամակալ Ռաֆֆի Չերչեան: Դասախօսութեան նիւթն էր «Հայկական ճարտարապետութիւնը Լիբանանի Մէջ. Ինքնութեան Հարց»:

Լիբանանի ՀԲԸՄ-ի արուեստասեր համբաւին համահունչ՝ 2016-ի հիմնադրուեցաւ նաեւ ՀԲԸՄ գեղարուեստի կեդրոնը, ուր պիտի թրծուի հայ արուեստագէտներու վաղուան սերունդը: Նախատեսուած՝ 4-12 տարեկան մանուկներու համար, այստեղ կ'ուսուցանուին գծելու եւ նկարչութեան սկզբունքները, ձեռային աշխատանք, կաւագործութիւն, գունապակիներու եւ դիմակներ պատրաստելու արուեստները: ՀԲԸՄ Վահրամ Փափագեան Թատերախումբի կատարմամբ թատերասեր հասարակութեան դատին յանձնուեցաւ թատերգութիւններու շարք մը՝ «Առանց Տարատի Անձնասպանը», «Հայոց Հովիկ» եւ «Սառնարան, Դրամ, Փախուա»:



ՀԵԸ-ի 85-րդ յոբելեանին ներկայ էին մեծայարգ հիւրեր, ներառեալ՝ ՀԲԸՄ Նախագահ Պերճ Սեդրակեան, Լիբանանի մէջ Հայաստանի Դեսպանը՝ Սամուէլ Մկրտչեան, Լիբանանահայոց Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան եւ ուրիշներ:



ՀԲԸՄ նորակառոյց արուեստանոցը մանուկներուն առիթ կ'ընծայէ արուեստով ներշնչուելու եւ արուեստներու պատմութեան եւ սկզբունքներուն ծանօթանալու:

Ուրիշ կարևոր հանգրուան մը կրթական ասպարեզին մէջ ՀԲԸՄ Լիբանանի դպրոցներու “iPad Learn” Օրագիրն էր, համագործակցութեամբ EDUVATION (Education Innovation) School Network ցանցին: Նպատակադրուած ըլլալով մինչեւ 2023 էլեկտրոնային գրականութիւն եւ համապատասխան փոխգործող ճարտարարուեստներ ներառել մանկավարժական գործընթացի մէջ, դպրատներու տեղեկատուական ճարտարուեստի ենթակառուցուածքները ամբողջովին թարմացուեցան ի պատրաստութիւն այս փոփոխութեանց:

Լիբանանի պետական քննութիւններուն մէջ բարձր արդիւնքներ ապահոված 28 հայ աշակերտներէն 9-ը Դարուհի Յակոբեան Երկրորդական Վարժարանի աշակերտներ էին: 15 հայկական դպրոցներէ եկած 98 աշակերտներ մասնակցեցան միջ-դպրոցական ասմունքի եւ գծագրութեան մրցոյթին, որ կազմակերպուած էր «Խօսակ» ամսագրի կողմէ:

2016-ին ՀԲԸՄ-ի Լիբանանի Երջանակը Միութեան Կեդրոնին մէջ ընդունելութիւն մը կազմակերպեց ի պատիւ Լիբանանի մէջ Հայաստանի նորանշանակ դեսպանին: Ընդունելութեան ներկայ էին պաշտօնական այրեր եւ բարձրաստիճան պաշտօնէաներ:



2016 եւ 2017 թուականները խառնակ եւ աղետալի տարիներ էին, որ Հալէպի, Քամիշլիի եւ Լաթաքիոյ հայութեան համար փորձութեան տարիներ եղան Սուրիոյ մէջ ծաւալուող հակամարտութեան եւ բռնութեանց պատճառով: Տեղական մասնաճիւղերու ուշադրութիւնը բնականաբար սեւեռուած էր վիրաւորներու եւ ընտանիքներու մարդասիրական կարիքները հոգալու վրայ, բայց եւ այնպէս բնականոն կեանքի նմանակութեան խիզախ ճիգով մը անոնք փորձեցին անդրադառնալ մահաբեր միջավայրի մէջ յայտնուած մանուկներու եւ պատանիներու կարիքներուն:

ՀԲԸՄ Կիւլլայի Կիւլպէնկեան եւ ՀԲԸՄ Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան դպրոցները անյողորդ կերպով շարունակեցին պատրաստուիլ ՀԲԸՄ 110-ամեակի եւ Կիւլլայի Կիւլպէնկեան Դպրոցի ամավերջի հանդէսին, յօգուտ աշակերտներու, ծնողաց եւ բարեկամներու: Լաթաքիոյ մէջ համայնքի առջեւ ելոյթ ունեցան ՀԲԸՄ Լաթաքիայի Գարուն Մանկական Երգչախումբը եւ Հալէպի Պետրոս Աղամեան Թատերախումբը, որոնց ելոյթները, ի շարս այլ ձեռնարկներու, բարձրացուցին համայնքի անդամներու ոգեկանութիւնը:

ՆՇԱՅԱՐԵՐ

Անդրանիկ Երիտասարդաց Ընկերակցութիւն
Պէյրութ, Լիբանան
85-ամեակ (2016)

Հայագիտական Շարաթրեայ Վարժարան ՀԲԸՄ Տէմրճեան Կեդրոն
Պէյրութ, Լիբանան
20-ամեակ (2017)

ՀԲԸՄ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՓՐԻԿԷԻ ԵՒ ՄԻՋԵՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԵՋ

ԵԳԻՊՏՈՍ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՄՈՒՄԲ՝ ԱՂԵՔՍՏԱՆԴԻՍ՝

Երիտասարդաց (ՀՄԸՄ Նուպար Մարգական Ակումբ)

ԳԱՉԻՔ՝

Տեղեկատու Եռամսեայ

Օրաձեռն Մանկական Երգչախումբ

Երիտասարդաց (ՀՄԸՄ Նուպար Մարգական Ակումբ)

ՀԵԼԻՓՈՒԼԻՍ

Երիտասարդաց (ՀՄԸՄ Նուպար Մարգական Ակումբ)

ԵԹՈՎՊԻՍ

ԱՏԻՍ-ԱՂԱՂԱ՝

ԻՐԱԳ

ՂԱՂՏԱ՝

Երջանիկ Թաճիրեան Ամառային Դպրոց

ԼԻԲԱՆԱՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՄՈՒՄԲ՝

ԱՄՆԱՌՍ/ԱՐԹԻՒԼԱՍ/ՊԵՅՐՈՒԹ/ՍԻՒԷԼ-ՏԻ/ՁԱՂԷ՝

Ասպետներ

ՀԵԸ Անդրանիկ

ՀԵԸ Արիս Պարախումբ

ՀԵԸ Լիբանանի էլեկտրոնային Լրատու

Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան Տէմրճեան Կեդրոն Հայագիտական Շարաթրեայ Վարժարան Տէմրճեան Կեդրոնի ճամբար

Խօսակ Ամառգիր

Լեւոն Կ. Նազարեան Վարժարան

Դարմանատուներ

Թարուհի-Յովակիմեան Վարժարան

Վահրամ Փափագեան Թատերախումբ

Երիտասարդական (ՀԵԸ Անդրանիկ Մարգական,

Սկստական եւ Երիտասարդաց Խումբեր)

Երիտասարդ Արիեստավարժներ – Լիբանան

ՍՈՒՐԻՍ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՄՈՒՄԲ՝

ՀԱԼԷՊ՝

Արամ Խաչատուրեան Երաժշտանոց

ՀԵԸ Անդրանիկ Պարախումբ

ՀԵԸ Նուզգախումբ

ՀԵԸ Փողեարխումբ

ՀԵԸ Սպենդիարեան Երգչախումբ

ՀԵԸ Պետրոս Աղամեան Թատերախումբ

Կոմիտաս Սենեկայի Նուզգախումբ

Հայեցք Եռամսեայ

Լազար Նաճարեան-Գալուստ

Կիւլպէնկեան Վարժարան

Փունջ Մանկական Պարախումբ Մարտիրոս Սարեան Ակադեմիա

ՂԱՄԱՍԿՈՍ՝

Կիւլլայի Կիւլպէնկեան Վարժարան

Հայ Ամառ Ամառային Վարժարան

Երամ Լրատու

Երիտասարդաց (ՀԵԸ Արագած)

ՔԱՄԻՇԼԻ՝

Ամառային Վարժարան

Երիտասարդաց (ՀԵԸ Սկստուներ)

ՔԷՍԱՊ՝

Քեսապ ճամբար

ԼԱԹԱՔԻՍ՝

Գարուն Մանկական Երգչախումբ

ԹՈՒՐԿԻՍ

ԻՍԹԱՂՈՒԼ

ՄԻ (գործընկեր)

ՄԻԱՑԵԱՆ ԱՐԱՐԱԿԱՆ

ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՈՒՊՑ՝

Երիտասարդ Արիեստավարժներ—

Տուպայ

Վրջ նշէ Երջանակային կամ մասնաճիւղի Վարչութեան առկայութիւնը:



ԱՒՍՏՐԱԼԻԱ



Մելպուռն

Մելպուռնի ՀԲԸՄ համայնքի կեանքը յատկանշուած է հիւրընկալութեամբ եւ բազմազանութեամբ: Աւելի քան երեսուն տարի այս Մասնաճիւղը մշտապէս եղած է ջերմ օճախ մը նորեկներու, տարեցներու, ընտանիքներու, երիտասարդներու, ինչպէս նաեւ մեծայարգ հիւրերու համար: Թէ՛ 2016-ի եւ թէ՛ 2017-ի ընթացքին մեծաթիւ առիթներ ներկայացան նոր կապեր ստեղծելու, բարեկամութիւններ հաստատելու, համատեղ ժամանցի, խաղերու, գինի համտեսելու եւ այլն:

Ոսկեայ Տարիներու հաւաքներ՝ տարեցներու համար, շաբաթական ընտանեկան երեկոներ տնային ճաշերու ընկերակցութեամբ, Մելպուռնի Բաժակի ընտանեկան դաշտագնացութիւն, գինիի եւ նախուտեստներու երեկոներ, բոլորը կը նպաստեն ջերմ, սիրալիք եւ սերտ յարաբերութիւններու մթնոլորտի ստեղծումին: 2016-ի յիշարժան առիթներէն էին Աւստրալիայի Օրուան առիթով իրաքահայ եւ սուրիահայ փախստականներուն բարի գալուստ մաղթելու հանդիպումը, ՀԲԸՄ երիտասարդաց ձեռնարկները եւ Հայ Մշակոյթի Երեկոները: Յաջորդ տարուան յիշելի երեւոյթներէն էին ՀԲԸՄ Ալեքսանտր Դպրոցի կազմակերպած Հայ Մշակոյթի Օրը, որուն ներկայ էին աւելի քան հազար մասնակիցներ, ՀԲԸՄ Մելպուռնի Յակոբ Պարոնեան Թատերախումբի ելոյթը եւ Փրոֆ. Փիթըր Պալաքեանի եւ Արմէն Մարսուպեանի մասնակցութեամբ օգտաշատ երեկոն:

Միտնի

Մելպուռնէն 400 մղոն այն կողմ, Միտնիի ՀԲԸՄ-ի Մասնաճիւղը իր հերթին իրականացուցած է նշանակալի ծրագիրներ: ՀԲԸՄ Դասախօսական Երեկոներու շարքը, որ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ, ներկայացուցած է Դոկտ. Հրայր Ճէպէճեանի, Փրոֆ. Փիթըր Պալաքեանի ու Արմէն Մարսուպեանի, Լուրան Զորլուի եւ Սասուն Գրիգորեանի դասախօսութիւնները կամ ելոյթները:

Այս գործունեայ Մասնաճիւղը, բազմաթիւ տարատեսակ ձեռնարկներէ բացի, կազմակերպեց նաեւ Մայրերու Օրուան համերգ, Ամալերջի Դպրոցական համերգներ՝ թէ՛ ՀԲԸՄ Մանուկեան Շաբաթօրեայ Վարժարանի եւ թէ՛ ՀԲԸՄ Ալեքսանտր Ամենօրեայ Դպրոցին մէջ, ինչպէս նաեւ ՀԲԸՄ Միտնիի Թամզարա Պարախումբի անդրանիկ ելոյթը, Մարզական Կալա Երեկոյթ, Նաւարկութիւն եւ ընդունելութիւն ի պատիւ Սայեաթ Նովա համոյթին:



Մեպտեմբեր 4, 2016-ին Մելպուռնի Մասնաճիւղի հիւրը եղաւ տնօրէն Պարէտ Մարոնեան, իր վավերագրական ֆիլմին՝ 'Women of 1915-ի դիտումին առիթով:

ՀԲԸՄ ՆԵՐԿԱՅՅՈՒԹԻՒՆԸ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՄԷՋ

ԱՒՍՏՐԱԼԻԱ
ՄԵԼՊՈՒՐՆ
Հայկական Ռատիոժամ
Յակոբ Պարոնեան Թատերախումբ
Նոր Զայն Լրատու
Երիտասարդաց

ՄԻՏՆԻ
Ալեքսանտր Նախակրթարան
Ալեքս Մանուկեան Շաբաթօրեայ Վարժարան
Թամզարա Հայ Ժողովրդական Պարախումբ
Երիտասարդաց

Վր նշէ Շրջանակային կամ մասնաճիւղի Վարչութեան առկայութիւնը:

ԵՒՐՈՊԱ

ՀԲԸՄ ԵՒՐՈՊԱ

Պելճիքայի, Ֆրանսայի, Գերմանիոյ, Ռումանիոյ, Լեհաստանի, Թուրքիայի եւ Միացեալ Թագաւորութեան մէջ համագումարներ, դասախօսութիւններ, ելոյթներ եւ ժողովներ կազմակերպելով, ՀԲԸՄ Եւրոպայի Յանձնախումբը եւ գրասենեակը բովանդակալից միջ-մշակութային հաղորդակցութիւն կ'առաջարկէ իր լսարանին: 2016-ին եւ 2017-ին ՀԲԸՄ-ի կազմակերպած համաժողովները ի մի բերին Եւրոպայի բոլոր մասնաճիւղերու ներկայացուցիչներ, քննարկելու համար հարցադրութեան, ինչպէս՝ ժամանակակից առաջնորդութիւն, ցանցային կապ, լեզուի նշանակութիւնը, Հայաստանի բարեկեցութիւնը, տնտեսներ ըլլալու գիտակցութիւնը: Մերտ համագործակցութիւն գոյացած է նաեւ նմանօրինակ օրակարգով առաջնորդուող այլ կազմակերպութիւններու հետ, ի մասնաւորի՝ «Մփիւռքներու Եւրոպա» նախագիծի շուրջ:

Կազմակերպուած են քարոզարշաւներ ի նպաստ Արցախի, մասնաւորաբար Եւրոպական Միութեան տարբեր մարմիններու ուշադրութիւնը սեւեռելու Արցախի բնիկ ժողովուրդի ամենօրեայ կեանքի հանգամանքներուն վրայ: Նշանակալի քայլեր ձեռնարկուած են նաեւ խրախուսելու ցեղասպանութեան ուսուցումը Պելճիքայի կրթական համակարգին մէջ: Աշխարհիկ Հրեական Համայնքային Կեդրոնի, ինչպէս նաեւ Պելճիքայի Հայ համայնքի հետ համագործակցաբար, եւ Պօղոսեան Հիմնադրամի աջակցութեամբ, ՀԲԸՄ Պելճիքայի ֆրանսախօս վարժարաններու համար կազմակերպեց սեմինար մը, որոշակի ուղղութիւն եւ բովանդակային առաջարկներ տրամադրելով դասարանային աշխատանքներու համար:

Իւրաքանչիւր տարուան Ապրիլ 24-ին պատուիրակութիւն մը կազմուած է, որ այցելած է Իսթանպուլ, այնտեղ մասնակցելու Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման միջոցառումներուն, այդպիսով սատարելով տեղական համայնքի այդ կարեւորագոյն ձեռնարկումին:



ՀԲԸՄ Եւրոպա. համատեղ կազմակերպուած աշխատաժողով՝ Պրիւքսէլի մէջ, Պելճիքայի ֆրանսախօս դպրոցներուն մէջ Հայոց Ցեղասպանութեան դասաւանդման մասին, ինչպէս նաեւ համաժողով մը՝ 1915-ի ցեղասպանութեան ժամանակակից նշանակութեան մասին:

ԱՒՍՏՐԻԱ

ՀԲԸՄ Աւստրիայի ուշադրութիւնը առաւելաբար կրթութեան ոլորտի վրայ կեդրոնացած էր: Հայկական Համացանցային Համալսարանի հետ գործակցաբար՝ 2017-ին ճատրակի դասընթացներ կազմակերպուեցան համայնքի անդամներուն համար: Իրականացուած է նաեւ ուսուցման ծրագիր մը՝ «Գիտելիքի Փողոց» անուամբ, տեղի հայ դպրոցականներուն՝ իրենց առօրեայ դպրոցական աշխատանքներու յաջող իրականացման մէջ օգտակարութիւն բերելու համար: Փորձառու ուսուցիչներ կ'օժանդակեն 5-17 տարեկան աշակերտներու դասապատրաստութեան աշխատանքին, յատկապէս ուսողութեան, Գերմաներէնի եւ Անգլերէնի մէջ: Անհատական դասընթացներ եւս տրամադրելի եղած են ըստ պահանջի:

Փլովտի

Այս Մասնաճիւղի ուշադրութիւնը սեւեռուած կը ծայ երիտասարդներու ներգրաւման եւ մշակոյթի վրայ: 2016-ին հիմնադրուեցան երկու պարախումբեր. «Աստղիկներ»՝ մանուկներու համար եւ «Նռնի»՝ իրենց ծնողաց համար, եւ Երիտասարդական Ակումբը համայնքի 14-29 տարեկան անդամներու համար: Փլովտիի Շաբաթօրեայ Վարժարանը հետեւողական կերպով կը շարունակէ համագործակցիլ Հայկական Համացանցային Համալսարանի հետ, լուսաբանելու համար հայկական տօներու պատմութիւնը՝ ինչպէս Վարդանանցը, բայց նաեւ աշակերտներուն առիթ տալով կապեր հաստատելու ՀԲԸՄ այլ վարժարաններու իրենց տարեկից աշակերտներու հետ, ինչպէս, օրինակ, Մոնթրէալի Հայորդեաց Շաբաթօրեայ ծրագրի մասնակիցներուն հետ: Շաբաթօրեայ Վարժարանի սաները բազում առիթներ ունեցան համերգներու եւ այլ հաւաքներու մասնակցելու: Ամառնային շրջանին Հայ Լեռ ճամբարը դարձեալ ընտանիքներ գրաւեց, իսկ համայնքի ղեկավարները առիթը օգտագործեցին այնտեղ հանդիպումներ եւ հաւաքներ կազմակերպելու համար:

Էրեբունի ձայնային-գործիքային նուագախումբը համերգներու շարք մը ներկայացուց իր ունկնդիրներուն, շրջելով երկրով մէկ, ինչպէս նաեւ այցելելով Քոմոթինի՝ Յունաստան: Կազմակերպուեցան նաեւ հանգանակութիւններ՝ ի նպաստ Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան, Մուրիահայութեան եւ այլ տեղական նպատակներու:

Սոֆիա

Այս տարիներուն մշակութային նախաձեռնութիւնները կեդրոնական տեղը կը գրաւեն Սոֆիայի Մասնաճիւղի գործունէութեան մէջ: Հայ Լեռ Կիրակնօրեայ Վարժարանի եւ արտադասարանային խումբերու Հայերէն լեզուի, պարի եւ երաժշտութեան դասընթացներու կողքին կազմակերպուեցան արուեստի ցուցահանդէսներ, գրական ընթերցումներ, ֆիլմի ցուցադրութիւններ եւ երաժշտական համերգներ, ի մասնաւորի՝ ճագ համերգ նուիրուած Հայաստանի Անկախութեան 25-ամեակին եւ ՀԲԸՄ 110-ամեակին: Տեղի ունեցաւ նաեւ ասանդական ազգային տարագներու ցուցահանդէս նորաձեւութեան հանդէս: Հայ տաղանդաւոր արուեստագէտներու գործերը շարունակուեցան ցուցադրուիլ՝ 2016-ին «Ճամբորդութիւն դէպի Հայաստան», իսկ 2017-ին՝ «Միրոյ Գոյներ» ցուցահանդէսներուն մէջ: Սոֆիահայութեան ամենափոքրիկ անդամները եւս գործուն էին եւ մասնակցեցան քաղաքի Երկրորդ Գարնանային Փառատօնին եւ Մանուկներու Միջազգային Օրուան տօնախմբութեան:



Ճագ համերգ ՀԲԸՄ Սոֆիայի մասնաճիւղի մէջ. Սեպտեմբեր, 2016:

Սոֆիայի Մասնաճիւղը նաեւ հիւրընկալեց կարեւոր բարձրաստիճան հիւրեր՝ Արմէն Սարգսեան, Արտաքին Գործոց Նախարար Էտուարտ Նալպանտեան եւ ՀԲԸՄ Գեղորոնական Վարչութեան անդամ եւ ՀԲԸՄ-Հայաստանի Նախագահ Վազգէն Եագուպեան: Մեր հիւրերէն էր նաեւ՝ Աշխարհի Խաղաղութեան Գեղեցկուհի- 2016 Հռիփսիմէ Սարգսեան:

Նիկոսիա

Նիկոսիոյ Մասնաճիւղի ամենամեայ ասանդական միջոցառումները շարունակական էին. Հերիսայի երեկոները եւ Հայկական միւս տօները առիթներ էին անդամներու մէկտեղման համար: Այդպիսի առիթ էր 2017-ի Յունուարի Մանկական Բարեկենդան-ը, որ յաջորդեց յիշելի Սբ. Ծննդեան տօնախմբութեան: Տիկնանց Յանձնախումբը կազմակերպեց հայկական պարի եւ մարմնավարժանքի միախառնում հանդիսացող եւ հայկական պարերու ասանդական նրբագեղ շարժումներուն վրայ հիմնուած սրտանօթային վարժութիւններու շաբաթական դասընթացներ: Տիկնանցը նաեւ մարդասիրական օգնութիւն յատկացուցին կարիքաւոր ընտանիքներուն եւ կանոնաւորապէս այցելութիւններ կազմակերպեցին դէպի ծերանոց եւ հանգստեան տուններ: Տեղի ունեցաւ «Խոստումը» ֆիլմի դիտում, ինչպէս նաեւ վիպասան Է. Մաքիսի մասնակցութեամբ գրական երեկոյ:

Ֆրանսայի Շրջանակ

ՀՀԸՄ Ֆրանսայի Շրջանակը բազմաթիւ տարածաշրջանային նախաձեռնութիւններ իրականացուց, որոնք կը վերաբերէին Հայաստանի մէջ կրթութեան եւ ներդրումներուն: Մեզոնային ծրագիրներ, ինչպէս Sejour de Ski եւ Colonie des Vacances մեծապէս կը նպաստեն Ֆրանսահայ նոր սերունդի անդամներուն միջեւ կապերու հաստատման եւ հաստատուած կապերու սերտացման: Nouvelles d'Armenie պարբերականի հետ համատեղ կազմակերպուեցաւ նաեւ հանդիպումներու շարք մը, ուր տեղի ունեցան խորքային բովանդակային բանավեճ եւ զրոյցներ, միտքերու փոխանակում: 2017-ին քննարկուող նիւթերն էին՝ Ռուս-Թուրքական Յարաբերութիւնները, Լեռնային Ղարաբաղի ինքնավարութիւնը, Ռուսական քաղաքականութիւնը Հարաւային Կովկասի ժողովուրդներու հանդէպ: Նուպարեան Գրադարանը եւս կազմակերպեց զանազան գիտաժողովներ, համագործակցութեամբ տարբեր տեղական հաստատութիւններու եւ անհատներու: Կարելոր է յիշել նաեւ Hye Tech Europe ծրագիրը, որ փորձառու գործարարներ իրենց խորհրդատուութեամբ կ'օժանդակեն սկսնակ գործարարներուն:

Լիոն

Դասախօսութիւններ, քննարկումներ, ֆիլմի դիտումներ եւ ցուցահանդէսներ. այդպիսին էր Լիոնի Մասնաճիւղի գործունէութեան պատկերը: Յիշելի են հանդիպումները լրագրող Վարուժան Մարտիկեանի, ՀՀԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ Հայկական Համացանցային Համալսարանի հիմնադիր Երուանդ Զօրեանի, Հայ Փաստաբաններու Ընկերակցութեան նախագահ Վերժինէ Տիգլէնի եւ ֆրանսացի աշխարհաքաղաքագետ Ժերար Շալեանի հետ: 2016-ին եւ 2017-ին Լիոնի Երիտասարդ Արհեստավարժները հիւրընկալեցին Եւրոպայի Երիտասարդ Արհեստավարժներու համագումարը: Յատկապէս նշելի են կազմակերպուած ցուցահանդէսները, ի մասնաւորի Գիւմրիի յախճապակիներու ցուցահանդէսը՝ 2016-ին: «Կիրակոսի Ուղին» ներկայացուց Փասքալ Մայլետեանի եւ Ժաք Աւագեանի արուեստը:



2016-ին Մարսելի Մասնաճիւղը հանգանակութիւն-ընթրիք մը կազմակերպեց ի նպաստ Արցախի մէջ ՀՀԸՄ մարդասիրական ծրագիրներուն:

գրաւականը: Իրենց երկու մշակոյթներու միաձուլումը ի ցոյց դրուեցաւ նաեւ ի նպաստ Արցախի կազմակերպուած հանգանակութիւն-ընթրիքով, որ տեղի ունեցաւ մեծ ժողովրդականութիւն վայելող Plus Belle La Vie հեռատեսլային ծրագրի արուեստանոցին մէջ: Երեկոյթի նշանակալի անցքերէն մէկն էր Էվերեսթի գագաթը յաղթահարած, տեղական յանձնախումբի անդամ Արա Խաչատուրեանի վերադարձի պահը: Խաչատուրեան ներկայացուց իր պատմութիւնը եւ Սոն օր օր ֆիլմը: Հետագային, ան իր փորձառութիւնները պիտի բաժնէր նաեւ ՀՀԸՄ այլ կեդրոններու եւ մասնաճիւղերու մէջ:

Փարիզ

Փարիզի Մասնաճիւղը իր լսարանին առաջարկած է զրոյցներ, ֆիլմերու դիտումներ եւ դասընթացներ: Դասախօսական շարքի յիշատակելի հիւրերէն էին Գերաշնորհ Նորվան Արքեպիսկոպոս Զաքարեան, Էլի Պառնավի, Արամ Մարտիրոսեան եւ Փաթրիք Տօնապետեան: 2016-ին եւ 2017-ին տեղի ունեցաւ նաեւ ճագ համերգներու շարք մը, կատարմամբ՝ Ալեքսիս Աւագեան Հնգեակի, Միքայէլ Ոսկանեան եւ Ընկերներու, եւ Մաշա Ղարիպեանի: Զութակահար Ժան-Մարք Ֆիլիպս-Վարժապետեան վարպետաց դաս մը վարեց, իսկ մասնաճիւղի տարբեր երաժշտական խումբեր ելոյթ ունեցան փարիզեան զանազան համերգասրահներու մէջ:

Մարսել

Հայկական եւ ֆրանսական մշակոյթները այս Մասնաճիւղի գործունէութեան առանցքն էին 2016-ին եւ 2017-ին: Կազմակերպուեցան ֆիլմերու դիտումներ, ուղեկցուած՝ յատուկ հրաւիրեալ հիւրերու մասնակցութեամբ խորքային ելոյթներով եւ երկխօսութիւններով, լրատուամիջոցներու, պատմութեան, ընկերային արդարութեան վերաբերեալ: Կազմակերպուեցաւ Peindre après le Genocide ֆիլմի դիտում պատմաբան Քլօտ Մուլաֆեանի, ինչպէս եւ 1915: The Movie ֆիլմի՝ դերասանուհի Անժելա Սարաֆեանի մասնակցութեամբ: «Խոստումը» ֆիլմի դիտումը եղաւ ազդեցիկ: Ստաճելու եւ խորհրդածելու առիթներ դարձան նաեւ հայկական եւ ֆրանսական մշակոյթները կամրջող ձեռնարկները: 2016-ին Մասնաճիւղը կազմակերպեց «Հայերէն Լեզու եւ Ֆրանսական Մշակոյթ» միջոցառումը, որ մեծ հետաքրքրութիւն յարաջացուց սերունդներու միջեւ երկխօսութեան իմաստով: 2017-ին «Ֆրանսական Թագաւորական Գոհարներու Պատմութիւնը եւ Ճակատագիրը» դարձաւ անցեալի կենդանի ներկայութեան

Վալանս



ՀԲԸՄ 85-րդ յոբելեանի սոնախմբութիւն՝ Վալանս, Հոկտեմբեր, 2016:

2016-ին Վալանսի Մասնաճիւղի կազմակերպած ձեռնարկներէն էին գեղանկարչական ցուցահանդէսը եւ արձակուրդային հաւաքները: Տարուան գլխաւոր միջոցառումը 85-ամեակի Կալա երեկոյն էր, որ առիթ հանդիսացաւ անցեալը յարգելով՝ հայեացքը ապագային յառելու: Համայնքի անդամները շարունակեցին յարաբերութիւններու սերտացումը՝ մշակութային, երգ ու պարի, առողջական եւ այլ բնոյթի ձեռնարկներու, նոյնիսկ՝ Զոււմպայի, միջոցով: Կազմակերպուեցան նաեւ դաշնամուրի եւ տուտուկի դասընթացներ:

ԳԵՐՄԱՆԻԱ



ՀԲԸՄ-ՀԱՅՔ Միմփոզիում, Կէօթէ Համալսարան, Ֆրանքֆուրթ, նախագահող՝ Ստեփան Հայրապետեան:

ՀԲԸՄ գործընկեր «ՀԱՅՔ»-ի տարեկան գործունէութիւնը կը ներառէր երբեւէ առաջին ՀԲԸՄ-«ՀԱՅՔ» Միմփոզիումը, որ տեղի ունեցաւ 2016-ի աշնան, Ֆրանքֆուրթի Կէօթէ Համալսարանին մէջ: Գլխաւոր նիւթն էր մասնագիտական աճը, նաեւ՝ արդիւնաւետ առաջնորդութիւն, մասնագիտութեան ծրագրում, եւ վերջապէս՝ տնտեսական հնարաւորութիւններ Հայաստանի մէջ: 2017-ին «ՀԱՅՔ»-ի անդամները իրենց պապենական ժառանգութեան եւ իրենց գերմանական մշակոյթի ձուլում իրականացուցին հայ-գերմանական երաժշտութեան միջոցով, երաժշտական համերգ մը ներկայացնելով Ռոսթոքի մէջ: Աւելի ուշ, անոնք դասախօսութեան մը միջոցով գերմանահայութեան հրամցուցին հայկական արուեստի եւ ճարտարապետութեան արժէքները:

Աթենք



Հայ ծաղրանկարիչ Ա. Սարուխանի գործերու ցուցադրութիւն, Աթենք, 2017, տեղւոյն Մասնաճիւղի եւ Երիտասարդ Արհեստավարժներու համատեղ ջանքերով:

2016-ին Աթենքի Մասնաճիւղը փորձեց իր գործունէութեանց ծիրին մէջ ընդգրկել բոլոր տարիքային խումբերը: 2016-ին Մասնաճիւղի հիւրն էր Յունաստանի Խորհրդարանի անդամ Լիանա Գենելլի, որ վերադարձած էր Հայաստան եւ Արցախ կատարած այցելութենէն: Խորհրդարանականը պատմեց իր տպաւորութիւնները մեր հայրենիքի մասին եւ անդրադարձաւ Արցախի նախագահ Բակօ Սահակեանի եւ Հայաստանի Ազգային Ժողովի Փոխ-Նախագահ Էտուարտ Շարմազանովի հոս ունեցած հանդիպումներուն: Աւելի ուշ, տեղի ունեցաւ նաեւ 1915: «Խոստումը» ֆիլմի դիտում եւ քննարկում, որ լայն ընդունելութեան ար-ժանացաւ: 2017-ին Մասնաճիւղը եւ Երիտասարդ Արհեստավարժները միացեալ ջանքերով կազմակերպեցին հանրայայտ ծաղրանկարիչ Ա. Սարուխանի գործերու ցուցահանդէս մը: Տարեկան իր համերգաշրջանի աւարտին, «Անի» պարախումբը ունեցաւ իր պտոյտը՝ դէպի Արքատիայի լեռները:

 **ՍՊԱՆԻԱ**

Պարսելոնայի Հայ Մշակութային Ընկերակցութեան ACAB-ի հետ ՀԲԸՄ երկարամեայ համագործակցութեամբ՝ տեղւոյն հայութիւնը անմասն չմնաց օգտակար եւ հետաքրքրական ձեռնարկներէ, ինչպիսին են շաբաթական Հայկական դպրոցը, լեզուի, պարի եւ ճատրակի դասընթացները: Յատուկ ձեռնարկներ կազմակերպուեցան իւրաքանչիւր տօնի առիթով: Եղան դասախօսութիւններ Արցախեան հակամարտութեան մասին, ինչպէս նաեւ Հայ-Սպանական յարաբերութիւններու վերաբերեալ: Այլ առիթներով քննարկման առարկայ դարձան Արմենոֆոպիան եւ խտրականութիւնը, հայ կրօնը եւ հայկական աւանդութիւնները: Վարչութիւնը նաեւ մշակութային ձեռնարկներ կազմակերպեց: Պարի բաց դասերու կողքին, ընկերակցութիւնը մասնակցութիւն բերաւ Քաթալան Մշակութային փառատօնին եւ Պարսելոնայի Պարի եւ Երաժշտութեան Միջազգային Փառատօնին:



Պարսելոնա. 2016-ի տարեվերջեան հանդէս:

 **ՀՈՒԱՆՏԱ**

Հոլանտայի մէջ ՀԲԸՄ աշխոյժ գործունէութիւն ծաւալեց 2016-ին եւ 2017-ին, գրեթէ ամենամսեայ յաճախականութեամբ: Տեղական եւ հայկական ազգային տօներու նշում, դասախօսութիւններ, խմբային այցեր դէպի երկրի տարբեր շրջաններ, դէպի Գերմանիա եւ Պելճիքա: Հրանդ Տինքի մահուան տասներորդ տարելիցի առիթով կազմակերպուեցաւ յիշատակի յատուկ երեկոյթ մը, նուիրուած մեծ հայրենասէրի ժառանգութեան եւ հայրութեան ապագային վերաբերեալ անոր տեսլականին: Միւս կողմէ, համայնքի անդամներու զուարճանքին եւ լիցքաթափման ի նպաստ, կազմակերպուեցաւ նաեւ կատակերգական երեկոյթ մը՝ Վահէ Պերպերեանի մասնակցութեամբ:

Լոնտոն

ՀԲԸՄ Լոնտոնի Մասնաճիղը, Երիտասարդ Արհեստավարժները եւ Լոնտոնի Թրասթ-ը համատեղ ջանքերով բազմազան ձեռնարկներ իրականացուցին 2016 եւ 2017 տարիներու ընթացքին: 2016-ին տեղի ունեցաւ Ասատուր Կիւզլեանին նուիրուած գրական գողտրիկ երեկոյ մը: Երիտասարդ Արհեստավարժները կազմակերպեցին հանգանակութիւն մը ի նպաստ Սուրիահայութեան: Նոյն տարուան Մայիսին, ՀԲԸՄ Եւրոպայի առաջնորդ կազմը ժամանեց Լոնտոն, ուր Կեդրոնական Վարչական Ժողովին հետ ներկայ գտնուեցաւ աշխատարանի մը, որուն յաջորդեց Կալա ընթրիք մը, որպէս բանախօս ունենալով Լորտ Արա Տարգին: Երեկոյի ընթացքին գումար հանգանակուեցաւ ի նպաստ Սուրիահայութեան:



2017-ին Լոնտոնի Մասնաճիղը հիւրընկալեց Հայաստանի Ամերիկեան Համալսարանէն Դոկտ. Ունտալ Ռոտսը, անոր ի պատիւ յատուկ ընդունելութիւն մը կազմակերպելով:

2017 նոյնքան արդիւնաւէտ տարի մը եղաւ: Տեղի ունեցաւ «Ոսկան Երեւանցի» ֆիլմի անդրանիկ ցուցադրութիւնը՝ հայերէն Աստուածաշունչի առաջին հրատարակիչ վարդապետի եւ անոր գործունէութեան ազդեցութեան մասին, ի մասնաւորի՝ հայ ինքնութեան վերաբերեալ: Տեղի ունեցաւ նաեւ հանդիպում՝ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Provost Դոկտ. Ռանտալ Ռոտսի հետ: Դոկտ. Ռոտս խօսեցաւ «Հայաստանի Ամերիկեան Համալսարան՝ Սփիւռքի Լաւագոյն Ներդրումը Հայաստանի Մէջ» նիւթի շուրջ: Ան անդրադարձաւ Համալսարանի պատմութեան եւ մանաւանդ՝ անոր ապագային եւ իր ունկնդիրները եւս մղեց խորհրդածելու Համալսարանի առաքելութեան մասին: 2017-ին Պուլկարի Պանդոկի մէջ կազմակերպուեցաւ նաեւ ծանօթադման եւ կապերու հաստատման երեկոյ մը՝ «Հայերը Ֆինանսական Ասպարէզի Մէջ» խորագրով, ուր ելոյթ ունեցան ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ Անոնլտ Ադամեան եւ Ռուբէն Վարդանեան: Ներկաները ներգրաւուեցան աշխոյժ երկխօսութեան ու քննարկման մէջ՝ ելեւմտական ծառայութիւններու բնագաւառի ներկայի եւ ապագայի վերաբերեալ: Կեդրոնական Վարչութիւնը Լոնտոն վերադարձաւ ռազմավարական հանդիպումներ ունենալու Եւրոպայի Երիտասարդ Արհեստավարժներու առաջնորդներուն հետ, որուն յաջորդեց Տրչեսթըր Պանդոկի մէջ տրուած շքեղ ընթրիք մը՝ Ն.Վ. Արմէն Սարգսեանի հրաւերով:

ՀԲԸՄ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՌՈՒՄԻՈՑ ՄԷՋ

ԱՒՍՏՐԻԱ

ՎԻԵՆԱՄ

Կարօտ Պարախումբ
Շաբաթօրեայ Վարժարան
Երիտասարդ Արհեստավարժներ – Աստրիա

ՊԵՂՃԻՔԱ

ՊԻՆԻՔՍԷԼ

ՀԲԸՄ Եւրոպայի Գրասենեակ
Երիտասարդ Արհեստավարժներ – Պելճիքա
Կորիզ Առաջնորդութեան Ծրագիր

ԿԻՂՐՈՍ

ԼԱՌՆԱՔԱՄ

ՆԻԿՈՍԻԱՄ

Արարատ Ֆուլթալի Խումբ
Երիտասարդ Արհեստավարժներ – Կիպրոս

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊՈՒՐԿԱՄ

ՏՈՊՐԻՉ՞

ՀԱՍՔՈՎՕ՞

Փրոֆ. Գրիգոր Ագարեան Թատերախումբ
Շաբաթօրեայ Վարժարան

ՓԼՈՎՏԻՒ՞

ՀԲԸՄ Չայն
Աստղիկներ Պարախումբ

Հայ Լեռ Ճամբար

Էրեբունի Երաժշտական Անսամբլ
Մալվինա Մանուկեան Մանկական Թատերախումբ

Նոենի Պարախումբ

Շաբաթօրեայ Վարժարան

Երիտասարդաց

Երիտասարդ Արհեստավարժներ – Փլովտի

ՌՈՒՄԵԼ՞

ՍԼԻՎԱՄ

ՍՈՏԻՄ՞

Հայ Լեռ Ճամբար
Սենեկային Նուագախումբ
Հայ Լեռ Կիրակնօրեայ Վարժարան
Նուռ պարախումբ
Երիտասարդաց
Երիտասարդ Արհեստավարժներ – Սոֆիա
ԵՄՍՊՈԼ՞
Առուօտ Երգչախումբ

ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԱԿ՞

Colonie de Vacances
HyeTech
Նուպարեան Գրադարան
Études Arméniennes Contemporaines
Փարիզի Ամառնային Ասպարէզային
Զարգացման Ծրագիր
Sejour de Ski
Terre de Vie
UFAR Ասպարէզային Զարգացման Ծրագիր

ԼԻՈՆ՞

Երիտասարդաց
Երիտասարդ Արհեստավարժներ – Ռոն-Ալի

ՄԱՐՍԷՑԻ՞

Երիտասարդաց
Երիտասարդ Արհեստավարժներ – Մարսել

ՆԻՄ-ՔՈԹ՝ ՏՄՁԵՐԻ՞

ՓԱՐԻՉ՞

Ահազանգ Թատերախումբ
Ալեքս Մանուկեան Շաբաթօրեայ
Վարժարան

Գողթան Երգչախումբ

ՍՏ Նուպար Փարիզ

Երիտասարդաց

Երիտասարդ Արհեստավարժներ – Փարիզ

ՎԱԼԱՄ՞

Երիտասարդաց

ՎԻԵՆ՞

Չորեքշաբթի Վարժարան
Երիտասարդական

ԳԵՐՄԱՆԻԱ

ՖՐԱՆՔՏՈՒՐ՞

ՀԱՅՔ՞ (Գործընկեր)

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԱԹԷՆՔ՞

Անի Պարախումբ
Արտաքի Գալվաքեան Վարժարան
Երիտասարդաց
Երիտասարդ Արհեստավարժներ – Աթէնք
ՍԱԼՈՆԻԿ՞

ԻՏԱԼԻԱ

ՄԻԼԱՄ

ՀՈՒՆՏՍՈՒ

ԱԼՄԵԼՕ՞

ԱՍՏԹԵՐՏԱՄ

Երիտասարդ Արհեստավարժներ – Ամսթերտամ

ՌՈՒՄԻԱ

ՍՈՄԿՈՒՄ

Երիտասարդ Արհեստավարժներ – Մոսկուա

ՍՊԱՆԻԱ

ՊԱՐՍՈՂՈՆԱ

Պարսելոնային Հայ Մշակութային Ընկերակցութիւն (ACAB)
(Գործընկեր)

ԶՈՒԻՑԵՐԻԱ

ԺԸՆԵՒ

Երիտասարդ Արհեստավարժներ –Զուիցերիա

ՄԻԱՅԵԱԼ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ԼՈՆՏՈՆ՞

Լոնտոնի Ամառնային Ասպարէզային Զարգացման Ծրագիր
Երիտասարդ Արհեստավարժներ – Լոնտոն

*կը նշէ Շրջանակային կամ մասնաճիղի Վարչութեան առկայութիւնը:

ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ



Մոնթրեալ



ՀԲԸՄ Մոնթրեալի Մասնաճիւղի հիւրն էր, Թուրքիոյ խորհրդարանի անդամ Կարօ Փայլան:

Իր աշխոյժ դպրոցով եւ համայնքով, Մոնթրեալի ՀԲԸՄ շարունակեց բազմակողմանի ծրագիրներ ներկայացնել իր լսարանին, իւրաքանչիւր ցանկացողին հասանելի դարձնելով իրեն հարազատ բովանդակություն: Մասնաճիւղը իր գործունեությունը կը համակարգէ տեղւոյն Ալեք Մանուկեան Դպրոցի հետ, անմիջականօրէն կապ հաստատելով մատուց սերունդի հետ: Երկու հաստատություններն ալ կարելորեցին Սուրիահայ ներգաղթեալներու պատշաճ ընդունումը եւ անոնց օգնություն յատկացնելու անհրաժեշտությունը եւ առիթ տալը, որ անոնք եւս ամբողջապէս ներգրաւուին համայնքի մշակութային կեանքին մէջ: Շարունակական ծրագիրներէն շատերը, ինչպէս շաբաթօրեայ «Հայորդեաց Օրեր»-ը, վերաճելուցան եւ յարմարացուցան նորէկ ընտանիքներուն եւ անոնց կարիքներուն: Նոյն նպատակով, 2016-ի Յունուարին «Յօգուտ Սուրիահայ Ընտանիքներու Ամանորեայ Ճաշկերոյթ» մը տեղի ունեցաւ, որուն ներկայ գտնուցան 500 անձեր:

Մոնթրեալի ՀԲԸՄ Կեդրոնին մէջ կազմակերպուած յատուկ ձեռնարկներէն իւրաքանչիւրը կը շեշտադրէր հայ մշակոյթի երեսակներէն մէկը: 2017-ին տեղի ունեցան երկու ցուցադրություններ՝ «Նախապատերազմական Սուրիան» լուսանկարներու ցուցադրությունը եւ «Արուեստ Կեանքի Էութիւնը» ժամանակակից սփիւռքահայ գեղանկարիչներու գործերու ցուցահանդէսը:

Մասնաճիւղը տօնախմբեց իր 60-ամեայ ծառայութեան յոբելեանը, իր տօնախմբութեան մասնակից դարձնելով նաեւ Քանատայի ժողովուրդը եւ պետական մարմինները: 2017-ի Մարտին, Քանատայի Համայնքներու Պալատը յատուկ յայտարարութեամբ անդրադարձաւ այս յոբելեանին: Յաջորդ ամիս, Մոնթրեալի մասնաճիւղը յայտարարեց «Կարտինալ Անճէլո Մարիա Տոլչի Կրթաթոշակ»ը հաստատելու մասին, ի նպաստ ուսանողներու, որոնք կը մասնագիտանան ցեղասպանագիտութեան մէջ: Յունիսին Քանատայի Փոստային Ծառայությունը այս առիթով հրապարակեց յատուկ յոբելեանական դրոշմաթուղթ մը: Յիշելի է նաեւ կալա -ընթրիքը, որուն ներկայ էին ՀԲԸՄ Նախագահ Պերճ Մեղրակեան եւ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ Լենա Սարգիսեան եւ Նազարէթ Ֆրստըզճեան:

Թորոնթո

2016-ին եւ 2017-ին Թորոնթոյի Մասնաճիւղը իր հնարաւորութիւնները ի մի բերաւ սատար հանդիսանալու Մուրիսիայ գաղթականներուն, որոնց վերահաստատումը նոր երկրին մէջ կը պահանջէր, որ Թորոնթոյի հայութեան կայացած քաղաքացիները իրենց կարելին ընէին նորեկները իրենց նոր բնակութեան վայրին պատշաճ կերպով ընտելացնելու համար: Այդուհանդերձ, Մասնաճիւղի ընթացիկ ծրագիրները, միտումա՛ մշակութային փորձառութեան խորացման, երիտասարդներու ոգեշնչման եւ Հայ ոգին նորանոր միջոցներով արտայայտելուն, մնացին շարունակական: Թէ՛ 2016-ին եւ թէ՛ 2017-ին քառասունէ աւելի մանուկներ մասնակցեցան Երաժշտական Տաղանդներու Ցուցադրութեան, հանդիսատեսին պարզելովով ամենատարբեր ժանրի երաժշտական կտորներ ըմբռնելու հաճոյքը՝ դասական, Պրոտոլէ, Հայկական ժողովրդական եւ այլն: 2017-ին տեղի ունեցաւ դասական երաժշտութեան համերգ, կատարմամբ՝ ջութակի վարպետներ՝ Կարապետեան եղբայրներուն եւ դաշնակահարուհի Յասմիկ Մանուկեանի: Հետագային, կազմակերպուեցաւ Քանատայի համադաշնութեան հիմնադրման 150-ամեակի յոբելեանական հանդիսութիւնը, որ նշուեցաւ յատուկ երաժշտական համերգով մը, ուր հնչեցին Հայ եւ Եւրոպացի երգահաններու գործերը, արտացոլելով Քանատացի ժողովուրդի բազմազանութիւնը: Համերգին ներկայ էր նաեւ Խորհրդարանի անդամ Ճոն Սքէլը:



Գրական երեկոյ մասնակցութեամբ *As the Poppies Bloomed* գիրքի հեղինակ Մարալ Պոյաճեանի:

Երաժշտական ձեռնարկներուն իբրեւ լրացում, կազմակերպուեցան նաեւ դասախօսական երեկոներ: Դոկտ. Ռիչըրտ Յովհաննէսեան դասախօսեց Մուսա Տաղի, Տէօրթ Եօլի եւ Քէսապի համայնքներու մասին, իսկ Դոկտ. Սոնա Յարութիւնեան եւ Դոկտ. Ալան Ուայթհորն՝ գրականութեան եւ պատմութեան վերաբերեալ: Յիշատակելի է նաեւ Մարալ Պոյաճեանին ի պատիւ կազմակերպուած երեկոն, անոր անդրանիկ՝ *As the Poppies Bloomed* վէպի հրատարակման առիթով: Վէպը սիրային պատմութիւն մը կը ներկայացնէ, որ հիմնուած է հեղինակի նախնիներու կենսագրութեան վրայ: Շարունակուեցան նաեւ ընտանեկան հաւաքներն ու Հայերէն լեզուի դասընթացները:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆՔՆԵՐ

Շիքակօ

Շիքակոյի Մասնաճիւղը հետաքրքրաշարժ միջոցառումներ ծրագրած էր այս տարիներուն: Ժամանակակից իրողութիւններու անդրադարձաւ լրագրող Թաթուլ Յակոբեան, ներկայացնելով Քաթօրեայ Պատերազմը Արցախի մէջ, իսկ Փրոք. Ռիչըրտ Յովհաննէսեան եւ Ճոն Թիթի Սարեան ներկայացուցին առաւել արանդական հայագիտական բնոյթի դասախօսութիւններ: Եղան նաեւ գիրքի ներկայացումներ ու ֆիլմի դիտումներ. Մերի Թերզեան ընթերցումներ կատարեց իր *Politically Homeless* գիրքէն, եւ տեղի ունեցաւ Անապատի Ագոստներ ֆիլմի դիտում: Ներկայացուեցան նաեւ Կեսարիոյ Հայ արծաթագործները: Ճորձ Աղճայեան ներկայացուց հայկական ազգաբանութիւնը: Մասնաճիւղը նաեւ այլ հաստատութիւններու հետ համատրժակցաբար կազմակերպեց Փրոք. Արմէն Մարտուպեանի ելոյթը, ինչպէս նաեւ «Յիշել Հայաստանը եւ Վերաբերեալայել Կորսուած Հայկական Տուն Մը. Տիլտիլեան Լուսանկարչական Հաւաքածոն» ցուցահանդէսը: Կազմակերպուեցաւ նաեւ թաւջութակահարուհի Քէյթ Գայայեանի մենահամերգը:

Նիւ Ինկլընտ

Հիւսիսային Ամերիկայի ամենահին Մասնաճիւղը իր ուշադրութիւնը սեւեռած էր երիտասարդութեան, մասնաւորաբար՝ համալսարանականներու վրայ, որոնք կ'ուսանին Պոպօնի շրջանի բազմաթիւ համալսարաններուն մէջ: Կանոնաւոր հաւաքներու կողքին, յատկապէս կարեւոր է նշել Գոհաբանութեան Օրուան հաւաքը, ուր ներկայ էին այն երիտասարդները, որոնք չէին կրցած միանալ իրենց ընտանիքներուն: Կարեւոր հաւաքները, որոնք առանձնակի ջերմութիւն կը հաղորդէին համայնքի կեանքին: 2016-ին Մասնաճիւղը կազմակերպեց ճազային երաժշտութեան երեկոյ մը, ուր նաեւ հանգանակուեցաւ աւելի քան \$13,000 ի նպաստ Մուրիսիայութեան եւ Արցախահայութեան: 2017-ին երաժշտական համերգները շարունակուեցան եթովպական համերգով մը եւ եւս մէկ ճազային երեկոյթով: «Լոյս» հիմնադրամի եւ MIT Armenian Society-ի հետ համատեղ կազմակերպուեցաւ նաեւ հիմնադրամի 8-րդ յոբելեանը: Հիմնադրամը Պոպօնի շրջանի ուսումնական հաստատութիւններուն մէջ ուսանող զգալի թիւով երիտասարդներու ուսումնառութեան հովանաւորութիւնը ստանձնած է:

Նիւ Եորք

Նիւ Եորքի տեղական Յանձնախումբերը, ինչպէս նաեւ Կեդրոնական Գրասենեակի որոշ բաժանմունքներ, իրենց ժամանակի մեծ մասը յատկացուցած էին մարդասիրական հանգանակութիւններու կազմակերպման, ՀԲԸՄ 110-ամեակի նախապատրաստական աշխատանքներու, եւ «Խոստումը» ֆիլմի հանրահռչակման: Այդուհանդերձ, շրջանի հայութեան համար կազմակերպեցին նաեւ գրական, պատմական եւ արուեստի վերաբերեալ ձեռնարկներ: 2016-ին գրական մրցանակներու դափնեկիր Քրիս Պօհճալեան վերադարձաւ իր նորագոյն գիրքի ներկայացմամբ: Հատորը կը կոչուի The Guest Room: Ասպարեգային Փորձառութեան Ծրագրի շրջանաւարտ Սոնիք Սվազլեան Թալոն խօսեցաւ կին առաջնորդներու մասին, իր Leading Gracefully գիրքի կապակցութեամբ: 2017-ին կազմակերպուեցաւ Ատրիէն Ալեքսանեանի Forced Into Genocide գիրքի Հիւսիս Ամերիկեան շրջայցը: 2016-ին տեղի ունեցաւ նաեւ Դոկտ. Ռիչըրտ Յովհաննէսեանի դասախօսութիւնը, իսկ 2017-ին եւ Փրոֆ. Իւմիթ Քուրդի դասախօսեց Հայոց Եղեռնի երկու կատարածուներու՝ Ահմէտ Ֆայիքի եւ Եասին Պէյսի մասին:

Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբը եւ ՀԲԸՄ-ի Կատարողական Արուեստներու Բաժինը համագործակցութեամբ Carnegie Hall-ի Weill Recital Hall սրահին մէջ կազմակերպուեցաւ ՀԲԸՄ-ի Կատարողական Արուեստներու Բաժնի սաներու համերգը: Երեկոն նուիրուած էր Հայաստանի Երգահաններու Միութեան 85-ամեակին եւ անոր հասոյթը կազմեց \$50,000, որ կ'ուղղուի ՀԲԸՄ Կատարողական Արուեստներու կրթաթոշակներու եւ համաշխարհային նախաձեռնութիւններու: Տեղի ունեցան նաեւ Տիգրան Համասեանի «Լոյս ի Լուսոյ» եւ Միքայէլ Ոսկանեան եւ Ընկերներ խումբի համերգները: ՀԲԸՄ Կեդրոնական Գրասենեակը համագործակցեցաւ նաեւ They Shall Not Perish: The Story of the Near East Relief ֆիլմի անդրանիկ ցուցադրութեան կազմակերպիչներուն հետ, ի յիշատակ այդ կազմակերպութեան մարդասիրական հարիւրամեայ գործունէութեան: Վերջապէս, ՀԲԸՄ Access Group-ը ներկայացուց մտերմիկ երեկոյ մը հանրայայտ խոհարար Ճեֆրի Չաքարեանի հետ, իր The Lamb's Club ճաշարանին մէջ:



AGBU Access-ի կազմակերպմամբ տեղի ունեցաւ մտերմիկ հանդիպում հանրայայտ խոհարար Ճեֆրի Չաքարեանի հետ, Մայիս, 2017:

Արեւմտեան Շրջան



Արեւմտեան Շրջանակի ամենամեայ կալան տեղի ունեցաւ Universal Studios, Hollywood-ի Globe Theater-ին մէջ: Մեծարեալն էր ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովի երկարամեայ անդամ եւ Հայկական Համացանցային Համալսարանի հիմնադիր, Դոկտ. Երուանդ Ջօրեան:

Քալիֆորնիոյ Արեւմտեան Շրջանը զգալի աճ արձանագրեց 2016-17-ին: 2016-ին Հիմնադրուեցաւ Mock Trial ծրագիրը, իսկ 2017-ին Լոս Անճելըսի Media Internship Ծրագիրը: Երկուքն ալ՝ համապատասխանաբար դպրոցական աշակերտներուն եւ համալսարանական ուսանողներուն կը տրամադրեն գործնական փորձառութիւն, իրենց ակադեմիական կամ արհեստավարժ ասպարէզային կենսագրութիւններու կազմութեան ընթացքին: Փաստտէնայի ցերեկային (այժմ՝ Ամարաս Ճամբար) յաճախողներու թուաքանակը 2017-ին գերազանցեց 200-ը:

Ձեռնարկներու տպաւորիչ հոյով մը ՀԲԸՍ Արեւմտեան Շրջանը աւելի քան հազար ներկաներով տօնախմբեց ՀԲԸՍ 110-ամեակը՝ The Reef ճաշարանին մէջ: Օրուան բանախօսն էր Ռուբէն Վարդանեան: Երեկոն հարստացուցին նաեւ երիտասարդ արուեստագէտներու կատարումները եւ ՀԲԸՍ ձեռքբերումներու եւ ազդեցութեան պատկերումը: Աւելի ուշ, տեղի ունեցաւ Անապատի Ագաւանէր ֆիլմի (արտադրիչ՝ Փոլ Թիւրփանճեան) անդրանիկ ցուցադրումը եւ հանդիպում ստեղծագործական խումբի հետ: Ֆիլմը հիմնուած է ՀԲԸՍ անդամ Լեւոն Եօթնէխբայրեանի կեանքէն առնուած իրական դրուագներու, եւ Եղեռնէն ետք հայ կեանքեր փրկելու իր ջանքերուն վրայ:

2017-ին Արեւմտեան Յանձնախումբը մի քանի ծրագիրներու գծով համագործակցութիւն ունեցաւ Կլենտէյլի իշխանութիւններուն հետ: Meet Us on Maryland շարքը անվճար մշակութային ծրագիրներ հասանելի դարձուց քաղաքի Արցախի Փողոցին մէջ: Քաղաքային իշխանութիւնները նաեւ քաղաքային զբօսայգիներէն մէկուն մէջ տարածք տրամադրեցին յետ-դպրոցական ծրագրի մը իրականացման համար՝ Յաջորդ Սերունդ Ծրագրի կողմէ: Հետագային, Յաջորդ Սերունդը հիմնաւորապէս տեղաւորուեցաւ տեղական YWCA-ին պատկանող շինութեան մը մէջ: Յանձնախումբը նաեւ կազմակերպեց կալա երեկոյթ մը Universal Studios Hollywood-ի Globe Theatre-ի մէջ, ի պատիւ ՀԲԸՍ Կեդրոնական Վարչական անդամ Դոկտ. Երուանդ Զօրեանի, ի գնահատութիւն անոր վաստակին, մասնաւորաբար՝ ի նպաստ Հայկական Համացանցային Համալսարանի եւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի:

Հայ Կին

Հայ Կին Յանձնախումբը իր աշխոյժ գործունէութիւնը շարունակեց իր հանդիպում-գրոյցները եւ համաժողովները Լոս Անճելըսի շրջանին մէջ, ինչպէս նաեւ իր սատարումը Հայ Կին Յի Կանանց Կեդրոններուն՝ Հայաստանի մէջ: Միայն 2016-ի ընթացքին 232 նորածիններ լոյս-աշխարհ եկան այդ կեդրոններու շնորհիւ, իսկ 2017-ի վերջին Չարենցաւան քաղաքին մէջ բացումը կատարուեցաւ հինգերորդ կեդրոնին: Լոս Անճելըսի մէջ Հայ Կին Յանձնախումբը, Young Circle-ի հետ համատեղ, 2016-ին կազմակերպեց «Ճշմարտութեան Դէմ-Յանդիման Հայաստանի Մէջ» համաժողովը, իսկ 2017-ին «Գնահատել Հայ Ընտանիքի Մէջ Կատարուող Փոփոխութիւնները» համագումարը, որ անդրադարձաւ թէ՛ Հայաստանի, թէ՛ սփիւռքի մէջ տիրող իրավիճակին: Տեղի ունեցաւ նաեւ կարեւոր հանդիպում մը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ՝ Հայաստանի մէջ վիժեցումներու ցաւոտ հարցի վերաբերեալ: Հրատարակուեցաւ «Հայ Կին» պարբերաթերթի 9-րդ թիւը: Վերջապէս, պատուոյ արժանացաւ Յանձնախումբի հիմնադիր անդամներէն Տիկ. Արշակուհի Դաւիթեան:



ՀԲԸՍ Հայ Կին եւ Հայ Կին Young Circle նշանակալի համաժողով մը կազմակերպեցին Հայ Երիտասարդութիւնը եւ Համալսարանական Կրթութիւնը. Մարտահրաւերներ եւ Հնարաւորութիւններ վերնագրով. Մարտ, 2016:

Ֆրեզնո

Արեւմտեան Ափի հնագոյն Մասնաճիւղը շարունակեց իր մշակութային գործունէութիւնը եւ համագործակցութիւնը զանազան կազմակերպութիւններու հետ: Քալիֆորնիայի Համալսարանի (Ֆրեզնո) Հայախտական Բաժինի հետ կազմակերպուեցաւ Դոկտ. Ճորճ Պուոնութեանի դասախօսութիւնը, դասախօսութիւններու շարք մը՝ Դոկտ. Ռոպերթա Հրվայնի, Դոկտ. Խաչիկ Մուրատեանի, Դոկտ. Աբրահամ Տերեանի եւ Դոկտ. Եքթան Թիրքէլըմազի: Տեղի ունեցաւ նաեւ Ատրիէյն Ալէքսանեանի Forced Into Genocide հատորի ներկայացումը հեղինակի կողմէ: Եղան նաեւ երաժշտական ձեռնարկներ: Շարունակուեցան պարի դասընթացները: Համերգներ ներկայացուցին դաշնակահարուհի Սոֆեա Մելիքեան եւ Չիլիկիբեան, Բագրատունի, Յակոբեան Եռեակը: Մասնաճիւղը հիւրընկալեց նաեւ Գրիգոր Սաթամեան Թատերախումբը, որ Funny Money թատերախաղով հանդէս եկաւ Ֆրեզնոյի մէջ: Այս յատուկ ձեռնարկներուն զուգահեռ, Մասնաճիւղը շարունակեց հայերէն լեզուի դասընթացները եւ գործակցեցաւ այլ փառատօններու եւ կազմակերպութիւններու հետ, մասնակցելով Հայաստանի Հանրապետութեան անկախացման 25-ամեակի տօնակատարութիւններու կազմակերպման աշխատանքներուն՝ համագործակցելով Ֆրեզնոյի մէջ Հայաստանի Պատուոյ Հիւպատոսին հետ:

ՆՇԱՔԱՐԵՆ

Մոնթրէալի Մասնաճիւղ
Մոնթրէալ, Քանատա
60-ամեակ (2017)

Լոս Անճելըսի Ասպետներ
Լոս Անճելըս, Քալիֆորնիա, ԱՄՆ
15-ամեակ (2016)



Forced into Genocide գիրքի հեղինակ Ա. Ալէքսանեան ներկայացուց իր հեղինակած հատորը. Քալիֆորնիայի Համալսարան (Ֆրեզնո), 2017: ՀԲԸՄ նմանօրինակ ձեռնարկ մը կազմակերպեց նաեւ Քալիֆորնիայի այլ համայնքներու, ինչպէս նաեւ Մասաչուսեցի եւ Նիւ Եորքի մէջ:

ՀԲԸՄ ՆԵՐՎԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԻՒՄԻՄԱՅԻՆ ԱՍԵՐԻՎԱՅԻ ՄԷՋ

ՔԱՆԱՍԱ

ՍՈՆՔԻՔԱՆՔ

Մարմամարզանք
Ալեք Մանուկեան Վարժարան
Գառնի Պարախումբ
Հայորդեայց ճամբար
Հայորդեայց Օր Շաբաթօրեայ Վարժարան
Նովա Ամառային Վարժարան
Սկաուտներ
Երիտասարդ Արիեստավարժներ – Մոնթրէալ
ԹՈՐՈՆՏՕ
Մարմամարզանք
Երիտասարդ Արիեստավարժներ – Թորոնթօ

ԱՍԵՐԻՎԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆՎՆԵՐ

ԱՐԻՊՈՆԱ

Սքոթսոնլը*
Երիտասարդ Արիեստավարժներ – Արիպոնա

ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

Արեւմտեան Շրջանակ*

Յաջորդ Սերուդ Օրագիր
Հայ Կին
Հայ Կին Հեռախոսակցային Օրագիր
Los Angeles Media Internship Program (LAMP)
Փաստաւեճայի Ցերեկային Ճամբար
Արեւմտեան Շրջանակի Գրասենեակ

Ֆրեզնո*

Կլենտլը-Փաստաւեճ*

Մարմամարզանք
Գրիգոր Սաթամեան Թատերախումբ
Սկաուտներ
Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարան
Երիտասարդ Արիեստավարժներ – Լոս Անճելըս

Օրէկնճ Քառնթի*

Շաբաթօրեայ Վարժարան

Սան Ֆրանսիսկո Վելի*

Ասպետներ
Մարմամարզանք
Մանուկեան-Տելմորճեան Վարժարան
Սկաուտներ

Սան Ֆրանսիսկո

Երիտասարդ Արիեստավարժներ – Հիւսիսային Քալիֆորնիա

Սիլիքոն Վելի*

Երիտասարդաց
Մանկանց Ակումբ

ԻՒՐՆՈՑ

Շիքալցօ*

Սիսակ Յ. Վարժապետեան Շաբաթօրեայ Վարժարան
Երիտասարդ Արիեստավարժներ – Շիքալցօ

ՕՂՄՅՕ

Քիլիլեան*

ՄԻՇԻԿԸ

Տիբորյօ*

Ալէքս եւ Մարի Մանուկեան Վարժարան
Երիտասարդ Արիեստավարժներ – Տիբորյօ
ՆԵՎԱՍԱ

Լաւ Վեկաս*

ՆԻՒՆԿԼԸՆՏԻ ՇՐՋԱՆԱԿ*

Երիտասարդ Արիեստավարժներ – Պոսթըն

ՆԻՒԵՈՐՔ

AGBU Access

ՀԲԸՄ Գլխաւոր Գրասենեակ

AGBU Insider

AGBU News Magazine

ՀԲԸՄ Կրթաթոշակներու Օրագիր

Անդրանիկ Պարախումբ

Քեմփ Նուպար

Նիւ Եորքի Յատուկ Ձեռնարկներու Յանձնախումբ

Նիւ Եորքի Ամառային Ասպարէզային

Չարգացման Օրագիր

Միացեալ Ազգերու Interest Group

Երիտասարդ Արիեստավարժներ – Մեծն Նիւ Եորք

ՓԵՆՍԻԼՎԱՆԻԱ

Երիտասարդ Արիեստավարժներ – Ֆիլատելֆիա

ԹԵՔՍԱՍ

Երիտասարդ Արիեստավարժներ – Հիւսթըն

ՈՒՍԵՐՆԱԿՅՈՒՆ Տ.Ս.

Երիտասարդ Արիեստավարժներ – Ուաշինկթըն

*կը նշէ Շրջանակային կամ մասնաճիւղի Վարչութեան անկախութիւնը:



Պուէնոս-Այրէս

2016-ին եւ 2017-ին Պուէնոս-Այրէսի Մասնաճիւղը տօնեց թե՛ նոր ձեռքներումներ, թե՛ վաղեմի յոբելեաններ: Ամառնային Ասպարեզային Փորձառութեան Ծրագիրը ողջունեց իր հինգ առաջին մասնակիցները, մինչ Երիտասարդական Լիկան եւ Է Ջօրավար Անդրանիկ Սկաուտները կը նշէին իրենց համապատասխանաբար 75-րդ եւ 30-րդ ամեակները: Երիտասարդներու ներգրաման առումով Մասնաճիւղը տպաւորիչ ցուցանիշներ արձանագրեց, մարզական ձեռնարկներու մէջ, Քոլոնիա Տէ Վաքանսիոնես եւ ՀԲԸՄ Մարի Մանուկեան Վարժարանը մեծաթիւ պատանիներ եւ երիտասարդներ գրաւեցին, իսկ Մարի Մանուկեան Վարժարանը Քալիֆորնիայի ՀԲԸՄ Մանուկեան Տէմիքեան Վարժարանի հետ փոխանակման ծրագիր իրականացուց 2017-ին:



ՀԲԸՄ Նախագահ Պերճ Սեդրակեան եւ Վարչութեան անդամներ Սէմ Սիւննեան եւ Ռուբէն Վարդանեան 2016-ին այցելեցին Արժանթինի մասնաճիւղերը:

Մասնաճիւղի շարքավերջեան ճաշարանը շարունակեց մեծ ժողովրդականութիւն վայելել որպէս հայկական խոհարարական օճախ եւ հարիւրաւոր հիւրեր սպասարկել իւրաքանչիւր ամիս: Գրիգոր Մաթամեան Թատերախումբը տպաւորիչ բեմադրութիւն մը ներկայացուց «Ո՞ր Է Գոհար Մայրիկը» վերնագիրով: Generacion3-ի նոր թիւեր լոյս տեսան, ընդլայնելով ընթերցողներու շրջանակը եւ աշխարհասփիւռ հայութեան առընչուող հարցեր ներկայացնելով արժանթինահայութեան ուշադրութեան, ինչպէս, օրինակ, Արցախի քառօրեայ պատերազմը: Հայութեան համախմբման այդ պահուն, Պուէնոս-Այրէսի մասնաճիւղը նախաձեռնեց «Ի՞նչ Կ'ընես Դուն Արցախի Համար» ծրագիրը: Հետագային հանրայայտ ջութակահար Մամուէլ Երվինեանի մասնակցութեամբ եւ Սփիւռքի Նախարարութեան գործակցութեամբ համերգաշար մը կազմակերպուեցաւ ի նպաստ տեղական երաժշտական դպրոցներու: Համատեղ նախաձեռնութեամբ մը, Generacion3, Երիտասարդական Լիկան եւ Պուէնոս-Այրէսի Երիտասարդ Արհեստավարժները համայնքի անդամները մղեցին ինքնութեան, աշխուժացումի եւ արհեստավարժ զարգացման մասին քննարկումներու #UGAB-ի միջոցով:

Քորտոպա

2016-ի եւ 2017-ի ընթացքին Մասնաճիւղը պահպանեց իր կապը տեղւոյն արժանթինցի ժողովուրդին հետ, հայ մշակոյթի, երգի, ճաշի եւ պարի միջոցով: Շարունակուեցաւ հայկական ճաշարանի կազմակերպումը՝ տօնական ճաշերու համատեւումով եւ ջերմ մթնոլորտի ստեղծումով հիւրընկալ անկիւն մը ստեղծելով թե՛ հայ եւ թե՛ տեղացի այցելուներու համար: Ճաշերը պատրաստուեցան աւագ սերունդի ներկայացուցիչներուն կողմէ, իսկ հրամցուեցան՝ երիտասարդներուն կողմէ, ստեղծելով միջ-սերնդային հետաքրքրական կապ մը: 2016-ին Մասնաճիւղի Երիտասարդական Լիկան նշեց իր հիմնադրութեան 45-ամեակը:

Շարունակելով հիացնել հանդիսատեսը, ՀԲԸՄ Արարատ Հայկական Պարախումբը Քորտոպայի Una Ciudad Todos los Pueblos Փառատօնին մասնակցեցաւ: Հայկական պարերու գեղեցիկ փունջով մը, ի շարս այլ բազմազան մշակութային խումբերու:

Ման Փառլո

Մասնաճիղը գործունեայ էր յատկապես իր լսարանի ընդլայնման առումով: Համայնքի անդամներուն եւ լրատուամիջոցներու ուշադրութեան ներկայացուեցաւ Խոստումը ֆիլմը: Պատրաստուեցաւ նաեւ «Հայաստանը Մէկ վայրկեանի Մէջ» առջանց ծրագիրը: Տեսերիզները կը ներկայացնեն քիչ ծանօթ իրողութիւններ պատմութեան եւ ժառանգութեան, սփիւռքի մասին: Անգլերէն ենթավերնագիրներով օժտուած եւ (ինչպէս վերնագիրը կը յուշէ) հակիրճ այս տեսերիզները հայկական մշակոյթը աւելի լայնօրէն հասանելի կը դարձնեն ամենուր: 2017-ին Պրագիլի մասնաճիղը աւելի քան \$3000 հանգանակեց Արցախի մէջ ակնազերծման աշխատանքներու, գործակցելով ONEArmenia-ի հետ:

Մոնթեվիտէօ

Մասնաճիղը տօնեց Մոնթեվիտէօյի մէջ Երիտասարդական Լիկայի հիմնադրութեան 70-ամեակը: Ուշադրութիւնը կեդրոնացուած է, դպրոցներու՝ ի մասնաւորի՝ Նուպարեան-Մանուկեան Վարժարանի կենսունակութիւնը ապահովելու, նոր առաջնորդներու պատրաստութեան եւ սկաուտական շարժման ապագայի, աւելի տեղեկացուած եւ յանձնառու երիտասարդութեան դաստիարակման վրայ: Երիտասարդական Լիկան եւ Երեւան 50 Սկաուտական Շարժման անդամները պատմական շրջայց մը կատարեցին Մոնթեվիտէօյի մէջ, հետեւելով իրենց նախնիներու քայլերուն, որոնք այդ նոյն ճանապարհով անցած էին երբ իբրեւ գաղթական ներգաղթեալներ ժամանած էին Ուրուգուէյ 1918-1925 թուականներուն:

Պատրաստուեցաւ նաեւ առաջին #UGABtalks-ը՝ համայնքային հարթակ մը՝ քննարկելու ամէն ինչ որ կը վերաբերի հայութեան, հայրենադարձութիւն, կամաւոր ծառայութիւն Հայաստանի մէջ, սփիւռքեան փորձառութիւններ եւ այլն: Հարիւրաւոր հայեր հետաքրքրութիւն ցուցաբերած են աւելի սերտ կապեր հաստատելու իրենց հայրենիքին հետ: Երաժշտական Հայաստանը Ուրուգուէյ բերելով, Մոնթեվիտէօյի Կռունկ Երգչախումբը շարունակեց իր գործունէութիւնը, երկրի տարբեր շրջաններու մէջ տուած իր համերգներով, մասնաւորաբար՝ Torre de las Telecomunicaciones-ի մէջ:

ՆՇԱՔԱՐԵՐ

Երիտասարդական Լիկա
Պուէնոս-Այրէս, Արժանթին
75-ամեակ (2016)

Զօրավար Անդրանիկ Սկաուտներ
Պուէնոս-Այրէս, Արժանթին
30-ամեակ (2016)

Երիտասարդական Լիկա
Քորտոպա, Արժանթին
45-ամեակ (2016)

Երիտասարդական Լիկա
Մոնթեվիտէօ, Ուրուգուէյ
70-ամեակ (2016)



ՀԲԸՄ Ուրուգուէյ. #UGABtalks համայնքային հարթակ:

ՀԲԸՄ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ		
<p>ԱՐԺԱՆԹԻՆ ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՄ՝ Մարմամարզանք Անդրանիկ Սկաուտներ Պուէնոս-Այրէսի Ասպարէզային Զարգացման Ծրագիր Քոլոնիա Տէ Վաքանսիոնէս Generacion 3 Մարի Մանուկեան Վարժարան</p>	<p>Գրիգոր Մաթամեան Թատերախումբ Երիտասարդաց Լիկա Երիտասարդ Արհեստավարժներ – Պուէնոս-Այրէս</p> <p>ԳՈՐՏՈՊԱ՝ Մարմամարզանք Արարատ Պարախումբ Քոլոնիա Տէ Վաքանսիոնէս Երիտասարդաց Լիկա</p>	<p>ՊՐԱԶԻԼ ՄԱՆ-ՓԱՌԼՕ՝ Մարմամարզանք Երիտասարդաց (մարզական) Երիտասարդ Արհեստավարժներ – Պրագիլ</p> <p>ՈՒՐՈՒԿՈՒԷՅ ՄՈՆԹԵՎԻՏԵՕ՝ Մարմամարզանք Նուպարեան Վարժարան Երեւան 50 Սկաուտական Նուագախումբ Կռունկ Երգչախումբ Երիտասարդաց Լիկա</p>

*կը նշէ Շրջանակային կամ մասնաճիղի Վարչութեան անկալութիւնը:

2016-2017 ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐ

ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒՔԼՈՍ ԱՅՐԷՄ: Համբարձում Հալածեան (մինչև Մայիս 2017),
Ռուբեն Կելտիբեան
ԳՈՐՏՈՊԱ: Նիկոլաս Անալեան

ԱԻՍՏՐԱԼԻԱ

ՄԵԼՊՈՒՌ: Մարալ Չոքազեան
ՄԻՏԵԻ: Թորոս Պողոսեան

ԱԻՍՏՐԻԱ

ՎԻԵՆԱ: Ժիրայր Պալմանեան (մինչև Օգոստոս 2017), Լուսին Պալմանեան

ՊՐԱԶԻԼ

ՄԱՆ ՓԱՌԻԼՕ: Հելիո Պալուբեան (մինչև Սեպտեմբեր 2016), Հայկ Աբովեան

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊՈՒՐԿԱՍ: Յակոբ Մովսեսեան
ՓԼՈՎՏԻԻ: Ռուբեն Չաուշեան
ՓԼՈՎՏԻԻ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ:
ՏՈՊՐԻՉ: Էտուարտ Քոբոնեան
ՀԱՍՔՈՎՕ: Սրբուհի Տեր Անտոնեան
ՌՈՒՍՍԷ: Պողոս Կարճարեան
ՍԼԻՎԱ: Արշալիր Հուլեան
ԵԱՄՊՕԼ: Սոնիա Արշալիր Յոֆանեան, (2016)
ՍՈՖԻԱ: Սոնիա Ասազեան-Պետրոսեան (մինչև Փետրուար 2017),
Աննո Գույումճեան

ԳԱՆԱՏԱ

ՍՈՆԹՐԵԱԼ: Շահե Թանաշեան
ԹՈՐՈՆԹՕ: Քնար Պասաճեան (մինչև Նոյեմբեր 2016), Միհրան Եկաեան

ԿԻՊՐՈՍ

ԼԱՌԱՔԱ: Ստեփան Գամաքեան
ՆԻԿՈՍԻԱ: Միսաք Գույումճեան

ԵԳԻՊՏՈՍ

ԵԳԻՊՏՈՍԻ ԵՐԶԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԳԱՀԻՐԷ:
Օննիկ Պլըզտանեան
ԱՂԵՔՄԱՆՆԻԱ: Մարգիս Վարձպետեան (մինչև Օգոստոս 2017),
Պերճ Ճեպեճեան
ԳԱՀԻՐԷ: Վիգեն Ճիզմեճեան

ԵԹՈՎՊԵՏ

ԱՏԻՍ ԱՊԱՊԱ: Վահագն Ղարիպեան

ԵՒՐՈՊԱՅԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Նատիա Գործունեան

ՖՐԱՆՍԱ

ՖՐԱՆՍԱՅԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ: Նատիա Գործունեան
ԼԻՈՆ: Քամիլ Մետրպեան (մինչև Օգոստոս 2017), Վիգեն Քոճարեան
ՄԱՐՍԷԼ: Փաթրիկ Մալարեան
ՆԻՍ-ՔՈԹ ՏՂՈՒՐ: Շաքե Յակոբեան-Քլաուսըն
ՓԱՐԻՉ: Ռաֆայել Տեր Յակոբեան
ՎԱԼԱՆՍ: Ժան-Ժաք Վարդանեան (2016), Ֆիլիպ Փանոսեան
ՎԻԵՆԱ: Շարլ Փալլոպետրոսեան (2016), Ֆիլիպ Պելլրեբեան

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵՂՈՆԱԿԱՆԿՈՄԻՏԷ, ԱԹԷՆՔ:
Տիգրան Ապասեան (մինչև Մարտ 2016), Համբիկ Սահակ Մանուկեան
ՄԱԼՈՆԻՔ: Հայկուհի Փորթուզալեան

ԻՐԱՔ

ՊԱՐՏԱՏ: Փաքրամ Մովսէս Տեր Յակոբեան

ԻՏԱԼԻԱ

ՄԻԼԱՆ: Կէկէլ Խաչատուրեան

ԼԻԲԱՆԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ: Ժիրայր Թի.Ֆէկսճեան
ԱՆԹԻԼԻԱՍ: Վաչէ Աւետիքեան (2016), Գրիգոր Քէշիշեան (2017)
ՍԵԻՆԱ (ՄԻՆ ԷԼ ՖԻԼ): Յակոբ Թելվիզեան 2016,
Վարուժան Մարկոսեան 2017
ԶԱՀԷ: Ճորճ Տէյրմէնճեան

ՀՈՒՆԱՏԱ

ԱԼՄԷԼՕ: Յարութ Փալանճեան

ՍՈՒՐԻԱ

ՍՈՒՐԻԱՅԻ ԵՐԶԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ: Ներսէս Ներսայեան
ՀԱԼԷՊ: Մանուէլ Վարձպետեան
ՂԱՄԱՍԿՈՍ: Արա Եագուպեան
ՔԱՍԻՇԼԻ: Զարեհ Սիմոնեան
ՔԵՄԱՊ: Վազգէն Չափարեան
ԼԱԹԱՔԻԱ: Յակոբ Աղամեան (2016), Նիքոլա Մատանի (2017)

ԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՍԻՐՈՒԹԻՒՆ

ՏՈՒՊԱՅ: Հրաչ Պուշուխուզեան

ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԼՈՆՏՈՆ: Ժիրայր Գեորգեան (մինչև 2016), Արմինէ Աֆրիկեան

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

ՍՈՆԹԵՎԻՏԷՕ: Պենճամին Քեմանեան (մինչև Սեպտեմբեր 2017),
Խոսէ Կեօզիզարայեան

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ՇԻՔՍԿՕ, ԻԼ.: Սոնա Պողոսեան Տիգրիս, (մինչև Փետրուար 2017),
Վահան Ճանճիկեան

ՏԻԹՐՈՅԻԹ, ՄԻ.: Նատիա Մարաֆեան

ՆԻՈՒ ԻՆԿԼԸՏԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ: Արա Պալիբեան

ՔԼԻՎԼԱՆՏ, ՕՀ.: Սեպուհ Սեդրակեան

ՓՐՈՎԻՏԸՆՍ: Ուիլյեմ Ազնաուրեան (մինչև Նոյեմբեր 2016)

ԱՐԵՎՄԵՆԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ: Թայլին Եագուպեան

ՍՔՈԹՍՏԱԼ, ԱԶ.: Գարեգին Գաբրիելեան

ՖՐԵՆՍՕ, ՔԱԼ.: Զարուհի Տեր Սկրտչեան

ԿԼԵՆՏԷՅԼ/ՓԱՍՏԱՏԵՆԱ, ՔԱԼ.: Հրանդ Վարձպետեան

ՀԱՅ ԿԻՆ, ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ, ՔԱԼ.: Սոնա Եագուպեան

ՕՐԷՅՆԺ ՔԱՌՆԹԻ, ՔԱԼ.: Գրիգոր Մահտեան

ՄԱՆ ՖԵՐԼԱՆՏՕ ՎԱԼԻ, ՔԱ.: Հրանդ Յովհաննիսեան

ՄԻԼԻՔՈՆ ՎԱԼԻ, ՔԱ.: Երուանդ Զօրեան

ԼԱՍ ՎԵԿԱՍ, ՔԱ.: Վազրիկ Մակարեան

Հ.Բ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՆԵՐ



Աւելի քան երկու տասնամեակ չհասնելու շնորհիվ Երիտասարդ Արհեստավարժներու ցանցը կարողականություն հաղորդեց արհեստավարժ ձգտում ունեցող եւ քաղաքացիական գիտակցութեամբ զինուած անձանց, որոնք իրենց համայնքներուն մէջ դրական առանջընթաց պիտի ապահովեն, արտացոլելով չհասնելու հիմնարար արժէքները:

Իր բաց եւ թափանցիկ գործելաճիւղն պատճառով այս ցանցը, բաղկացած 22-էն 40 տարեկան անհատներէ, իր տեսակին մէջ ամենամեծ նման խմբաւորումը դարձած է եւ համբաւ կը վայելէ իբրեւ նպատակասլաց սերտ համագործակցութիւն մարմնաւորող միաւորում:

Երիտասարդ Արհեստավարժներու առաջին խումբը կազմուեցաւ 1995-ին, Լոս Անճելըսի մէջ: 2016 եւ 2017-ին ցանցի տեղական միաւորներու թիւը հասաւ 33-ի: Նոր միաւորներ ստաղծուեցան Նիկոսիայի (Կիպրոս), Մոսկուայի (Ռուսիա), Դիթրոյթ (ԱՄՆ), Հիւսթընի (ԱՄՆ) եւ Ֆենիքսի Արիզոնա, ԱՄՆ) մէջ: Չհասնելու կը համագործակցի նաեւ երիտասարդ արհեստավարժներ միաւորող նմանօրինակ այլ կազմակերպութիւններու հետ. ՀԱՅՔՔ՝ Գերմանիոյ եւ ՄԻԻ Իսթանպուլի մէջ: 2016 եւ 2017-ին Երիտասարդ Արհեստավարժները շարունակեցին իրենց գործունէութիւնը տեղական եւ տարածաշրջանային հաւաքներով եւ ձեռնարկներով:

Բարեգործ Մերունդ

Ինչպէս միշտ, Երիտասարդ արհեստավարժները շարունակեցին փայլիլ իրենց առատաձեռն բարեգործութեամբ: 2016-2017-ին անոնք հանգանակեցին աւելի քան \$130,000 զանազան նպատակներով: Չհասնելու Հայորդեայց Տունը Հայաստանի Մէջ, TUMOXAGBU Կեդրոններ, Չհասնելու Սուրբհայրութեան Շտապ Օգնութեան Հիմնադրամ, Չհասնելու Կրթաթոշակային ֆոնտ եւ Չհասնելու Արցախի ֆոնտ: Ամենամեայ աւանդական ձեռնարկները եւս լայն տարածաշրջանային աջակցութիւն ստացան. Հիւսթընի Քալիֆորնիայի Ձմեռային Կալա, Թորոնթոյի Սթ. Օնոնէան Հանգանակութիւն, Նախա-Բուն Բարեկենդանը Շիքակոյի մէջ, Հայկական Սթ. Օնոնէան Լուս Աճուրդը Նիւ Եորքի մէջ: Տեղական ձեռնարկութեան եւ հաւաքները խրախուսեցին տեղական համայնքային հանգանակութիւնը, շարունակելով վառ պահել Չհասնելու-ի վաղեմի աւանդոյթները:

Հանգանակութիւններու կազմակերպման զուգահեռ, Երիտասարդ Արհեստավարժները լծուեցան նաեւ անհատական աշխատանքի, հատուցելով սեփական համայնքի հանդէպ իրենց բարոյական պարտաւորութիւնը: Անոնք վազեցին մարաթոններու ընթացքին, ժամանակ յատկացուցին կարիքաւոր համաքաղաքացիներու, երբեմն նոյնիսկ այլոց կարիքները իրենց կարիքներէն գերադաս համարելով փայլուն օրինակ հանդիսացան բոլորին:

Խրախուսել Երկխօսութիւնը

Յիշեալ երկու տարիներու Երիտասարդ Արհեստավարժները նոր ցուցանիշ արձանագրեցին քննարկումներու եւ համաժողովներու կազմակերպման առումով, կրկին ապացուցելով, որ այս սերունդը բազում մտորութեան ունի եւ տալու շատ բան ունի աշխարհին: Եւրոպայի եւ Հիւսթընի Ամերիկայի մէջ առաջնորդներու պատրաստութեան տարածաշրջանային ձեռնարկներու մասնակցելէ բացի, այս խոստմնալից երիտասարդները լայն ընդգրկումով տպաւորիչ եւ հետաքրքրաշարժ քննարկումներ կազմակերպեցին:

Մշտապէս հետաքրքրութիւն ցուցաբերելով հայրենիքը յուզող հարցերու հանդէպ, Երիտասարդ Արհեստավարժները հանդիպումներ ունեցան բազմաթիւ Ոչ-Կառավարական Կազմակերպութիւններու եւ դեսպաններու հետ: Պելճիքայի Երիտասարդ Արհեստավարժները, օրինակ, հանդիպում ունեցան Եւրոպական Միութեան մօտ Հայաստանի Պատուիրակութեան Ղեկավար՝ դեսպան Մարգարեանի հետ, որ երիտասարդներուն հետ զրուցեց արտաքին քաղաքականութեան տարբեր երեսներուն մասին: Մեծն Նիւ Եորքի Երիտասարդ Արհեստավարժները կազմակերպեցին «Երեւակայ՝ Հայաստանը» ֆորումը, որ իրենց սերնդակիցները իրազեկ դարձուց հայրենադարձ հայերու հայաստանեան կեանքի դրական իրողութիւններուն: Ամաթերտամի Երիտասարդ Արհեստավարժները իրենց հիւրերուն ներկայացուցին մարտահրաւեր մը. Ինչպէ՞ս կարելի է անհատական կապերը եւ ծանօթութիւնները օգտագործել յօգուտ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի:

Փարիզի Երիտասարդ Արհեստավարժներու հիւրն էր Տամիէն Մորի, տեղեկատուական ճարտարարուեստ ձեռնարկատէր եւ SAVE mobile startup-ի հիմնադիր:





Մոսկուայի Երիտասարդ Արհեստավարժները կազմակերպեցին իրենց առաջին EduChat շարքը:

Հարստացնել Արհաստավարժ Չարգացումը

Այս արագորեն աճող ցանցը ինքզինք կը սահմանէ երկու բառով. Երիտասարդ եւ արհեստավարժ: Որպէս այդպիսին, բոլոր յանձնախումբերը մեծապէս կը կարեւորեն արհեստավարժ զարգացման հնարաւորութիւններու ստեղծումը: Եթէ համաժողովները առիթ են ծանօթութիւններու շրջանակները ընդլայնելու, տեղական հաւաքներն է, որ վճռական են անհատական ասպարէզային զարգացման համար: Պուէնոս-Այրէսի եւ Ֆիլատելֆիայի մէջ, օրինակ, կը կազմակերպեն ամենամեայ արհեստավարժ զարգացման ձեռնարկներ: Երեւանի մէջ Երիտասարդ Արհեստավարժները համագործակցեցան Dartmouth College-ի Tuck School of Business-ի MBA ծրագիրի ուսանողներուն հետ:

Յանուն Մշակոյթի

Երիտասարդ Արհեստավարժները ապացուցեցին, որ հայկական մշակոյթը կենսունակ է մեր նոր սերունդի կեանքին մէջ: Անոնք ոչ միայն հետամուտ են հայ արուեստի եւ երաժշտութեան ավանդներու հանրահռչակման՝ համերգներու, ցուցահանդէսներու, եւ խոհարարական դասերու միջոցով, այլեւ՝ հաւասարապէս խրախուսող են նորովի մակնաբանման՝ ֆիլմի դիտումներու, կատակերգութեան եւ լուսանկարչական ցուցահանդէսներու միջոցով: Անոնք նոյնիսկ կը հրաւիրեն նաեւ տեղական երիտասարդ արհեստավարժները միասնաբար եւ երկուստեք խորամուխ ըլլալու մշակութային հարստութիւններու պեղման եւ գնահատման մէջ:



Լոս-Անձելըսի Երիտասարդ Արհեստավարժները կազմակերպած էին իրենց առաջին Mural Crawl-ը քայլարշաւ East Hollywood-ի մէջ, Արթուն Կեօզուքիչիկեան արուեստի դիտման համար:



Հիւսիսային Քալիֆորնիայի Երիտասարդ Արհեստավարժներու կազմակերպած կատակերգուիի Լուսին Շամամեանի Shake the Earth ներկայացումը:

Պեյրուք 2017

Իւրաքանչիւր երկու տարին մէկ, AGBU Focus ծրագիրը ի մի կը հաւաքէ հարիւրաւոր երիտասարդ հայեր աշխարհի չորս ծագերէն: Նպատակը Երիտասարդ Արիեստավարժներու ցանցի ընդլայնումն է եւ սատարումը չԲԸՄ տարբեր ծրագիրներուն: Կազմակերպիչներն են Երիտասարդ Արիեստավարժներու յանձնախումբ մը, որ կը հաւատայ իր սերնդակիցներու ուժականութեան եւ առաքելութեան:



ՉԲԸՄ FOCUS 2017-ի Կազմակերպիչ Յանձնախումբի անդամները իրենց յաջողութիւնը նշեցին ողջերթի ճաշով մը, Պեյրուքի ծովափին:

Պեյրուքի Երիտասարդ Արիեստավարժները այս պատասխանատուութիւնը ստանձնեցին նուիրումով եւ պատրաստակամութեամբ, ծրագրելով անմոռանալի հանդիպում մը, որ տեղի ունեցաւ 2017-ի Օգոստոս 2-6, աւելի քան 400 մասնակիցներով որոնք եկած էին 23 երկիրներէ՝ մինչեւ իսկ՝ Աւստրալիայէն, Թայլանտէն եւ Պրագիլէն:

2017-ի նորութիւններէն էր FOCUS-ի անդրանիկ համագումարը, ուր աւելի քան 200 մասնակիցներ, ծանօթանալով ՉԲԸՄ գործունէութեան պատմութեան, տեղական մտայղացումներու՝ մեծածաւալ ծրագիր դառնալու զարգացման ընթացքին, գաղափարներ փոխանակեցին նոր մտտեցումներ որդեգրելու եւ ծրագիրներու տրամաբանութիւնը նորովի դիտարկելու մասին:



FOCUS 2017-ի կալայի ներկաներէն խումբ մը:

Համաժողովը եկաւ ամբողջացնելու արդէն իսկ խիտ օրակարգով հանդիպումը: Տեղի ունեցան «Դիտանկիւններ» քննարկումը, ուր երիտասարդ արիեստավարժներ բաժնեկցեցան իրենց անցած ասպարեգային ճանապարհը, եւ «Focus եւ Արուեստ» բացառիկ հանդիպումը, որ կազմակերպուած էր Սուրոք Թանգարանին մէջ: Օրուան հիւր բանախօսն էր աշխարհահռչակ ճարտարապետ Պեռնար Խուրի, որ իր անջնջելի հետքը թողած է քաղաքի երկնակամարին, եւ հեղինակն է Երեւանի Թումօ Կեդրոնի շէնքին: Խուրի մեկնաբանեց իր մտտեցումները, աշխատելառճը եւ գաղափարախօսութիւնը, յիշելով նաեւ, որ իր մօր հայկական արմատներու գիտակցումը անբաժան է իրմէ:

Հանդիպման գագաթնակետ կարելի է համարել The Legend պանդոկի ճաշարանին մէջ, Lycos գետի ափին: Երեկոյին հրապարակուեցաւ ՉԲԸՄ Կրթաթոշակներու Ծրագրին: Աւելի քան \$100,000 հանգանակուած գումարը եւս մէկ անգամ ապացուցեց, որ Երիտասարդ Արիեստավարժներու նորագոյն սերունդի նուիրումը անզիջում է:

FOCUS-ի հիմնադրումէն ի վեր (2001) այս երկամեայ յաճախականութիւն ունեցող հաւաքին մասնակցած են աւելի քան երեք հազար երիտասարդներ, ուր քաղաքներու մէջ, ուր հանգանակուած է աւելի քան \$530,000 ի նպաստ ՉԲԸՄ զանազան ծրագրիներու:





1. Երիտասարդ Արհեստավարժերը մասնակցեցան Երեւանի կիսամարաթոնին, ի նպաստ ՀԲԸՄ Հայորդեայց Տուներու:
2. 2017-ին, Մոնթրեալի Երիտասարդ Արհեստավարժներու Գործադիր Ցանձնախումբը հանդիպում ունեցաւ քաղաքապետ Տէնիս Քատրիի հետ:
3. Հիւսթընի Երիտասարդ Արհեստավարժներու հիմնադրումը, Յուլիս, 2016:
4. Կիպրոսի Երիտասարդ Արհեստավարժներու առաջին հաւաքը, Դեկտեմբեր, 2017:
5. Պուէնոս-Այրէսի Երիտասարդ Արհեստավարժներու արհեստավարժ զարգացման տարեկան երրորդ համագումարը, որ տեղի ունեցաւ Նոյեմբեր, 2016-ին, առիթ ընծայեց տեղական երիտասարդ արհեստավարժներուն օգտուիլ տարբեր քննադատներու հմուտ մասնագէտներու փորձառութիւններէն:
6. 2017-ին Պելձիքայի Հայկական Ցանձնախումբը, ՀԲԸՄ-Պելձիքայի եւ Հայասա կազմակերպութեան հետ համագործակցաբար, կազմակերպեց Պելձիքայի Հայ Երիտասարդաց առաջին Համագումարը: Համագումարին ներկայ էին աւելի քան 80 հայ ուսանողներ եւ երիտասարդ արհեստավարժներ, քննարկելու Պելձիքայի մէջ հայ համայնքին առընչուող ընկերային-քաղաքական հարցեր:

Երիտասարդ Արհեստավարժներ-Ատենապետներ եւ Համակարգողներ

ԱՍՍԹԵՐՏԱՍ

Վահագ Աւագեան

ԱՐԻՁՈՆԱ

Զարի Փանոսեան (2017)

ԱԻՍՏՐԻԱ

Քարուշ Ղազկեան (2016)
Բիւզանդ Չորպաճեան (2017)

ԱԹԷՆՔ

Սեդրակ Աբասեան

ՊԵԼՃԻՔԱ

Սարգիս Պետրոսեան (2016)
Սեւակ Արելեան (2017)

ՊՈՍԹՈՆ

Ճիւսթին Տրապիսի

ՊՐԱԶԻԼ

Արամ Աբովեան (2016)
Նաթալիա Օրթիզ Հազարեան (2017)

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Խոսէ Ճերէճեան (2016)
Մարիա Սոլ Թորոսեան (2016 եւ 2017)

ՇԻՔԱԿՕ

Անի Գրիգորեան

ԿԻՊՐՈՍ

Նաթաշա Տէր Աւետիսեան (2017)

ՏԻԹՐՈՑԹ

Շանթ Քորքիկեան

ՖՐԱՆՔՅՈՒՐԹ ՉԱՅՔ*

Մահակ Արթագեան (2016)
Շուշանիկ Ափրիկեան (2017)

ՄԵՍՆ ՆԻԻ ԵՈՐՔ

Ուիլելմ Նազարեան

ՀԻՍԹՐՆ

Անայիս Պապաճանեան

ԻՍԹԱՆՊՈՒԼ ՍՏԻ*

Քաթիա Քաւեա
Արսէն Սեմերճեան

ԼԻԲԱՆԱՆ

Նաթաշա Գեօշկերեան

ԼՈՆՏՈՆ

Անգելինա Նաճարեան Սերոբեան (2016 եւ 2017)
Նաթալի Փիրանեան (2017)

ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Անի Թորոսեան

ԼԻՈՆ-ՈՈՆ ԱԼՓ

Վիզէն Քոճարեան

ՄԱՐՍԷՅԼ

Մարալ Հեքիմեան

ՄՈՆԹՐԷԱԼ

Ժան Աքքոյեան (2016)
Օլկա Մարգարեան (2017)

ՄՈՍԿՈՒԱ

Աննա Շառոյեան

ՀԻՒՄԻՍՍԱՅԻՆ ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

Դաւիթ Օճաքեան

ՓԱՐԻՋ

Հերմինէ Սամուէլեան

ՖԻԼԱՍԵԼՅԻԱ

Ստաա Սելվերեան

ՓԼՈՎՏԻԻ

Հայկ Կարապետեան

ՍՈՅՏԻԱ

Սեդա Զատիկեան

ՋՈՒԻՑԵՐԻԱ

Ռուբինա Եագուպեան-Պալեօզեան

ԹՈՐՈՆԹՕ

Միհրան Եկաւեան (2016)
Քրիսթինէ Քաւազանճեան (2017)

ՈՒԱՇԻՆԿԹՐՆ ՏԻ. ՍԻ.

Յակոբ Ստեփանեան (2016)
Վիլէն Խըլղաթեան (2017)

ԵՐԵՒԱՆ

Իզապէլլա Մերապովա

ԱՐԱՐԱԿԱՆ ԷՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արինա Մալճեան

* Գործընկեր կազմակերպութիւն

Հ.Բ.Ը.Մ.-Ի ԴՊՐՈՑՆԵՐ



ՀԲՄ դպրոցներու համաշխարհային ցանցը, որ կ'ընգրկէ երկու տասնեակէ աւելի դպրոցներ, հետամուտ է ուսումնական գերազանցութեան եւ կը յատկանշուի համապարփակ ու նորարարական ծրագիրներով՝ արուեստներու թէ գիտութեան մարզերուն մէջ: Այս դպրոցներուն մէջ կը թրծուին աւելի քան 4225 աշակերտներ:

Բացի մեր ամենօրեայ դպրոցներէն, ուր կ'ուսանին մանկամտութիւն մինչեւ 12-րդ դասարանի աշակերտներ եւ ուր ունինք 15% ոչ-հայկական ծագումով սաներ, մեր մէկօրեայ դպրոցները եւ ամառնային ակադեմիաները կը մատուցեն փորձառական եւ ծրագրային ուսումնառութիւն: Մա այն երաշխիքն է, որ մեր երիտասարդութիւնը-ծնունդով հայ թէ ընտրութեամբ-կը ստանայ որակեալ կրթութիւն եւ հաղորդ կը դառնայ հայ ինքնութեան:

2016-2017-ին ՀԲՄ դպրոցները նշեցին ուղենշային յոբելեաններ, ընդունեցին պատուաւոր հիւրեր եւ այցելուներ, իրենց յաջողութիւններով գրաւեցին հանրութեան ուշադրութիւնը, միաժամանակ երաշխաւորելով, որ ոչ իսկ մէկ սան զրկուած չ'մնայ կրթութիւն ստանալու հնարաւորութենէն, նոյնիսկ ամենադժնդակ պայմաններու պարագային:

Կրթութիւնը Հիմնական Կարիք է

Սուրիա


ՀԲՄ Կիւլլապի Կիւլպէնկէան Վարժարանը նշեց ՀԲՄ 110-ամեակը, մտաբերելով աշխարհասփիւռ ՀԲՄ համայնքի վճռական օժանդակութիւնը պատմութեան ամենատագնապալի պահերուն: Դպրոցը տեղական պետական ուսումնական ծրագիրով կ'առաջնորդուի, միաժամանակ վառ պահելով ազգային գիտակցութեան ջահը՝ լեզուի, կրօնի եւ մշակոյթի միջոցով:

2016-ի Յունիսին Հալէպի ՀԲՄ Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկէան Վարժարանը տարեվերջեան հանդէսով մը հրաժեշտ տուաւ իր 23 շրջանաւարտներուն, որոնք յատուկ երաժշտական ելոյթով մը յարգանքի տուրք տուին ՀԲՄ 110-ամեակին: Հակառակ տիրող դժուար պայմաններուն, այս աշակերտները արձանագրած էին բարեյաջող արդիւնքներ:

2016-ի ամառը ՀԲՄ Քամիշլիի ամառնային վարժարանը ՀԲՄ Գառնիկ Եագուպեան սրահին մէջ հիւրընկալեց 90 երախաներ: Ամառնային վարժարանը կազմակերպուած էր Տիկնանց եւ Երիտասարդ Կանանց Յանձնախումբի նախաձեռնութեամբ, նպատակ հետապնդելով համայնքի երախաները հաւաքել ապահով միջավայրի մը մէջ, ի հեճուկս տիրող անհանգիստ քաղաքական իրավիճակին:

Քանատա

Նպատակ ունենալով նոր սերունդը մասնակից դարձնել Մոնթրէալի հայ համայնքի կեանքին, 2016-ի ամառը Մոնթրէալի ՀԲՄ հիմնեց NOVA Ամառնային Դպրոցը Սուրիահայ Աշակերտներու համար: Ալէք Մանուկեան ամենօրեայ վարժարանը ֆրանսերէն լեզուի համապարփակ դասաւանդում կ'ապահովէ Մոնթրէալի մէջ, սակայն NOVA-ն անվճար դասեր կը տրամադրէ, ուր աշակերտները իրենց թարմ գիտելիքները կը կիրարկեն դպրոցական ժամերէն ետք:



Highlights

Պուէնսու-Այրէս, Արժանօթին

Պուէնսու Այրէսի Մարի Մանուկեան Հիմնարկի աշակերտները Հոկտեմբերին կազմակերպեցին Հայկական մշակոյթի ամիս, Հայկական այլ դպրոցներու հետ համատեղ: Եղան արուեստի, երաժշտութեան, գրականութեան, պարի եւ պատմութեան վերաբերող ձեռնարկներ:



Միտնի, Աւստրալիա

Նոյեմբեր 2016-ին Միտնիի Ալեքսանտր Նախակրթարանի հիւրերը եղան աւելի քան հազար այցելուներ, Հայ Մշակոյթի Օրը նշելու նպատակով: Հայաստանէն յատուկ հրաւիրուած Վարպետ խոհարար Սեդրակ Մամուլեանի եւ ակնանաոր երաժիշտներու մասնակցութեամբ իրականացուեցաւ Armenian Food Safari ծրագիրը:



Մոնթրէալ, Քանատա



Նոյեմբեր 2017-ին Մոնթրէալի Ալեք Մանուկեան Վարժարանի երգչախումբը ընտրուեցաւ ելոյթ ունենալու Քանատայի Ծերակոյտի պալատին մէջ, Քանատայի 150-ամեակի տօնախմբութեանց առիթով:

Պեյրուք, Լիբանան

Հոկտեմբեր 2016-ին ՀԲԸՄ Լիբանանի Մասնաճիղը յայտարարեց, որ յառաջիկայ վեց տարիներու ընթացքին ՀԲԸՄ Լիբանանի դպրոցները, համագործակցութեամբ EDUCATION Դպրոցական Ցանցի, Էլեկտրոնային գրականութիւն, ծրագրային ապահովման ուսուցում եւ յարակից փոխգործող ճարտարարուեստ պիտի ներառեն իրենց ուսումնական ծրագիրներուն մէջ, հարստացնելու համար Անգլերէնի, Արաբերէնի, Ֆրանսերէնի, ուսողութեան, գիտութեան եւ ընկերային գիտութեանց դասընթացները նախակրթարանի 1-6 դասարաններուն մէջ: Մինչեւ 2023 այս iPad-iLearn ծրագիրը ՀԲԸՄ Լիբանանի դպրոցները պիտի դիրքաւորէ իբրեւ կրթական նորարարութեան ռահվիրաներ, զանոնք դարձնելով երկրի հագուագիտ կրթական օճախներէն, որոնք կ'օգտագործեն այս մեթոտները:

Սաութհֆիլտ, Միշիկըն, ԱՄՆ



ՀԲԸՄ Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարանի աշակերտները տնօրէն Յովսէփ Թորոսեանի (աջին), Սթիւ Սքոթի (ձախին) հետ, իրենց մրցանակակիր ինքնաշարժին առջեւ:

Մարտ 2016-ին Սաութհֆիլտի ՀԲԸՄ Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարանի ինքնաշարժերու ճարտարագիտութեան դասարանը, գիտութեան ուսուցիչ Սթիւ Սքոթի առաջնորդութեամբ, ոչինչ կառուցեցին Էլեկտրական ինքնաշարժ մը եւ մասնակցեցան մրցոյթի մը, որ կազմակերպուած էր Square One Education Network at M-City կազմակերպութեան կողմէ՝ Միշիկընի Համալսարանին մէջ: Կը մասնակցէին 25 դպրոցական խումբեր եւ Մանուկեան վարժարանի ինքնաշարժը դիմացկունութեան, արագութեան եւ խնայողութեան չափանիշներով գրաւեց երկրորդ տեղը, իսկ նորարարութեան եւ ներկայացման չափանիշներով՝ առաջին տեղը: 2017-ին դպրոց այցելեցին General Motors-ի ղեկավարները, որոնք հիացան աշակերտական ինքնաշարժով եւ պատմեցին իրենց աշակերտական ուղիի եւ աշխարհի մեծագոյն ընկերութիւններէն մէկուն մէջ արհեստավարժ գործունէութեան մասին:

Քանոկա Փարք, Քալիֆորնիա, ԱՄՆ

Մարտ 2017-ին ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի երեք աշակերտներ՝ Էնտրիւ Տեմիրճեան, Տերիք Դաւիթեան եւ Ճանի Քամաքեան մասնակցեցան Միացեալ Ազգերու Կազմակերպութեան հովանիի տակ տեղի ունեցած համագումարին, որ տեղի ունեցաւ Ճափոնի Քաուասաքա քաղաքին մէջ: Անոնք անհատական ելոյթներ ունեցան եւ քննարկումներու մասնակցեցան Սուրիական ճգնաժամի, շրջակայ միջավայրի եւ ծովերու ձկնային պաշարներուն վերաբերեալ: Տնօրէն Արփի Աւանէսեանի հետ անոնք գիտելիք ամբարեցին թէ՛ համագումարի սրահներուն մէջ եւ թէ՛ անոնցմէ դուրս, ծանօթանալով երկրի հարուստ մշակութային, կրօնական եւ պատմական յուշարձաններուն:

ՆՇԱՔԱՐԵՐ

**ՀԲԸՄ Տեմիրճեան Կեդրոն Հայագիտական
Շարաթօրեայ Վարժարան**
Պեյրուք, Լիբանան
20-ամեակ (2017)

**ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան
Վարժարանի**
Քանոկա Փարք, Քալիֆորնիա, ԱՄՆ
40-ամեակ (2016)

ՀԲԸՄ Մեկօրեայ/Միօրեայ Վարժարաններ

ՀԲԸՄ Մեկօրեայ վարժարաններու թիւը, անոնց ընդլայնուող ուսումնական ծրագիրները եւ ներառական գործունէութիւնը միաւորող ազդակներ դարձած են տարբեր համայնքներու մէջ, նոր սերունդի համար դառնալով փորձառական կրթութեան, նորարարական մեթոտներու եւ ազգային ինքնութեան գրաւիչ համատեղում մը:



Մոնթրէալի Հայորդեայց Օր Շաբաթօրեայ Վարժարանի աշակերտներ: Կ'ուսանին հայ մշակոյթ, լեզու եւ այլ հմտութիւններ, ինչպէս լուսանկարչութիւն:

Փլովտիւի Շաբաթօրեայ Վարժարանէն եւ Սոֆիայի Հայ Լեռ Կիրակնօրեայ Վարժարանէն մինչեւ ՀԲԸՄ Վիենի Չորեքշաբթի Օրուան Վարժարան եւ Մոնթրէալի Հայորդեայց Օր Շաբաթօրեայ Վարժարան, հին ու նոր ծրագիրներ կը խթանեն հայու ստեղծագործ ոգին պարի, երաժշտութեան, թատրոնի, լուսանկարչութեան եւ ճատրակի միջոցով: Հայերէն լեզուն ու մշակութային ժառանգութիւնը կ'ուսուցանուին դասական եւ նորարարական մեթոտներով՝ Հայկական Համացանցային Համալսարանի ճանապարհով: Պէլյուրի ՀԲԸՄ Տէմիրճեան Կեդրոնի Հայագիտական Շաբաթօրեայ Վարժարանը նշեց իր 20-րդ յոբելէանը եւ հպարտ է, որ իր հիմնադրութենէն ի վերկարողացած է մուտք ունենալ աւելի քան հազար հայ պատանիներու աւօրեայ կեանք:

Մեծարման Հանդիսութիւն

Քանոկա Փարք, Քալիֆորնիա, ԱՄՆ

Փետրուար 2016-ին Քանոկա Փարքի ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի Հոգաբարձութեան Ատենապետ Սինան Սինանեանին ի պատիւ տեղի ունեցաւ մեծարման յատուկ երեկոյ: Իբրեւ գնահատանք անոր տասնամեակներու մեծարժէք ծառայութեան եւ անսակարկ նուիրումին, վարժարանի 40-ամեակի ճաշկերոյթի ընթացքին ան արժանացաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մետալին՝ ամենաբարձր պատիւը, որ կը շնորհուի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ: Ներկայ էին 700 հիւրեր, ներառեալ ՀԲԸՄ Նախագահ Պերճ Սեդրակեան, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Տ. Յովսէփ Արք. Տէրտէրեան, վարժարանի շրջանաւարտներ եւ ՀԲԸՄ համակիրներ: Վարժարանը իր առաջին շրջանաւարտները հայութեան ընծայած է 1987-ին, ցայսօր անոնց թիւը հասցնելով 1400-ի:



Մեծարեալ Սինան Սինանեան եւ Տիկին Անժէլ Սինանեան. Յովսէփ Արք. կը փոխանցէ Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը:



Վարժարանի սան Կարո Քելլեկան հիւրերուն բարի գալուստ կը մաղթէ Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոն:

Չոկտեմբեր 2017-ին Փասատենայի մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս օրինեց նորակառոյց ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան Կատարողական Արուեստներու Կեդրոնը եւ անոր յարակից Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանը: Ներկայ էին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Տ. Յովսէան Արք. Տէրտէրեան, բարերարներ Վաչէ եւ Թամար Մանուկեաններ, ՀԲԸՄ Նախագահ Պերճ Սեդրակեան, ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ, այլ պաշտօնատար անձինք եւ 400 հրաւիրեալներ: Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարանի եւ ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի սաները աղուհացով ջերմօրէն ողջունեցին Նորին Սրբութիւնը եւ ներկաները եւ ի ցոյց դրին իրենց տաղանդները:

ՀԲԸՄ-ի Դպրոցներ 2016-2017

ԱՐԺԱՆԹԻՆ

ՊՈՒՔՆՈՍ ԱՅՐԷՍ
Մարի Մանուկեան Հիմնարկ
Մանկապարտէզէն մինչեւ 12-րդ

ԱՒՏՏՐԱԼԻԱ

ՄԻՏՆԻ
Ալեքսանտր Նախակրթարան
Մանկապարտէզէն մինչեւ 6-րդ
Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ
Վարժարան

ԱԻՍՏՐԻԱ

ՎԻԷՆԱ
Վիեննայի Շաբաթօրեայ Վարժարան

ՊՈՒԼՎԱՐԻԱ

ՀԱՍՔՈՎՕ
Շաբաթօրեայ Վարժարան

ՓԼՈՎՏԻԻ
Շաբաթօրեայ Վարժարան

ՍՈՏԻԱ
Հայ Լեո Կիրակնօրեայ Վարժարան

ՔԱՆԱՏԱ

ՍՈՆՔՐԷԱԼ
Ալեք Մանուկեան Վարժարան
Մանկապարտէզէն մինչեւ 8-րդ
Հայրորդեայ Օր Հայ Երիտասարդութեան Օր
Շաբաթօրեայ Վարժարան
ՆՈՎԱ Ամառնային Վարժարան

ՖՐԱՆՍԱ

ՓԱՐԻՋ
Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ Վարժարան
ՎԻԷՆԱ
Չորեքշաբթի Վարժարան

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԱԹԷՆՔ
Արթաքի Գալվաքեան Վարժարան
Մանկապարտէզէն մինչեւ 6-րդ

ԻՐԱՔ

ՊԱՂՏԱՏ
Երջանիկ Թէճիրեան Ամառնային Վարժարան

ԼԻԲԱՆԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
Պօղոս Կարմիրեան Վարժարան
Մանկապարտէզէն մինչեւ 9-րդ
Տէմիրճեան Կեդրոն Հայագիտական
Շաբաթօրեայ Վարժարան

ՄԻՆ ԷԼ ՖԻՆ

Լեոն Կ. Նազարեան Վարժարան
Մանկապարտէզէն մինչեւ 6-րդ
Դարուի Յակոբեան Վարժարան 7-12
դասարաններ

ՍՈՒՐԻԱ

ՀԱԼԷՊ
Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան
Վարժարան Մանկապարտէզէն մինչեւ 12-րդ

ԴԱՄԱՍՎՈՍ

Կիւլլապի Կիւլպէնկեան Նախակրթարան
Մանկապարտէզէն մինչեւ 6-րդ

ԳԱՄԻՇԼԻ

Ամառնային Վարժարան

ՈՒՐՈՒՎՈՒԷՅ

ՍՈՆԹԷՎԻՏԵՕ
Նուպարեան-Մանուկեան Վարժարան
Մանկապարտէզէն մինչեւ 6-րդ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԳԱՆՈՎԱ ՓԱՐՔ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ
Մանուկեան-Տէմիրճեան Վարժարան
Մանկապարտէզէն մինչեւ 12-րդ

ՇԻՔԱՎՕ, ՈՒԼԻՆՈՅ
Սիսակ Վարժապետեան Շաբաթօրեայ
Վարժարան

ՔՈՍԹԱ ՄԵՍԱ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ
Օրէյնճ Քաունթի Շաբաթօրեայ Վարժարան

ՓԱՍՏԱՏԵԱ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ
Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարան
9-12-րդ դասարաններ

ՍԱՈՒԹ ՖԻՆՏ, ՄԻՇԻԿՈՆ
Ալեք եւ Մարի Մանուկեան Չարթըր Վարժարան
Մանկապարտէզէն մինչեւ 12-րդ

ԾՐԱԳԻՐՆԵՐ - ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿ 2016-2017





Հ.Բ.Ը.Մ.Ի ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ Բ.Ը.Մ.ը կրթական աշխատանքնրու սատարող թուայնական իր ծրագիրներու մշակման գործընթացը եւ հասողականութիւնը ընդարձակեց, այդ մարզէն ներս համագործակցական նոր նախաձեռնութիւններով:

Հայկական Հեռավար Գոլէճ

Հայկական Հեռավար Գոլէճի համացանցային ծրագիրը իր տարբերակներով, ինչպէս պատշաճեցուած դասարանային աշխատանքերու ուղղուած անոր լրացուցիչ նիւթերը, եւ կամ թուայնական հեռակայ հանդիպումները, աշխարհի տարբեր կողմերէն մասնակիցներ համախմբեցին՝ Աւստրալիայէն, Պուկարիայէն, Չիլիէն, Նոր Զելանտայէն, Սպանիայէն, եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, ներգրաւելով աշխարհի 93 տարբեր երկիրներէ մասնակիցներու ուռճացող թիւ մը:

Ծրագիրը աշխատեցաւ մշակոյթի պահպանման եւ ազգային գիտակցութեան մշակումին ուղղուած իր կարելիութիւնները հասանելի դարձնել նաեւ Վրաստանի հայ համայնքին Ջաւախքի մէջ, «Ճաւախքի Աջակցութեան Հիմնադրամ»-ին գործակցութեամբ:

Ծրագիրը օգտագործելով ստեղծագործ ճարտարագիտութեան միջոցները, լատենտիական արշաւներ կազմակերպեց, որոնց միջոցաւ մասնակիցները հեռակայ դրութեամբ այցելեցին թանգարաններ, տեսարժան վայրեր ինչպէս Երեւան եւ շրջակայքը, նոր ուսանողներ հրապուրելով դրացի շրջաններէ, Թիֆլիսի Հայարթուն Կեդրոնը (Վրաստան), Կրասնոտարի Արարատ Դպրոցը (Ռուսիա), Բոստոնի Հայկական Համայնքային Կեդրոնը (Ռուսիա), եւ Պոլսոյ Թարգմանչաց Վարժարանը (Թուրքիա):



Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի աշակերտները կ'օգտագործեն Հեռավար Գոլէճի պատշաճեցուած ծրագիրը իրենց դասարանային աշխատանքներուն մէջ:

Ծրագիրը Տարածում կը Գտնէ Հայաստանի մէջ

Հայկական Հեռավար Գոլէճը Արեւելահայերէնի ուսուցման յատուկ պատշաճեցում ծրագիր մշակեց, հայաստան հաստատուած սուրիահայերու եւ ներգաղթողներու համար, Հ.Հ. Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան եւ Ներգաղթողներու Կարգաւորման Միաւորին հետ համագործակցութեամբ:

Ել-Գրքեր

Հ.Բ.Ը.Մ.ի Հիմնադրութեան 110-ամեակին առիթով, Հայկական Հեռավար Գոլէճը նախաձեռնեց «Հ.Բ.Ը.Մ.ը - Հարիւր Տարուան Պատմութիւն» երկհատորեայ գիրքի թուայնացումին: Գիրքը Հայերէն, Անգլերէն եւ Ֆրանսերէն լեզուներով, հրատարակուած էր միութեան 100-ամեակին առիթով, խմբագրութեամբ Բէյնոնտ Գեորգեանի եւ Վահէ Թաշճեանի:

Charity, Philanthropy, and Relief Work




Armenian orphanage in Sebastia/Sivas in 1902 (Coll. Bibl. Nubar/Paris)



Nubar Paşa (1825-1899), Prime Minister in various Egyptian governments (Coll. Bibl. Nubar/Paris)

The human tra... not, however, b... were instigate... incapacity to c... Treaty of Best... of its former... influx of Mus... seems to ha... population h... demographi... of an Arme... particular o... basically ru... East seem... elites long... region's m... a result of... resistance... Paradoxica... modern... adminis... Thus th... the tran... better t... had un... childre...



Հեռավար Գոլէճի Գործընկերներ

Ա.Մ.Ն.ի Միջազգային Զարգացման Օգնութիւն եւ Սմիթսոնիըն Հիմնարկ

2016-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Միջազգային Զարգացման Օգնութեան (USAID) Հիմնադրամին եւ Սմիթսոնիըն Հիմնարկին կողմէ ֆինանսատրուած «Իմ Հայաստան» ծրագրին հետ կնքուած համագործակցութեան պաշտօնական համաձայնութեամբ, Հայաստանի մէջ զբօսաշրջիկութիւնը խթանելու նպատակով, Հայկական Հեռավար Գոլէճը հրատարակեց Վայոց Ձորի եւ երկու յաւելեալ շրջաններու մասին ելեկտրոնային գիրքեր, որոնք խորապէս ուսուսասիրուած նիւթերով եւ մշակութային թէ աշխարհագրական հարուստ բովանդակութեամբ գործնական ուղեցոյցներ են զբօսաշրջիկներու համար:



21 Նոյտեմբերին, Հայկական Հեռավար Գոլէճը պաշտօնապէս յայտարարեց, թէ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Միջազգային Զարգացման Օգնութեան (USAID) Հիմնադրամին եւ Սմիթսոնիըն Հիմնարկին կողմէ ֆինանսատրուած «Իմ Հայաստան» ծրագրին հետ կնքուած համագործակցութեան պաշտօնական համաձայնութեամբ, Հայաստանի մէջ զբօսաշրջիկութիւնը եւ բնապահպանութիւնը խթանելու նպատակով, ելեկտրոնային գիրք մը պիտի հրատարակէ Վայոց Ձորի շրջանին մասին:

Հ.Հ. Սփիւռքի Նախարարութիւն

2017-ի ընթացքին Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան շարք մը նախաձեռնութիւններուն, ինչպէս «Արի Տուն» ծրագիրը, «Սփիւռքի Ամառնային Դպրոց»ը, ԵՈՒՆԵՍԿՕ-ի «Մայրենի Լեզուի Օրուան Համագումար»ը եւ Հայաստան-Սփիւռք 6-րդ Համագումարը, Հայկական Հեռավար Գոլէճի ծրագիրը իր գործնական աջակցութիւնը ընձեռեց համապատասխան օժանդակ միջոցներ տրամադրելով աշխատանքներու ընթացքին:

Հանրապետութեան Ճատրակի Ակադեմիան

Հ.Հ. Ճատրակի Ակադեմիային համար, Հայկական Հեռավար Գոլէճը երկու նոր դասընթացքներ մշակեց, որոնք նաեւ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան որոշումով, որգեգրուեցան աւելի քան 45 հանրային դպրոցներու կողմէ:

Առցանց Ձրոյցներ

«Առցանց Ձրոյցներ» շարքը գոր չ.Բ.Ը.Մ.ը հրապարկեց 2016-ի Յունուարին, մասնագէներու հետ 2-10 վայրկեան տևողութեամբ կարճ բայց բովանդակալից հարցազրոյցներու միջոցաւ բոլորին մատչելի եւ խորապէս հմուտ մօտեցումով, կ'անդրադառնայ պատմական, գիտական եւ մշակութային այժմեական նիւթերու, արագ, հաճելի եւ ժամանակակից ճաշակի պահանջքնրը գոհացնող որակով: 2016-2017.ին, չ.Բ.Ը.Մ.ը 33 զրոյցներ հրապարակեց համացանցի իր յատուկ կայքէջին վրայ, agbuwebtalks.org հասցեով:

«Առցանց Ձրոյցներ»ու Գործընկերութիւններ

Չ.Բ.Ը.Մ.ի Առցանց Ձրոյցներու կարեւոր բաժին մը իրականացաւ Զօրեան Հիմնարին հետ համագործակցութեամբ, որ վաւերագրումի, ուսումնասիրական եւ միջազգային մարդկային իրաւանց, ցեղասպանութեան, Հայաստանի եւ Սփիւռքի վերաբերեալ նիւթեր մշակող եւ տարածող հաստատութիւն մըն է:

2017-ի Ապրիլին, Չ.Բ.Ը.Մ.ը գործընկերութիւն մը հաստատեց Հարաւային Քալիֆորնիոյ Համալսարանի *Շօսհ* Հիմնարկին հետ, գորս հիմնած էր աշխարհառշակ բեմադրիչ Սթիվըն Սփիլպըրկ եւ որուն առաքելութիւնը եղած է հաւաքել եւ վաւերագրել ցեղասպանութենէ եւ Հոլոքոսթէ վերապրած ականատեսներու վկայութիւնները: Չ.Բ.Ը.Մ.ի բոլոր Առցանց Ձրոյցները ընդգրկուեցան հիմնարկի «Կը Վկայեմ» (IWitness) մրցանակակիր կայքին մէջ, զանոնք հասանելի դարձնալով աւելի քան 100,000 երկրորդական վարժարաններու ուսուցիչներու եւ աշակերտներու, 80 երկիրներու մէջ:



Չ.Բ.Ը.Մ.ի Համակարգչային Ծրագրեր

Համակարգիչի կամ ելեկտրոնային առձեռն գործիքներու միջոցաւ մանուկներու համար լեզուի ուսուցման եւ մշակութային գիտելիքներու վերաբերեալ չորս ծրագրեր գործածութեան դրուեցան Չ.Բ.Ը.Մ.ի կողմէ 2017-ին: «Կաս Ան Տիր Կօ» լեզուի ծրագիրը Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն տարբերակներով, «Հայկական Տօներ եւ Աւանդութիւններ» եւ «Իմ Հայաստան-Մանուկներու Ճամբորդական Ուղեցոյց» Անգլերէն, Ֆրանսերէն եւ Փորթուկալերէն լեզուներով: Ծրագիրները լայն գործածութիւն ունեցան Միացեալ Նահանգներու, Միացեալ Թագաւորութեան, Պրագիլի, Ֆրանսայի, Լիբանանի եւ Գանատայի մէջ:

ԱՆԻ

ԱՆԻ-ն Աւստրալիայէն Բէյ եւ Մէլինէ Նազլումեան երիտասարդ քոյր եւ եղբոր հղացումով իրականացած ծրագիր մըն էր, որ համացանցային կապով Հայաստանէն եւ Միացեալ Նահանգներէն մասնակցողներ իրարու կը կապէր, շարաթական հեռավար հանդիպումներով Անգլերէն Խօսակցական լեզուի վարժութիւն քաջալերելու համար: 2016-ին, Չ.Բ.Ը.Մ. ը եւ Հեռավար Գոլէճը գործակցեցան ԱՆԻ-ին հետ, ընդլայնելով անոր հասողութեան ծիրը: 2017-ի Դեկտեմբերին, Հայաստանէն եւ Արցախէն 400 աշակերտներ եւ 300 կամուրներ արդէն կը մասնակցեին ծրագրին:





Հ.Բ.Ը.Մ.Ի ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

2016-2017-ին Հ.Բ.Ը.Մ.ը շարունակեց բարձրագոյն ուսման կրթաթոշակներ տրամադրելու իր երկար տարիներու ամենադիմադրաբար, օգնելով ուսումնաստենչ եւ տաղանդաւոր ուսանողներու որպէսզի անոնք կարենան իրականացնել իրենց ձգտումները: Կրթաթոշակներ, մրցանակներ, յատուկ յատկացումներ կատարուեցան բարձրագոյն կրթութեան տարբեր մակարդակներու եւ մասնագիտական մարզերու մէջ, Ճարտարագիտականէն մինչեւ կատարողական արուեստներ, ընկերային գիտութեանց, հանրային ծառայութեան, կրթութեան եւ առողջապահութեան բոլոր մասնագիտական մարզերը ներառեալ:

Կրթաթոշակներու համար որոշուած գումարները կը գոյանան այդ նպատակով բարերարներու կողմէ ստեղծուած հիմնադրամներու, կտակներու եւ անհատական յատուկ նուիրատուութիւններու հասոյթներէն: Միութիւնը որոշ քանակութեամբ կրթական յատկացումներ կը կատարէ Հայաստանի ուսումնական հաստատութիւններու, Հայաստանի մէջ բարձրագոյն ուսման հետեւող ուսանողներու համապատասխան օժանդակութիւն ցուցաբերելու նպատակով:



2017-ին, Հին Ձեռագիրներու Մատենադարան Հիմնարկի ուսումնասիրողներ, յատուկ կրթաթոշակներ ստացան իրենց մասնագիտական կարողութիւնները զարգացնելու համար:

Հ.Բ.Ը.Մ.ի Կրթաթոշակները – Ընդհանուր Ակնարկ 2016-2017 Կրթական Տարեշրջաններ



Կրթաթոշակներու Ընդհանուր Գումար – Ամերիկեան Տոլար
2016: **\$890,000** 2017: **\$803,000**



Հայաստանի մեջ Բարձրագոյն Ուսման Հիմնարկներու կատարուած Ցատկացումներ*
2016: **\$323,000** 2017: **\$294,000**



Կրթաթոշակ Ստացողներու Թիւ
2016: **518** 2017: **464**



Երկիրներու Թիւ Ուր Կրթաթոշակներ Տրամադրուած են
2016: **28** 2017: **33**

* Ներառուած են կրթաթոշակներ՝ տրամադրուած Հայաստանի մեջ սուրիահայ ուսանողներու եւ յատկացումներ Հայաստանի Ամերիկեան Համալսարանին, Հ.Ա.Հ.ի Արցախի մասնաճիւղին, Հայաստանի Ֆրանսական Համալսարանին, Սպաներու Ուսումնառութեան, Երեւանի Պետական Համալսարանին՝ անոր ի նպաստ հիմնադրամներու եկամուտներէն եւ Ազգային Մատենադարանին:

2016-2017-ի Կրթական Մրցանակակիրներ



Նարէկ Դշխանեան
Մէտէչուսեց Ինսթիթիութ օֆ Թէքնոլոճի
Մագիստրոս ճարտարաւուեստի եւ Մասնիկային
Կենսաբանութեան



Վարէն Պերպերեան
Գոլումպիա
Ճարտարապետութեան
Մագիստրոս



Ճուլիա Հինթլեան
Հարվըրտ
Աստուածաբանութեան Մագիստրոս Բաղրատական
Կրօնագիտութիւն



Հայկ Բաբսեղեան
Հարտալային Քալիֆորնիա-ԼԱ
Բժշկական Համալսարան



Նարէկ Յարութիւնեան
Մէնհէթըն Երաժշտական Դպրոց
Դասական Աւագարինգի Մագիստրոս



Վաչէ Ծամպագեան
Ճուլիարտ
Մագիստրոս Դաշնակի

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐՈՒ ԽՍԲԱԻՈՐՈՒՄՆԵՐ	ՏՐԱՄԱԴՐՈՒԱԾ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐՈՒ ԹԻՒ	
	2016	2017
Ամերիկայի մեջ Բարձրագոյն Ոստան Մագիստրոսական Մասնագիտութիւն	70	62
Կատարողական Արուեստներ Պսակաւոր եւ Մագիստրոսական	51	63
Կրօնագիտական Պսակաւոր եւ Մագիստրոսական – Աշխարհատարած	13	13
Միջազգային Պսակաւոր եւ Մագիստրոսական – Աշխարհատարած	321	342
Հայկական Ժառանգի Հ.Բ.Ը.Մ.ի Երկրդ. Վարժր.-է Շրջանաւարտներու	4	3

Միացեալ Նահանգներու մէջ Հ.Բ.Ը.Մ.ի Կրթաթոշակներ

Հայկական Ժառանգի Մրցանակներ տրամադրուեցան Հ.Բ.Ը.Մ.ի Ա.Մ.Ն.ի երկրորդական վարժարաններու բարձրագոյն կարգերէ գերազանցիկ շրջանաւարտներու, Միութեան Ալէքս եւ Մարի Մանուկեան (Միջիկըն), Մանուկեան-Տեմիրճեան (Քանոկա Փարք) եւ Վաչէ եւ Թամար Մանուկեան Վաժարաններէն, որոնք իրենց համապատասխան դպրոցներու տնօրէններուն եւ ուսուցչական կազմերուն կողմէ ընտրուած էին որպէս տիպար ուսանողներ, հիմնուած իրենց ուսումնական, վարքի եւ համայնքէն ներս տարբեր կազմակերպութիւններու մէջ իրենց կատարած ծառայութեանց ընդհանուր արժեւորումին վրայ:

Ուսումնական Գլխաւոր 4 Մարզեր

- Կենսաբանութիւն
- Մարմնակենսաբանութիւն
- Առեւտրական
- Բժշկական

Պսակաւոր Արուեստից Դպրոցներ

- Քալիֆորնիայի Համալսարան Լոս Անճէլըս
- Տիթոնի Մըրսի Գալէճ

Հ.Բ.Ը.Մ.ի Ա.Մ.Ն.ի Մագիստրոսականի Կրթաթոշակներ տրամադրուեցան ուսանողներու որոնք Ամերիկայի մէջ մրցունակ համալսարաններէ ներս կ'ուսանէին:

Մասնագիտական 5 Գլխաւոր Մարզեր

- Առեւտրական Վարչագիտութիւն, Տնտեսագիտութիւն, Ֆինանսներ
- Ճարտարագիտութիւն եւ Ճարտարարուեստ
- Իրաւաբանական տարբեր ճիւղեր
- Բժշկութիւն եւ Առողջապահական Գիտութիւններ
- Հանրային Վարչագիտութիւն եւ Քաղաքականութիւն

Համալսարաններ

- Գոլումպիա Նիւ Եորք
- Տարթմութի Նիւ Հէմշայր
- Տիւք Չիւսիսային Քարոլայնա
- Ճորճթաուն Ուաշինկթըն Տի Սի
- Հարվըրտ Մէշէչուսէց
- Ճանգ Հափքինգ Ուաշինկթըն Տի Սի
- Մէսէչուսէցի Ճարտարագիտութեան Հիմնարկ (Էմ Այ Թի)
- Սթենֆորտ Քալիֆորնիա
- Քալիֆոնիոյ Համալսարանի Բաժիններ
- Հարաւային Քալիֆորնիոյ Համալսարան

Հ.Բ.Ը.Մ.ի Ա.Մ.Ն.ի Կատարողական Արուեստներու Պսակաւոր եւ Մագիստրոսական կրթական մրցանակներ տրամադրուեցան, երաժշտութեան, յօրինումի, դերասանական, բեմադրական եւ շարժանկարի համար գրականութեան մշակումի մարզերու մէջ, տարբեր համալսարաններէ ներս մասնագիտացող ուսանողներու:

Համալսարաններ

- Պրիւքսէլի Արքայական Երաժշտանոց (Պէլճիքա)
- Գոլումպիա (Նիւ Եորք)
- Ճուլիարտ (Նիւ Եորք)
- Նիւ Ինկլէնտի Երաժշտանոց (Մէտէչուսէց)
- Մէնհէթընի Երաժշտական Դպրոց (Նիւ Եորք)
- Սան Ֆրանսիսքոյի Երաժշտանոց (Քալիֆորնիա)
- Սորպոնի Համալսարան, Փարիզ (Ֆրանսա)

Հ.Բ.Ը.Մ.ի Կրօնագիտութեան Կրթաթոշակներ տրամադրուեցան աշխարհի տարածքին Աստուածաբանական համալսարաններու ինչպէս նաեւ Նիւ Եորքի Ս. Ներսէս Ընծայարանին մէջ, Աստուածաբանութեան, հովուական, եւ քրիստոնէական դաստիարակութեան ճիւղերու մէջ բարձրագոյն ուսման հետեւող ուսանողներու:

Համալսարաններ

- Էնտովըրի Նիւթըն Աստուածաբանական Դպրոց (Մէտէչուսէց)
- Ֆորտհամ (Նիւ Եորք)
- Հարվըրտ Տիվինիթի Սքուլ (Մէտէչուսէց)
- Ս. Ներսէս Հայկական Ընծայարան եւ Ս. Վլատիմիր Առաքելական Աստուածաբանական Ընծայարան (Նիւ Եորք)
- Քէնթ Համայնքային Համալսարան (Օհայօ)

Միջազգային Կրթաթոշակներ

Հ.Բ.Ը.Մ.ի Միջազգային կրթաթոշակներ տրամադրուեցան 27 երկիրներու մէջ Պսակաւոր եւ Մագիստրոսական աստիճանի ուսանողներու:

Գլխաւոր 5 Մասնագիտական Մարզեր

- Միջազգային Յարաբերութիւններ / Տնտեսագիտութիւն / Քաղաքական Գիտութիւններ
- Թուաբանութիւն / Ճարտարագիտութիւն / Բնագիտութիւն
- Բժշկութիւն / Առողջապահական Գիտութիւններ
- Հոգեբանութիւն / Ընկերային Գիտութիւններ
- Լեզուաբանական եւ Մշակութային Գիտութիւններ

Միջազգային Համալսարաններ

- Պէյրութի Ամերիկեան Համալսարան (Լիբանան)
- ՔԹՀ Ճարտարագիտութեան Արքայական Հիմնարկ (Շուէտ)
- ՔԻԻ Լուվէն (Պէլճիքա)
- Լուտվիկ Մէքսիմիլիըն Ունիվերսիտատ Միւնիխ (Գերմանիա)
- Սքիլ (Գանատա)
- Մոսկուայի Բնագիտութեան եւ Ճարտարուեստի Հիմնարկ (Ռուսաստան)
- Հոնկ Գոնկի Համալսարան (Հոնկ Գոնկ)
- Քէմպրիճ (Միացեալ Թագաւորութիւն)
- Կրոնիկընի Համալսարան (Հոլանտա)
- Օքսֆորտ (Միացեալ Թագաւորութիւն)
- Թօրօնթոյի Համալսարան (Գանատա)
- Վիեննայի Համալսարան (Աւստրիա)





Հ.Բ.Ը.Մ.Ի ՎԱՐԺՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1 987-էն սկսեալ, Հ.Բ.Ը.Մ.Ի Վարժողական Ծրագրին մասնակցած մեծ թիով շրջանաւարտներ, այսօր երախտագիտութեամբ կ'անդրադառնան իրենց ձեռք բերած ասպարեզային փայլուն յաջողութիւններուն եւ իրենց մշակած բարեկամութիւններուն մէջ, այդ փորձառութեան ընձեռած առաւելութիւններուն մասին: 2016 եւ 2017 տարիներուն 140 մասնակիցներ, 12 տարբեր երկիրներէ, խօսուն փաստը կը հանդիսանային ծրագրի ընդարձակուող կարելիութիւններուն եւ բարձր որակին, որոնք արդիւնք էին այդ ուղղութեամբ առաջ տարուող ճիգերուն եւ Միութեան ապահոված գործընկերական յարաբերութիւններուն:

Ծրագիրը շարունակեց իր ուշադրութիւնը կեդրոնացնել ասպարեզային փորձառութեան, անհատական կազմաւորումի եւ փոխ-յարաբերութիւններու մշակումին նպաստող նախաձեռնութիւններու վրայ, որոնց նաեւ իրենց մասնակցութիւնը բերին նախկին շրջանաւարտներ, որպէս խորհրդատուներ, կամ գործուղողներ:

Ասպարեզային փորձառութիւններու առիթներ կարելի եղած էր ապահովել 98 ընկերութիւններու մէջ, որոնց շարքին յայտնի անուններ, ինչպէս *Ամազոն*, *Մերիլլ Լինչ*, *Մայքրլ Արամ*, *Մայքրոսոֆթ*, ինչպէս նաեւ *Իզմիրլեան Բժշկական Կեդրոն* եւ *Թաթեռեան Ընկերակցութիւն*:

2017-ին, Լոնտոնի, Փարիզի, Նիւ Եորքի եւ Երեւանի արդէն կազմաւորուած ծրագիրներուն միացաւ Պունտո Այրէսի նորաստեղծ ծրագիրը, նոր ցամաքամաս մը եւս աւելցնելով ընդարձակուող այս շարժումին:



Մեմինարներ, Հանդիպումներ և Ցարաբերություններու Մշակում

Ասպարեզային փորձառության կապակցությամբ, շտուկեցաւ առաջնորդութեան և խորհրդատուութեան բաղկացուցիչներու կարելորութիւնը և վարժողական ծրագիրներու մէջ այդ ուղղութեամբ շեշտադրումը: Նիւ Եորքի Երիտասարդ Արհեստավարժներու Խմբակցութիւնը, քննարկումներ և փարձառութեան փոխանակումի հանդիպումներ կազմակերպեց մասնակիցներուն համար: Լոնտոնի և Փարիզի մէջ, ձեռնարկատերերու և ֆինանսական ու պերճանքի ճարտարարուեստի մարզերու մէջ յաջողած գործարարներու հետ հանդիպումներ կազմակերպուեցան, Երեւանի վարժողական ծրագրի մասնակիցները հանդիպումներ ունեցան Հայաստանի և Արցախի բարձրաստիճան պաշտօնատարներու և համայնքային ղեկավարներու հետ:

Շրջայցեր և Հետազօտական Արշաւներ

Ամառնային աշխատանքներու ընթացքին տեղական մշակոյթին և համայնքներուն ծանօթացումը կարելոր մէկ մասը կը հանդիսանայ ընդհանուր փորձառութեան: Լոնտոնի մէջ Օքսֆորտի կամ Պրայթընի շրջակայքը օր մը անցնելը, Ֆրանսայի մէջ Վերսայի կամ Ֆօնթենայլեօի մէջ շաբաթավերջ մը, կամ Նիւ Եորքի մէջ Պրուքլինի պատմական կամուրջին վրայ զբօսնումը իւրաքնչիւր մանակցող խումբի համար գմայլելի փորձառութիւն մըն էր:

Երեւանի մէջ տեսարժան վայրերու և պատմական գլխաւոր վայրերու տրուած այցելութիւններու առընթեր, մասնակիցները հայերէն լեզուի դասընթացքներու հետեւեցան Հեռավար Գոլլէճի ծրագրին միջոցաւ, կամ ժողովրդային պարեր սորվեցան Նորքի Հայորդեայց Տան պարուսոյցներուն օգնութեամբ: Ընկերային ծառայութեան ծրագիրներով, անոնք այցելեցին Կիւմրի և Արցախ:

Պուէնոս Այրէսի վարժողական խումբը տեղւոյն համայնքին յատուկ ջերմ վերաբերումով շրջապատուեցաւ մասնակցելով նաեւ Արժանթինեան բնաշխարհի հետազօտման արշաւներու: Անոնք անբաժին չմնացին նաեւ Թանկոյի ելոյթներէ, վայելեցին տեղւոյն պատմական Գօլժօն Համերգասրահ այցելութիւնը և Սան Անթօնիօ Տէ Արեքոյի լայնատարած ազարակները:

ՆՇԱՔԱՐԵՐ

Երեւանի Ամառնային Փորձառութեան Ծրագիր
Երեւան, Հայաստան
10-ամեակ (2016)

Նիւ Եորքի Ամառնային Փորձառութեան Ծրագիր
Նիւ Եորք, Նիւ Եորք, ԱՄՆ
30-ամեակ (2017)



Լոնտոնի Ամառնային Վարժողական Ծրագրի մասնակիցները կը հանդիպին Պաքըս և Սթրաուս Ընկերութեան գլխաւոր գործադիր տնօրէն Վարդգէս Գնաճեանի հետ:



Նիւ Եորքի ծրագրի մասնակիցները գործի դիմորդի հարցաքննութեան քննարկումի աշխատանքային հանդիպումի մը ընթացքին:

Միօրեայ Վարժողական Ծրագիրներ

Լոս Անճելըսի Լրատուական Վարժողական Ծրագիր

2017-ին, սկսաւ Հ.Բ.Ը.Մ.ի Ամերիկայի Արեւմտեան Ափի շրջանակին նախաձեռնութեամբ, Լոս Անճելըսի Լրատուական Վարժողական ծրագիրը: Ծրագիրը առիթ կը ստեղծէ շրջանին մէջ ապրող աշակերտներու, լրատուական եւ ֆիլմարտադրութեան յայտնի հաստատութիւններէ ներս ծանօթանալու ասպարէզին եւ փորձառութիւն ձեռք բերելու այդ մարզին վերաբերեալ: Առաջին խումբին մասնակցեցան 5 դիմորդներ:

Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.ի` Հայաստանի Ֆրանսական Համալսարանի Ծրագիրը

Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.ին եւ Հայաստանի Ֆրանսական Համալսարանին միջեւ կնքուած համաձայնութեամբ, ամեն տարի ամառուան ընթացքին, ուսման մէջ յառաջադէմ համալսարանի չորրորդ տարուան ուսանողներ, Ֆրանսայի մէջ կը մասնակցին 7 շաբթուան վարժողական ծրագրին, ամեն տարի Յունուարէն Մարտ ամիսներուն, տեղական տարբեր ընկերութիւններու մէջ: Վարժողական տարբեր մարզերը կ'ընդգրկեն առեւտուր, Տնօրինում, իրաւագիտութիւն եւ Ֆինանսներ, քաջալերելով ֆրանսախօս հայ ուսանողները, որ միջազգային փորձառութիւն եւ շփուժներ ունենան: 2016, 2017 տարիներուն 27 աշակերտներ մասնակցեցան ծրագրին, անցնող տարիներուն մասնակցողներու ընդհանուր թիւը հասցնելով 200-ի:



Լոնտոնի Վարժողական Ծրագրի մասնակիցներ այցելեցին Ֆէյսպուքի Լոնտոնի Կեդրոնական Գրասենեակները ուր զիրենք հիւրընկալեց Ռուսիոյ եւ Անկախ Պետութիւններու Համախմբումի տարածաշրջանի Ֆէյսպուքի զարգացման բաժնի տնօրէն Դաւիթ Զօհրապեան:

Տիգրան Գնաճեան Յիշատակի Վարժողական Ծրագիր

2016-ի ամառուան ընթացքին Քէմպրիճի Քուինզ Գոլէճին մէջ, Անգլիա, Հ.Բ.Ը.Մ.ը, Գնաճեան ընտանիքին հեր համախորհուրդ, հիմնեց փոխանակումի ծրագիր մը, որ ամեն տարի Բժշկական ուսանողի մը առիթ կու տայ Հայաստանի մէջ վարժողական ծրագրի մասնակցելու, հոգալով ամբողջական ծախսը, առիթ ստեղծելով, որ մասնակից ուսանողը խորապէս ճանչնայ Հայաստանը:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի մշակութային ամենաբաբախուն դրսևորումը եղող երաժշտության արուեստին հետ շփուելու եւ մասնագիտական կարողություններ զարգացնելու այս բացառիկ պատեհությունն ուսուցանող 27 մասնակիցներ Արժանթինեն, Յունաստանեն, Լիբանանեն, Հոլանտայեն, Ռուսիայեն, Սրի Լանքայեն, Մուրիայեն եւ Միացեալ Նահանգներեն:

Երեք շաբթուան այս ծրագիրը կ'ընդգրկէ անհատական դասընթացներ Կոմիտաս Պետական Երաժշտանոցի դասախօսներու հետ, հայկական երաժշտութեան կատարողական ծրագիրներու պատրաստութեան վարժութիւն, ելոյթներ տեղական փառատօներու մէջ, հանդիպում եւ ծանօթացում արուեստագէտներու, ի վերջոյ ծրագրի աւարտին մասնակցութիւն եզրափակիչ *Կալա* համոյթին: Իրենց մասնակցութեամբ ծրագրին փայլ տուին Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիքի յայտնի դաշնակահարուհի Սվէթլանա Նավարսադճեան եւ հոչակաւոր Սօփրանօ Աննա Մայիլեան, իսկ յայտնի Ի Սի Էմ ձայնագրութեան ծանօթ արուեստագէտ Լուսինէ Գրիգորեան, առիթ ստեղծեց մասնակիցներուն, ելոյթ ունենալու Երեւանի ճէզ երաժշտութեան տարբեր հաւաքավայրերու մէջ:

Մասնակիցները առիթ ունեցան նաեւ վայելելու շրջայցեր, Տաթև եւ Մելանայ Լիճ, իրնց ձեռք բերած հմտութիւնները ի վերջոյ ի գործ դնելով իրենց տեղական շրջանակներուն մէջ:





Հ.Բ.Ը.Մ. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏՆԵՐ


Հ.Բ.Ը.Մ.ը շարունակեց արուեստի նկատմամբ իր յանձնառու քաղաքականությունը, որուն իբր արդիւնք Կատարողական Արուեստներու Բաժանմունքը ընդարձկեց իր գործունէութիւնը տարածուելով դէպի նոր ցամաքամասեր: Մեր մասնաճիւղերը կազմակերպեցին եւ հիւրընկալեցին երաժշտական բազմաթիւ ելոյթներ: Հայաստանի Հ.Բ.Ը.Մ.ը յատկապէս իրականացուց մեծ թիւով երաժշտական ձեռնարկներ, իր ընդարձակ կառոյցէն ներս հիւրընկալելով տաղանդաւոր արուեստագէտներ:

Հ.Բ.Ը.Մ.ը շարունակեց նաեւ տաղանդներու մշակումին ուղղուած իր գործունէութիւնը, իր ամենամեայ «Սայաթ Նովա Երաժշտական Յօրինումի Մրցոյթ»ով եւ սեղծագործական աշխատանքեր քաջալերող նիւթական յատկացումներով: Գարնեկի Հովի Ուէյլ հիմնարկի «Երաժշտական Հետախոյզներ» ծրագրին հետ գործակցութեամբ, կարելի եղաւ Նիւ Եորք քաղաքի տարածքին հանրային դպրոցներու մէջ աշակերտութեան ծանօթացնել հայկական երաժշտութիւնը:

2016-2017-ի գործունէութիւնները ցոյց տուին հայ մշակոյթի կենսունակութիւնը, որով ան տարածում գտաւ հայ թէ օտար լայն շրջանակներու մէջ աշխարհի տարածքին:

3 Նոյեմբեր 2017-ին, հարիւրաւոր հիւրեր Գարնեկի Հովի Ուէյլ Բիսայթըլ Հովին մէջ, վայելեցին Հ.Բ.Ը.Մ.ի Կատարողական Արուեստներու Բաժանմունքի տարեկան համոյթը, որ Նիւ Եորքի Յատուկ Ծրագիրներու Յանձնախումբի գլխաւոր ձեռնարկը կը հանդիսանայ: Հայաստանի Յօրինողներու Միութեան 85-ամեակը նշող ելոյթը, 50,000 տոյարի հասոյթ ապահովեց Միութեան արուեստի նախաձեռնութիւններուն համար աշխարհի տարածքին:





1. Կատարողական Արուեստներու Բաժանմունքը Հարաւային Ամերիկայի մէջ «Դուն ի՞նչ ըրած ես Արցախի համար» խորագրով ելոյթներ կազմակերպեց, որոնց հասոյթը տրամադրուեցաւ Արցախի երաժշտութեան դպրոցներու (2017):

2. Ֆրանսայի բաժանմունքը հիւրընկալեց ջութակահար Լուսինէ Յարութիւնեանի եւ դաշնակահար Վահան Մարտիրոսեանի ելոյթը Միութեան Փարիզի Ալէքս Մանուկեան Մշակութային Կեդրոնին մէջ (2016):

3. Բաժանմունքը հայկական ճէզ երաժշտութեան Ամերիկայի շրջապատոյտ մը կազմակերպեց «Միքայէլ Ոսկանեան եւ Ընկերներ» խումբին համար, մասնակցութեամբ Սեւանա Չաքրէեանի: Ելոյթները հիւրընկալեցին Հիսիսային Քալիֆորնիոյ Երիտասարդ Արհեստավարժները, Հարաւային Ափի Հ.Բ.Ը.Մ.ի Շրջանակը եւ Նիւ Եորքի կեդրոնական Գրասենեակը (2017):

4. Ֆրանսայի Բաժանմունքը մեկնարկեց «Բաց Բեմեր» ծրագիրը, Հ.Բ.Ը.Մ.ի կատարողական արուեստներու ուսումնական պարզեւներ շահած արուեստագէտներուն ելոյթներ կազմակերպելու համար (2017):

5. Հոծ բազմութիւն մը ներկայ գտնուեցաւ Տիգրան Համասեանի «Լոյս ի Լուսոյ» երաժշտական բեմադրութեան, Պրուքլինի ՊՐԻՔ սրահին մէջ (2016):

Յաջորդական սերունդներու համար Հ.Բ.Ը.Մ.ի մշակութային համոյթները առիթ հանդիսացած են աշխարհի տարածքին իրարու մօտ բերելու համայնքները, վերաբարձելու ասանդութիւններ եւ խանդավառելու արուեստագէտներ եւ արուեստասերներ: 2016-ին եւ 2017-ին, նոր խումբեր ի յայտ եկան, ինչպէս Սիտնիի Հ.Բ.Ը.Մ. Թամգարա Պարախումբը: 2016-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Փլովտիի Երեբունի Նուագախումբը նշեց իր 45-րդ տարեդարձը: Աշխուժացաւ նաեւ թատերական շարժումը յատկապէս Հ.Բ.Ը.Մ. – Հ.Ե.Ը.ի Հալէպի Պետրոս Ադամեան Թատերախումբի վերադարձով, Սուրիոյ պատերազմին պատճառով դադարէ մը ետք:

1. Հ.Բ.Ը.Մ.ի Անդրանիկ Պարախումբը (Նիւ Եորք եւ Երջակայք) շարունակեց իր գործունէութիւնը 2016-2017 տարիներուն, սկսելով նաեւ փոքրերու բաժին մը:

2. Գողթան Երգչախումբը (Փարիզ) 2016-էն մինչեւ 2017, վեց համոյթներով ելոյթ ունեցաւ հոջակավոր սրահներու մէջ, ինչպէս Ֆրանսական Ծերակոյտի սրահը, *Մէնթ Տէնի Պագիլիքա-ն* եւ «10 Տը Քէօր» Փառատօնը:

3. 2016-ին, Քորտապայի Հ.Բ.Ը.Մ.ի պարախումբը մասնակցեցաւ «Մէկ Քաղաք Բոլոր Ազգութիւններ» փառատօնին որ կազմակերպուած էր քաղաքապետարանին կողմէ: Այլ ազգերու կողքին, ինչպէս Ճաբոն, Փէրու, Բտալիա, Լեհաստան, պարախումբը Արժանքի լայն շրջանակին ներկայացուց հայկական մշակոյթը:

4. Քալիֆորնիայի մէջ Հ.Բ.Ը.Մ.ի Գրիգոր Սաթամեան Թատերախումբը ներկայացուց անգլիական «Ֆանի Մանի» կատակերգութիւնը, Լոս Անճելըսի մէջ, նաեւ ամերիկեան «Թէնոր մը կ'ուզուի» կատակերգութիւնը, գոր ան ներկայացուց նոյնպէս Նիւ Ճէրզիի մէջ ընդհանուր 10 յաջորդական ելոյթներով 2017-ին: Նոյն տարին անոնք գործակցեցան Հայկական Քրիստոնէական Օգնութեան եւ *Փանգաս* կազմակերպութիւններուն Քալիֆորնիոյ մէջ, ներկայացնելու *համարՍիւֆոնիա Փէտտինա* համայնքային Համոյթը «Մարդկային Ոգիի Յաղթանակը» խորագրով, ղեկավարութեամբ Մայելթթօ Արթօ Չիֆճեանի:

5. 2016-ին, ստեղծուեցան Փլովտիի Նոենի եւ Աստղիկներ պարախումբերը:

6. Սոֆիայի Հ.Բ.Ը.Մ.ի Մենեկային Նուագախումբը Պարօք եւ դասական երաժշտութեամբ հանդէս եկաւ 2017-ին:

7. Փլովտիի Երեբունի Նուագախումբը կալա համոյթ մը ներկայացուց Հ.Բ.Ը.Մ.ի 110-ամեակին, Հայաստանի Անկախութեան 25-ամեակին եւ իր 45-ամեակին առիթներով, 2016-ին: Յաջորդ տարին անոնք հրապարակեցին իրենց հինգերորդ ալպովը «Հաւատում եմ» խորագրով:

8. 2017-ին, Սիտնիի Թամգարա Պարախումբը իր անդրանիկ ելոյթը ունեցաւ լեցուն հանդիսասարահի մէջ:

9. Հ.Ե.Ը.ի Լիբանանի Արենի Պարախումբը Էմիլ Լահուտ Համագումարներու Դահլիճին մէջ շլացուց հանդիսատեսները յայտագրի «Հայոց Հովիկ» եւ «Քարուսէլ» բաժիններով 2017-ին: Խումբը նաեւ յատուկ յայտագրով հանդէս եկաւ Հ.Բ.Ը.Մ. ի *Երիտասարդ Ահեստավարժներու ՖՈՔԼՍ* համագումարին որ նոյն տարին կայացաւ լիբանանի մէջ:





2

ՆՇԱԶԱՐՆԵՐ

Էրեբունի Նուագախումբ
Փլովտի, Պուլկարիա
45-ամեակ (2016)

Սիազանգ Թատերախումբ
Փարիզ, Ֆրանսա
25-ամեակ (2016)

Սենեկային Նուագախումբ
Մոֆիա, Պուլկարիա
10-ամեակ (2016)



5



7



8



9



Հ.Բ.Ը.Մ.Ի ՄԿԱՌԻՏՆԵՐ

Հ.Բ.Ը.Մ.Ի սկաուտները շարունակեցին իրենց օրինակելի ծառայութիւնը համայնքային առաջնորդութեան եւ օգնութեան ծրագիրներով: 1940-էն սկսող իրենց աւանդական խոր արմատներով, Արժանքինի, Հայաստանի, Գանատայի, Իրաքի, Լիբանանի, Սուրիոյ, Ուրուկուէյի եւ Ամերիկայի խումբերը իրենց անդամներուն փոխանցուած խմբային աշխատանքի, կամքի եւ ծառայութեան անժամանցելի արժէքներով, դաստիարակչական կարեւոր գործունէութիւն ծաւալեցին:

Տարբեր երկիրներու մէջ մեր սկաուտները ցուցաբերեցին հանրային ծառայութեան եռանդուն գործունէութիւններ, շրջապատի մաքրութեան եւ բնապահպանութեան աշխատանքներով: Հ.Բ.Ը.Մ. Փէսէտինայի եւ Կլէնտէյլի սկաուտները Հայաստանի մէջ Սեւանայ Լիճին շուրջ մաքրութեան աշխատանք կատարեցին: Մոնթրէալի մէջ Երէց Սկաուտներու ղեկավարութեամբ, այլ գործունէութիւններու շարքին սկաուտները նորոգեցին Ալէքս Մանուկեան Կեդրոնի իրենց յատկացուած տարածքը:

Հ.Բ.Ը.Մ.Ի Երեւանի սկաուտները ամէն տարի Ծննդեան Տօնին կանոնաւորաբար այցելութիւններ կը կատարեն Արաբկիրի Բժշկական Ծառայութիւններու Կեդրոն, նուէրներ բաշխելով, իսկ երկրագունդի միւս ծայրին, Պունտս Այրէսի Սկաուտական Անդրանիկ Խումբի անդամները տեղական մարմիններու հետ գործակցութեամբ 2016-ին տնագործութեան համար ճաշի սպասարկութեան աշխատանքներու

2016-ին Վեթերաններու Օրուան քայլարշաւին մասնակցել ետք, Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.Ի Լոս Անճելըսի Սան Ֆերնանտո Վելիի սկաուտները դրամահաւար կազմակերպեցին Հայաստանի բարեկարգելու օգտին:



մասնակցեցան: Անոնք նաև իրենց բաժինը բերին աշխատանքային հանդիպումներու, որոնք ուղղուած էին համաշխարհային մարդկային իրաւանց եւ սեռային հաւասարութեան:

Բանակոււմները սկաուտական գործունէութիւններու առանցքային բաժինը կը կազմեն: Հ.Բ.Ը.Մ.ի 450 սկաուտներ, Հայաստանէն, Վրաստանէն, Իրաքէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, ամէն տարի կը հաւաքուին Միութեան Հայաստանի Լոռի շրջանի բանակավայրին մէջ, ուր սկաուտական ընթացիկ գործունէութիւններու շարքին, անոնք այցելութիւններով եւ արշաւներով կը ծանօթանան իրենց հայրենի մշակոյթին եւ պատմութեան: Իրենց կարգին, Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.ի Անդրանիկ Անթիլեսս եւ Անդրանիկ Սեւան խումբերու 600 սկաուտներ, 2016-ին 15-օրեայ բանակում իրականացուցին բնութեան ծոցին:



1

ՆՇԱՔԱՐԵՐ

Հ.Բ.Ը.Մ.ի Անդրանիկ Սկաուտական Բանակավայր

Լերմոնտովո, Հայաստան
10-ամեակ (2017)

Արժանթինի Սկաուտական Շարժում

Պուէնոս Այրէս, Արժանթին
30-ամեակ (2016)

1. Երեւանի Հ.Բ.Ը.Մ. ի սկաուտներ:
2. Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.ի սկաուտները իրենց մասնակցութիւնը բերին 2017-ի Պէյրութի Միջազգային Մարաթօնին եւ կատարեցին մրցանակաբաշխութիւնը մրցումի աւարտին:
3. Հ.Բ.Ը.Մ.ի Անդրանիկ Բանակավայրը հիւրընկալեց 200 սկաուտներ Հայաստանէն, Վրաստանէն եւ Լիբանանէն, Հայաստանի Լերմոնտովո շրջանին մէջ կայացող ամառնային բանակումին:
4. 2016-ին, Մոնթրէալի մէջ, առաջին անգամ ըլլալով փոքրերու սկաուտական Մեղու խմբակ մը կազմուեցաւ:



2



3



4



Հ.Բ.Ը.Մ. ՄԱՐԶԱԿԱՆ

Աշխարհի տարածքին Հ.Բ.Ը.Մ.ի մարզիկները զիրար կապող մարզական ոգիին բաղկացուցիչներն են ֆիզիքական առողջության, խմբային աշխատանքի եւ վստահության սկզբունքները: Միաժամանակ, մարզական մրցակցությունը կեանքի արժեքաւոր ձիրքեր կը մշակէ մարզադաշտէն ներս կամ դուրս: 2016 եւ 2017 տարիներուն տարբեր տեսակի մարզաձեւերով իրականացած գործունէութիւնները խանդավառող են անկասկած:



Այս երկու տարիներուն իրականացան շարք մը յաղթական ձեռքբերումներ մրցաշարքերու մէջ: Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.ի պասէթպոլի նորոգուած մարզադաշտը հիւրընկալեց Եգիպտոսի Համահայկական Մրցախաղերը որուն մասնակցեցան տարբեր տարիքի մարզիկներ: Միւս կողմէ, Թորոնթոյի Մարզական եւ Երիտասարդական Յանձնախումբը, Հ.Բ.Ը.Մ.ի 110-ամեակը նշեց, համախմբելով տարբեր տարիներու եւ սերունդի իր մարզիկները, Մարզական Շարժումի Շրջանաւարտներու Կալա տօնախմբումին: Պուէնտս Այրէսի մէջ, 200-է աւելի մարզիկներ հաւաքուեցան Քորտոպայէն, Մոնտեվիտօէն եւ Սան Փաուլոյէն, մասնակցելու համար Հարաւային Ամերիկայի միջ-հաւաքական մրցաշարքին, որուն մաս կը կազմէին նաեւ ընկերային հաւաքոյթներ: Քալիֆորնիայի մէջ Լոս Անձելըսէն, Փէսէտինա-Գլէնտէլէն, Սան Ֆերնանտօ Վէլիէն, ինչպէս նաեւ Սանուկեան-Տեմիքճեան Վարժարանէն մարզիկներ մասնակցեցան Լոս Անձելսը Սփարքս-ի հիւրընկալած

4-րդ տարեկան Հայկական Տոնախմբութեան Երեկոյին, աշխարհահռչակ *Մթէյփըլլս* Կեդրոնին մէջ: Հ.Բ.Ը.Մ.ի մարզական շարժումին մասնակցող իւրաքանչիւր միութեանական, ինքնագիտակցութեան եւ ընդհանրական պատկանելիութեան անփոխարինելի զգացումը կը վայելէ:

ՆՇԱՔԱՐԵՐ

Հ.Բ.Ը.Մ.ի Անդրանիկ Սկաւուտական Բանակավայր

Լերմոնտովո, Հայաստան
10-ամեակ (2017)



1



2



3



4


1. Հարաւային Ամերիկայի Միջ-Հաւաքական Մրցաշարք – Պուէնոս Այրես
2. Հ.Բ.Ը.Մ. Անդրանիկ կրտսերներու ոտնագնդակի խումբ - Լիբանան:
3. Փէսէտինա-Կլէնտլլ աղջկանց վօլէպօլի խումբ:
4. Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի տղոց Պասքէթպօլի խումբ:



Հ.Բ.Ը.Մ.Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՆԵՐ

Հ.Բ.Ը.Մ.Ի միօրեայ եւ գիշերօթիկ ճամբարները, անկախ, ապահով եւ հոգատար մթնոլորտի մեջ, առիթ կու տան մասնակից պատանիներուն մշակելու իրենց բնատուր տաղանդները եւ ընկերային ձիրքերը: 2016-2017-ին, մեծ թիւով պատանիներ մասնակցեցան Քէմփ Նուպար, Քոլոնի Տը Վաքանս եւ Տէմփրճեան Կեդրոնի ճամբարային գործունէութիւններուն: Աւելի քան 1000 մասնակիցներու ընդհանուր թիւ մը, առիթ ունեցան հասակակիցներու հետ ջերմ բարեկամութիւններ մշակելու, միաժամանակ ծանօթանալով իրենց ազգային ժառանգութեան:

Ֆրանսայի Ալփեան եւ Նիւ Եորքի Քէթցքիլ լեռնային բնութեան հրաշալի շրջապատին, Պէյրութի մարզական գեղեցիկ համալիրին, Պուլկարիոյ բացօդեայ բանակավայրին կամ Արժանթինի Միութեան Կեդրոնի լողաւազանին ընձեռած կարելիութիւնները լաւագոյնս օգտագործուեցան ճամբարային ամառնային ծրագիրներուն համար:



Ճամբարներուն մասնակցեցան տարբեր երկիրներէ պատանիներ

Հայաստան, Արժանթին, Աւստրալիա, Աւստրիա, Պէլճիքա, Գանատա, Չինաստան, Ֆրանսա, Հայիթի, Լիբանան, Մէքսիքո, Սօնաքո, Հիւսիսային Իրլանդա, Լեհաստան, Ռուսիա, Զուիցերիա, Թայլէնտ, Թուրքիա, Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Միացեալ Թագաւորութիւն եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ:

■ 2016-2017-ի ճամբարներուն մասնակիցներու երկիրները

Փեւտինայի Միօրեայ Ճամբար (Փեւտինա, Ա.Մ.Ն.)



ՆՇԱՔԱՐԵՐ

Փեւտինայի Միօրեայ Ճամբար
Փեւտինա, Ա.Մ.Ն.
5-ամեակ (2017)

Հայլեռ Ճամբար (Սոֆիա, Պուլկարիա)



Քօլօնի Տը Վարանս (Հօթ Սաւուա, Ֆրանսա)



Նուպար Ճամբար (Նիւ Եորք, Ա.Մ.Ն.)



Տեմիրճեան Կեդրոն (Անթիլիաս, Լիբանան)



Գիշերօթիկ Ճամբարներ

ՀԱՅԱՍՏԱՆ, Վանաձոր - Անդրանիկ Սկաուտ. Բանակում
ՊՈՒԼԿԱՐԻԱ, Փլովտիւ - Հայլեռ Ճամբար
ՊՈՒԼԿԱՐԻԱ, Սոֆիա - Հայլեռ Ճամբար
ՖՐԱՆՍԱ, Հօթ Սաւուա - Քօլօնի Տը Վարանս
ՍՈՒՐԻԱ, Քէսապ - Քէսապ Ճամբար
Ա.Մ.Ն., Նիւ Եորք - Նուպար Ճամբար

Միօրեայ Ճամբարներ

ԱՐՃԱՆԹԻՆ, Պուէնու Այրեւ - Քոլոնիա Տը Վարասիօնէ Միօրեայ
ԱՐՃԱՆԹԻՆ, Քօրտօպա - Քոլոնիա Տը Վարասիօնէ Միօրեայ
ԳԱՆԱՏԱ, Սոնթրեալ - Հայորդեայց Ճամբար
ԻՐԱՔ, ՊԱՂՏԱՏ - Երջանիկ Թաճիրեան Ամառնային Ճամբար
ԼԻԲԱՆԱՆ, Անթիլիաս - Տեմիրճեան Կեդրոն
ՍՈՒՐԻԱ, Դամասկոս - Հայ Ամառ Ամառնային Ճամբար
Ա.Մ.Ն., Փեւտինա - Փեւտինայի Միօրեայ Ճամբար (այժմ Ամառաս Ճամբար)



Հ.Բ.Ը.Մ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՅՑԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Հ.Բ.Ը.Մ.ը հետեւողական թափով շարունակեց կազմակերպել երիտասարդներու այցերը Հայաստան: Այցելող խումբերուն համար, Երիտասարդ Արհեստավարժներ, Վարժողական Ծրագրի Մասնակիցներ կամ Հ.Բ.Ը.Մ.ի դպրոցներու աշակերտներ, Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի Կեդրոնը եւ ծրագիրները, բոլորին ուշադրութեան սեւեռակէտը կը հանդիսանային:

Յայտնաբերէ Հայաստանը

2016-ին եւ 2017-ին, 70 հայ պատանիներ, Հայաստանէն, Պուլկարիայէն, Գանատայէն, Ֆրանսայէն, Լիբանանէն, Ռուսիայէն, Թուրքիայէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Միացեալ Թագաւորութենէն, Միացեալ Նահանգներէն եւ Վենէզուելայէն, միացան «Յայտնաբերէ Հայաստանը» ծրագրին, այցելելու համար իրենց հայրենիքը եւ մասնակցելու ընկերային ծառայութեան ծրագիրներու: Բոլոր գլխաւոր տեսարժան վայրերու այցելութիւններէն զատ, Հայաստանի եւ Արցախի մէջ, մասնակիցները օգնեցին երկու ընտանիքներու համար բնակարաններ կառուցելու աշխատանքին, Վարսեր եւ Ներքին Բազմաբերդ գիւղերուն մէջ: Անոնք նաեւ օգնեցին տարեցներու ճաշարաններուն մէջ եւ այցելեցին Վանաձորի որբանոցը, նուէրներ բաշխելով տեղոյն մանուկներուն:

Արցախ այցելութեան ընթացքին, անոնք գիրքեր նուիրեցին Յովհաննէս Թումանեան Մանկական Գրադարանի օտարալեզու գիրքերու բաժնին, Ստեփանակերտի մէջ, ուր գրադարանը 2016-ին հիմնուած էր Յայտնաբերէ Հայաստանը ծրագրին կողմէ: Մասնակիցները նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի Հայորեայց Տան մէջ երգի եւ պարի դասերու հետեւեցան իրենց ձիրքերը ներկայացնելով եզրափակիչ հանդիսութեան ընթացքին:



Կենսաց Հոդ

2017-ին, 34 կամաւորներ, Հայաստան այցելեցին մասնակցելու համար այս մեծ ժողովրդականութիւն վայելող շարժումին, որուն նպատակն էր բարելաւել գիւղերու կեանքը, կրթութեան եւ բնապահպանումի մարզերուն մէջ: Ասիկա, իր տեսակին մէջ կատարուած 4-րդ այցն էր:

Մասնակիցները յետ-գովէճական հայ եւ ոչ-հայ կամաւորներ էին, որոնք երեք շաբաթներ անցուցին Դաւուշի մարզի Սարիգիւղ գիւղին մէջ, նորոգելով անոր նախակրթարանի շէնքը: Անոնք նաեւ աշխատեցան մանուկներու հետ, անոնց ակօսներու առողջապահութիւն եւ բնապահպանութիւն սորվեցնելով: Տեղւոյն վրայ ապրելով, անոնք աւելի խոր ըմբռնում ձեռք բերին տեղացիներու կեանքին եւ առօրեային մասին:

Դպրոցական Այցեր

Հ.Բ.Ը.Մ.ի Դպրոցներէն ներս որդեգրուած է իրենց բարձր դասարաններու աշակերտներուն համար տարեկան այցեր կազմակերպել Հայաստան: Աշակերտները իրենց այցելութեան ընթացքին կը ծանօթանան Հայաստանի մէջ Հ.Բ.Ը.Մ.ի իրականացուցած ծրագիրներուն, կայցելեն Միութեան Երեւանի Կեդրոնը, հանդիպումներ կ'ունենան պատասխանատուներու հետ, կ'այցելեն ԹՈՒՄՈ ստեղծագործական ճարտարարուեստներու կեդրոնը, ինչպէս նաեւ Հայորեայց Տուններ եւ Տարեցներու ճաշարաններ:

Հետեւեալ Դպրոցներու Աշակերտները Հայաստան Այցելեցին

- Հ.Բ.Ը.Մ.ի Ալէքս եւ Մարի Մանուկեան Վարժարան (Մաութֆիլտ, Միջիկըն) 2016
- Հ.Բ.Ը.Մ.ի Մարի Մանուկեան Վարժարան (Պուէնտս Այրէս) 2016, 2017
- Հ.Բ.Ը.Մ.ի Մարի Մանուկեան Վարժարան (Քանսոկա Փարք, Քալիֆորնիա) 2016, 2017
- Հ.Բ.Ը.Մ.ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժ. (Փէսէտինա, Քալիֆորնիա) 2016, 2017



Կամաւորներ կ'օգնեն Դաւուշի Սարիգիւղ գիւղի նախակրթարանի նորոգութեան:



Հ.Բ.Ը.Մ.ի Մարի Մանուկեան վարժարանի աշակերտները (Պուէնտս Այրէս) իրենց Հայաստան այցելութեան ընթացքին կը հանդիպին Վեհափառ Հայրապետին:



Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի (Քալիֆորնիա) աշակերտները Օփերայի շէնքին առջեւ 2017-ին իրենց Հայաստան այցին ընթացքին:

ՊԱՐԳԵԻԱՏՐԵԱԼՆԵՐ- 2016 ԵՒ 2017



Միլվիա Աղաբեկյան անխոնջ կերպով իր ժամանակը եւ ճիգերը նուիրեց Հ.Բ.Ը.Մ.-ին, որպէս Սիտնիի Ալեք Մանուկեան շաբաթօրեայ դպրոցի նախկին տնօրէն: Գրեթէ չորս տասնամեակ, նախ որպէս ուսուցիչ, իսկ յետոյ որպէս տնօրէն իր ծառայութիւններու միջոցով ամրապնդեց ուսանողներու եւ անձնակազմի միջեւ կապը, մեծապէս նպաստելով նոր սերունդի առաջնորդներու աճին: Առ ի գնահատանք իր գործունէութեան, Աղաբեկեան արժանացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամ տիտղոսին 2017ին:

2017-ին, Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամ տիտղոսին արժանացած **Պերճ Ազատեան**, ծառայած է Հ.Բ.Ը.Մ. Լոնտոնի Հիմնադրամին, սկսելով 2005էն եւ 2007-2014էն, որպէս նախագահ Հիմնադրամին: Ազատեանի տասնամեակներու փայլուն ղեկավարութիւնը, անթիւ ծառայութիւնները եւ անխախտ նուիրումը աւելի քան տասնամեակի մը ընթացքին, ազդած են գաղութի տեղական թէ ընդհանրապէս Սփիւռքի կեանքին վրայ:



Հէլիո Պապեան, Հ.Բ.Ը.Մ.-ի Սան Փաուլոյի Մասնաճիւղին ծառայած է տարիներ շարունակ, 2012-2016 տարեշրջաններուն վարելով Մասնաճիւղին Ատենապետի պաշտօնը: Ան առաջնորդող դեր կատարած է տեղական ունեցող երիտասարդներ ներգրաւելու եւ Մասնաճիւղէն ներս աշխուժութեան նոր ալիք ձեւաւորելու գործին մէջ, միեւնոյն ատեն պահպանելով անցեալի համայնքային արանդոյթները:

Հ.Բ.Ը.Մ.-ի Յովակիմեան վարժարանի շրջանաւարտ **Արմէն Պճաջեան**, Հ.Բ.Ը.Մ.ի կառոյցներէն ներս գործած է սկսած իր ծննդավայր Լիբանանէն: Տեղափոխուելով Գանատա, ան ղեկավար պաշտօններ ստանձնած է Հ.Բ.Ը.Մ.ի մէջ, նախ որպէս Հ.Բ.Ը.Մ.-ի Մոնթրէալի Գործադիր Մարմնի Ատենապետ Ատենապետ (2007-2011), ապա Ալեք Մանուկեան Վարժարանի Հոգաբարձուներու Մարմնի (2011-2017) եւ Արմէն-Քէլպէի Հոգաբարձուներու Մարմնի Ատենապետ (2011-2017): Իր մատուցած ծառայութիւններուն եւ նուիրումին համար ան արժանացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ անդամ տիտղոսին:



Հ.Բ.Ը.Մ.-ի *Լանտրն Թրասթ*-ի նախկին հոգաբարձութեան անդամ **Ասատուր Կիզէլեան** 2017ին արժանացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամ տիտղոսին առ ի գնահատանք իր յանձնառութեան ոգիին եւ Սփիւռքին բերած բազմամեայ ծառայութիւններուն: 2007-էն մինչեւ 2017 ջանասիրաբար ծառայելով Հ.Բ.Ը.Մ.-ի *Լանտրն Թրասթ*-ին, ան եռանդուն կերպով տարածած է երաժշտութիւն եւ արուեստ, հարստացնելով Լոնտոնի հայ գաղութի մշակութային կեանքը եւ կազմակերպելով բազմաթիւ համերգներ: Քաջակերելով հայ խոստմնալից երաժիշտները, Կիզէլեան կը շարունակէ նոր տաղանդներ ներկայացնել արուեստասէր հանրութեան:

Անտրեա եւ Պերրի Հալէճեաններ եղած են Հ.Բ.Ը.Մ.-ի նուիրեալ ղեկավարներ: Առատաձեռնօրէն աջակցելով Քէմփ Նուպարին, անոնք ներդրումներ կատարած են երիտասարդ առաջնորդներ պատրաստելու եւ համայնքային կեանքը աշխուժացնելու ուղղութեամբ: Հալէճեաններ Քէմփ Նուպարի ժառանգութեան ներկայացուցիչներ Հ.Բ.Ը.Մ.ի նկատմամբ են: Անոնց ծնողները նոյնպէս մեծ դեր ունեցած են Քէմփ Նուպարի հիմնադրութեան մէջ: Անտրեա եւ Պերրի Հալէճեաններու ցուցաբերած յանձնառութեան ոգին, հոգատարութիւնը եւ շարունակական նպաստը գնահատուեցաւ Նախագահի Պարգևով (Անտրեայի պարագային՝ յետ մահու):



Վահէ Քիլէճեան երկու տասնամեակներ շարունակ իր պաշտօնավարութեան ընթացքին, իր հմտութիւնները ի գործ դրած է ցուցաբերելով հաւատարմութիւն միութենականի բարձր ոգի եւ բժախնդրութիւն: 2016-ին, իր գործունէութիւնը գնահատուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահի Պարգևով: Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-ի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի աշխոյժ շրջանաւարտներէն, Քիլէճեան Նիւ Եորքի Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական գրասենեակէն ներս պաշտօնավարած է որպէս Ֆինանսներու վերահսկիչ: Ներկայիս կը պաշտօնավարէ որպէս Ֆինանսներու բաժնի տնօրէն:

Փաթրիք Մալաքեան Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահի Պարգևին արժանացաւ 2016ին՝ առ ի գնահատանք ընկերային եւ գեղարուեստի ասպարէզներու մէջ Միութեան մատուցած իր բազմամեայ ծառայութիւններուն: Ան զօրաշարժի ենթարկելով Հ.Բ.Ը.Մ.-ի Երեսնի Նորքի Հայորդեայց Տան սաները, իրականացուցած էր Հայոց Յեղասպանութեան 100-Ամեակին նուիրուած «Յաւերժութիւն» ներկայացումը, զոր բեմադրած էր Մարսելլի մէջ: Այդ ներկայացումը հիմք հիմք ծառայեց ՀՈԳԻՄ-ին, որ ան բեմադրեց Միութեան 110-ամեակին առթիւ, Նիւ Եորք: Մալաքեան ատենապետն է Հ.Բ.Ը.Մ.ի Մարսելլի մասնաճիւղին: Արուեստի միջոցաւ ան կը միացնէ համայնքները:



Գիտակցական իր ողջ կեանքը Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի թէ Գանատայի կառոյցներուն առնչած **Միլվա Ճիկերեան-Մանկասարեանի սերը եւ նուիրումը արուեստին եւ մշակոյթին զինք դարձուցած են մշակութային ձեռնարկներու կազմակերպիչ** եւ նախաձեռնող միութենական մը: Ան մշտապէս քաջալերած է հայ արուեստագէտները Մփիտքի տարածքին: Համագաղութային ծառայութեան իր յանձնառութիւնը ընկերային եւ մշակութային ասպարէզներու մէջ, Հ.Բ.Ը.Մ.-ի Մոնթրէալի Մասնաճիւղի Գործադիր Մարմնի անդամակցութիւնը աւելի քան մէկ տասնամեակ, ինչպէս նաեւ 2011էն ի վեր Գործադիր Մարմնի Փոխ-Ատենապետուհիի գործունէութիւնները գնահատուեցան Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի տիտղոսով, 2017 թուականին:

Լորանս Հ. Փիթթ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Հոգաբարձուներու Խորհուրդի ատենապետի պաշտօնը ստանձնած էր 2012ին, հրաժարելէ ետք Գալիֆորնիոյ Համալսարանի Ակադեմական հարցերու գծով Փոխ-Նախագահի պաշտօնէն: Հայաստանի Ամերիկեան Համալսարանի գիտական աստիճանը միջազգային մակարդակի բարձրացնելու ուղղութեամբ գործադրած ձիգերուն համար ան արժանացաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամի տիտղոսին, 2016ին:



ՊԱՐԳԵԻԱՏՐԵԱԼՆԵՐ- 2016 ԵՒ 2017



Հայաշխարհի սկաուտական շարժման ամենայայտնի դերերեն **Գեորգ Սանթուրյան** Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.-Անդրանիկի Գործադիր Տնօրենի պաշտօնը վարած է աւելի քան 20 տարի: Իր գործունեության ընթացքին մշակութային բազմաթիւ ծրագիրներու շարքին ծաղկած էին նաեւ Արին պարաօլիմպիկ եւ Վահրամ Փափազեան թատերախումբի գործունեությունները: 2008ին Սանթուրյան օգնեց հիմնելու Հայաստանի Անդրանիկ Սկաուտական Բանակումը, որուն առաջին տնօրենն էր ան: Սկաուտներու յաջորդական սերունդներու հանդէպ ցուցաբերած հոգատարությունը եւ ուշադրությունը գնահատուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահի Պարգևով, 2016ին:

Շահէ Թանաշեանի առաջին մասնակցությունը եղաւ Մոնթրէալի Երիտասարդաց Յանձնախումբի եւ Երիտասարդ Արիեստավարժներու Խմբակցութեան շրջանակներուն մէջ: Աւելի ուշ ան շարունակեց ծառայել որպէս անդամ Հ.Բ.Ը.Մ.-ի Մոնթրէալի Վարչութեան, 2005-2007 տարեշրջաններուն, աւելի ուշ որպէս Փոխ-Ատենապետ, 2011-2013 տարեշրջաններուն: 2014ին ի վեր կը վարէ Ատենապետի պաշտօնը: Ան Հ.Բ.Ը.Մ.-ի Մանուէլ Քէօսէեան Հայագիտական Ուսմանց Ծրագրի տնօրենն է, 2007ին ի վեր: Հանգուցեալ հայագէտ եւ բանաստեղծ Մանուէլ Քէօսէեան ժողովրդային այս դասընթացներու կեդրոնը հիմնած էր 2007ին: Թանաշեանի ղեկավարութեամբ ծրագիրը կը շարունակէ հանրութեան ներկայացնել յայտնի քաղաքական դերեր եւ ակադեմականներ: Մոնթրէալի Ալեք Մանուկեան Վարժարանի շրջանաւարտներէն, ան նոյն վարժարանի տնօրենի պաշտօնը կը վարէ 2011ին ի վեր: Մատուցած բացառիկ ծառայություններուն համար Թանաշեան արժանացաւ Նախագահի Պարգևին, 2017ին:



Արշակունի Դարիթեանի անխոնջ ճիգերը եւ նուիրումը կանանց հզօրացման ծրագրին, Հայ Կին Յանձնախումբի միջոցով, զինք արժանացուց Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահի Պարգևին: Հիմնուած 1993ին Հարաւային Գալիֆորնիայի մէջ, Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին-ը կանանց կեանքի որակի բարելաւումին նպաստող կազմակերպութիւն մըն է՝ կրթութեան, իրաւունքներու պաշտպանութեան եւ առողջապահութեան հարցերով: Առ այսօր կազմակերպությունը յղի կանանց աջակցութեան վեց կեդրոններ հաստատած է Հայաստանի մէջ, որոնցմէ մէկը հիմնած են Դարիթեանի գաւակները՝ ի պատիւ իրենց մօր, կրելով անոր անունը:

Ժաքլին եւ Ասօ Թեւանեաններ հետեւողականօրէն իրենց առատաձեռն աջակցությունը, ժամանակը եւ ճիգերը նուիրաբերած են Սիտնիի Մասնաճիւղի եւ Ալեքսանտր Վարժարանի ծրագիրներուն եւ նախաձեռնություններուն: Անոնք ներդրումներ կատարած են նաեւ հայապահպանութեան եւ ազգային ժառանգութեան պահպանման ծրագիրներու իրագործումին ի նպաստ: 2016-ին, Թեւանեաններ արժանացան Հ.Բ.Ը.Մ.-ի Բարերար Անդամ տիտղոսին իրենց բարերարություններուն համար:



2017-ին **Արամ Եագուպեան** դարձաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Պատուոյ Անդամ՝ ի գնահատություն հայ համայնքին հանդէպ ցուցաբերած իր նուիրումին: Որպէս յանձնառու ղեկավար ան եղած է Հ.Բ.Ը.Մ.-ի Մոնթրէալի մասնաճիւղի Փոխ-ատենապետը 2007-2011 եւ Ատենապետը 2011-2013 տարեշրջաններուն: 2011էն 2017 ան ծառայած է որպէս Ալեք Մանուկեան Վարժարանի Խորհուրդի եւ Արմէն-Քէլէքի Հոգաբարձուներու Մարմնի Փոխ-ատենապետ:

89-րդ Ընդհանուր Անդամական Ժողովին (2016), Հ.Բ.Ը.Մ.-ի Երուանդ Տեմիրճեան վարժարանի շրջանաւարտ Արա Խաչատուրեան, Միութեան ղեկավարութեան եւ հանրութեան կողմէ գնահատուեցաւ Էվերէսթի գագաթը բարձրանալու ընթացքին ցուցաբերած հաստատակամութեան եւ խիզախութեան համար: Խաչատուրեանի վերելքը լեռան գագաթ, Մայիս 2016-ին, նուիրուած էր Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին: Բարձրանալով աշխարհի ամենաբարձր գագաթը, ան ծածանած էր նաեւ Հայաստանի եւ Արցախի դրոշները: Ժողովի ընթացքին Խաչատուրեան հանդիսաւորապէս բարձրացուց նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի դրօշը՝ ի նշան հաւատարմութեան եւ պատկանելիութեան: Ողջունուելով գրեթէ բոլոր մայրցամաքներու վրայ գտնուող մասնաճիւղերու կողմէ, Խաչատուրեան այցելեց Հ.Բ.Ը.Մ.-ի աշխարհատարած մասնաճիւղերը, կիսելով իր պատմութիւնը:



ԽՈՐՈՒՆԿ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ

Կ' ողջունենք իրենց պաշտօնավարութեան ժամանակաշրջանը պատուով աւարտած Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամները:



Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ (ձախէն՝ աջ) **Մայքըլ Անսուր**, **Քերոլ Ասլանեան** եւ **Ջոզէֆ Պասարալեան** մեծարուեցան Հ.Բ.Ը.Մ.-ին մատուցած իրենց ծառայութիւններուն եւ նուիրումին համար: Անոնց ղեկավարութեան տարիները Մայքըլ Անսուր (1994-2016), Քերոլ Ասլանեան (1994-2016) եւ Ջոզէֆ Պասարալեան (1997-2016) նշանակալի եղած են Միութեան համընդհանուր գործունէութեան համար:

AGBU CENTRAL OFFICE

55 East 59th Street, New York, NY 10022-1112

(212) 319-6383 | agbuny@agbu.org

www.agbu.org